

4348



ՀԵՐՔՈՒՄՆ

ՄՈՒԼԵՐ ԴՐՈՒԹԵԼՆՆ

ԵՐԶԵՎՄԵՆ ԽՈՍՏՈՎԵՆՈՒԹԵՆ

ՆԻ

ԱԳԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Չ.ՄԻՒԹՆԻԷ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒՆԻԲԵԼՄՈՍ ԽՈՒՅՓԻԹԻ

1852





2  
256

# Հ Ե Ր Ք Ո Ւ Մ Ն

## Մ Ո Ւ Լ Ե Ր Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ն

Ե Ր Չ Ե Կ Մ Ե Ն Ի Ո Ս Տ Ո Վ Ե Ն Ո Ւ Թ Ե Ն


ԵԻ

131

30970

### Ա Պ Ա Շ Ի Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

4348




### Ք Մ Ի Ի Ո Ն Ի Ը

Ի Տ Պ Ա Ր Ե Ն Ի Կ Ո Ւ Լ Ի Է Լ Մ Ո Ս Կ Ո Ւ Թ Թ Թ

1852





## Ե Ր Չ Ե Կ Ո Ւ Մ ' Ն



Ըստ փոքրիկ աշխատութեանս մէջ մեր գործն ըրած ենք քննութեան առնել ան կրօնական սովորութիւնները, որ ընդհանրապէս կը կոչուին Ըրձակում առնել, Խոստովանանք ըլլալ, Ըպաշխարանք քաշել: Վանդի Վրիստոսի հետեւողները մենք՝ ենք ըսող անձանց ահագին բազմութիւն մը աս օրուան օրս խիստ մեծ կարեւորութիւն կուտան ասոնց:

Ըսոնց առջինը՝ Յով. Ի. 23 տունին վրայ կը հիմնեն, ուր սա խօսքը կայ. « Ի՞նչ որ մէկուն մեղքը թողուք՝ թողուած ըլլայ անոնց. Ի՞նչ որ մէկունը ետ բռնէք՝ բռնուած ըլլայ»: Բայց այս խօսքը ընելով՝ միթէ մեր Տէրը առաքեալներուն իշխանութիւն տուած եղաւ, որ երթան ու տիրապէս ներումն բաշխեն անոր ասոր յականէ անուանէ՝ ճիշտ ինտոր որ ինքը կ'ընէր: Սենք շատ հաստատուն պատճառներ ունինք հաւատալու թէ ասանկ չէ:

Սասնդի՝ եթէ աս ներումն բաշխելն, ու նոյնպէս և իրենց ուղած մարդոցը մեղքերը ետ բռնելու իշխանութիւնը ստուգիւ անոնց տուաւ. ուրեմն ներողութիւն տալու իշխանութիւնը արդեամբ անոնց յանձնուած ըլլալով՝ Ըստուծոյ մնաց անատենները միայն ներելու ու ետ բռնելու իշխանութիւն գործածել, երբոր անոնք իրենցը բանեցրնել չեն ուզեր: Բայց Վրիստոսի միտքը աս իշխանութիւնը առաքելոց ու անոնց յաջորդներուն ձեռքը տալ, և ասանկ իր ձեռուրները կապել չէր:

1874

1874



Ըստ յայտնի է . նախ սա բանէն՝ որ Սուրբ Գիրքը մեղաց թողութեան համար Ըստուծոյ նայելու՝ ու մեր աղօթքները անոր և միայն անոր մատուցանելու կը խրատէ մեզ , որպէս թէ ցուցնելով որ՝ Ընդհանրապէս իրեն պահած է թողութիւն տալու բովանդակ իշխանութիւնը : Տէրն մեր ինքը մեզի կը պատուիրէ որ , աղօթք ընելու ատեննիս՝ մտնենք մեր սենեակը ու մեր ՚ի ծածուկ եղող Հօրը աղօթենք և թողութիւնը անկէ խնդրենք : ( Գործ . Կ : ) Անշուք կը յորդորէ որ միշտ աղօթենք անոր , և թախանձանք ալ բանեցրնենք խնդրուածքներնուս մէջ : Սասնաւորապէս դիտելու բան մըն է որ՝ առաքեալներուն մեղաց թողութեան իշխանութիւն տալու համար զրուցեց ըսուած՝ վերոյիշեալ խօսքը ըլլալէն ետքը , տակաւին Սուրբ Գիրքը առաջքի պէս Ըստուծոյ կը խրկէ զմարդիկ՝ անկէ մեղաց թողութիւն առնելու . առաքեալները իրենք ալ տակաւին կը յորդորեն՝ որ մարդիկ մեղաց թողութեան համար Ըստուծոյ տնկեն աչքերնին : Յիսուս Քրիստոս միջնորդ բռնելով : Ըստ յորդորանքները կը ցուցնէն որ մեղաց թողութիւն գտնելու եղանակն ու պայմանները առաջ ինչ որ էին նոյնը մնալով՝ Յովհ . Ի . 23 տունին մէջի խօսքերէն փոփոխութիւն մը առած չեղան . Ինչպէս որ Քրիստոս և մարգարէները կը սորվեցրնէին՝ որ մեղաւորները հաւատքով , աշաշանքով , ապաշխարութիւնով ու խոստովանութիւնով շիտակ Ըստուծոյ նայելու են , ան նոյն կերպը յառաջ կը բշեն առաքեալներն ալ : Օրոր օրինակ , ասոնցմէ մէկը կ'ըսէ . « Գուն ատ քու չարութենէդ զեղջի եկուր ու Տէրօջը աղաչէ . գուցէ ներուի քեզի քու սրտիդ չար խորհուրդները » : ( Գործ . Ը . 22 : ) Սուրբ Գիրքը ո՛չ թէ միայն զեռնոյնպէս Ըստուծոյ նայելու կը խրատէ մեզ մեղաց թողութեան համար ,



բայց աս ալ գիտնանք որ՝ աս թողութիւնը առաքեալներէն կամ անոր յաջորդներէն ստացուելուն ցոյց մըն ալ չտար : Եւ թէ որ ճշմարտապէս անոնց ներելու իշխանութիւն տրուած է, Ըստուծոյ Վիւրբը անիկայ չյիշելով՝ զարմանալի զանցառութիւն մը ըրած կ'ըլլայ . ո՛ւր թողունք որ ընդհակառակն ամէն տեղ կը պատուիրէ մեզի՝ որ մարդոցմէ չվախնանք, և ո՛չ զանոնք հաճեցընել նայինք :

Նա ևս Սուրբ Վիւրբը մեզի Ըստուծմէ և մինակ Ըստուծմէ թողութիւն փնտռել սորվեցընելէն ետև՝ միանգամայն աներկեան երաշխաւորութիւններ ալ կու տայ, որ եթէ պատշաճ ոգւով մը փնտռենք՝ զանիկայ ձեռք կը բերենք : Սիւթէ Ըստուած՝ տալու կարող չեղած բանին համար կը հրամայէ՞ որ իրմէն խնդրենք . ո՛չ երբեք . որովհետև ատանկ հրաման մը տալը՝ մեզ ծաղը ընել է : Վրիստոս մեզի կ'ըսէ . “ Խնդրեցէք ու պիտի առնենք, փընտռեցէք ու պիտի գտնէք, չալեցէք ու պիտի բացուի ձեզի ” : “ Ըն որ ինծի կու գայ՝ դուրս չեմ հաներ ” : ( Էփ. 37 : ) Եւ առաքեալներն ալ, որոնց համար կը զըուցեն՝ որ թողութիւն տալու իշխանութիւնը անոնց յանձնուեցաւ, այսպէս կը խօսին . “ Ուստի ալ համարձակութիւնով մօտենանք անոր շնորհացը աթոռին առջևը . որ ողորմութիւն ընդունինք ու շնորհք գտնենք պէտք եղած ատենը օգնելու ” : ( Լէր. 7. 16 : ) “ Հապա թէ որ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անիկայ մեր մեղքերուն թողութիւն տալու, և մեզ բոլոր անիրաւութենէն սրբելու : ” ( ւն Էփ. ւն. 9 : )

Եւ դիտելու է՝ որ ապաշխարութիւնով խընդրողին ուղղուած սոյնօրինակ խոստմունքները, որոնցմով ճոխացեալ է Ըստուածային Բանը, բացարձակ կերպով մը եղած են . Ըստուած փնտռելու

և անոր ողորմութեանը յուսալու որչափ հրաւերոր  
 եղած են, անոնցմէ մէկուն մէջ բառ մը չգտնուիր՝  
 մեզի խոստացեալ թողութեանը մէջ ուրիշի մը  
 խառնուիլը հասկըցընող. միշտ կը տեսնենք որ մեր  
 ուզելն ու անոր տալը՝ մեր և անոր մէջտեղը միայն  
 ըլլալու գործողութիւն մըն է: Այո՛, թէ՛ խոստ-  
 մանց և թէ՛ հրաւիրանաց խօսքերէն մէկը չցուցը-  
 ներ որ՝ եթէ քահանան արձակած է նէ կամ ետ  
 բռնած չէ նէ, Աստուած մեր մեղքերուն թողու-  
 թիւն պիտի տայ: Այլ ընդհակառակն՝ կ'ըսուի.  
 «Թէ որ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները,  
 ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ: Հապա  
 թէ որ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները,  
 ձեր Հայրն ալ ձեզի չներեր ձեր յանցանքները»:  
 (Սաղմ. 14, 15:) Աս բոլորը կ'իմացընեն որ  
 Աստուած ուզած մարդոցը թողութիւն տալու բա-  
 ցարձակ իշխանութիւնը իրեն սեպհականած է, և  
 կը սորվեցընեն թէ՛ իր թողութիւն տալը կամ չտա-  
 լը մեր ինչ ոգուով խնդրելէն կը կախուի, ու անոր  
 առջևը մեր ունեցած սրտի վիճակէն, ո՛չ թէ ու-  
 րիշի մը վկայականէն կամ հաստատագիրէն, ու ո՛չ  
 ալ ուրիշի մը խօսքէն, կամքէն կամ մէկ գործէն:  
 Առաքեալներուն ինչ իշխանութիւն տրուած որ ըլ-  
 լայ՝ թո՛ղ ըլլայ, աս բանը անվիճելի է՝ որ այսու ամե-  
 նայնիւ գերագոյն իշխանութիւնը Աստուծոյ իր ձեռքն  
 է և իր ձեռքը կը պահէ: Անիկայ որո՛ւ որ ուզէ՝  
 թողութիւն կուտայ. ո՛չ երկրիս վրայ և ո՛չ երկնից  
 մէջ մէկէ մը չկրնար արգիլուիլ կամ խափանուիլ  
 աս բանն ընելէն. և ո՛վ որ ուզէ՝ կրնայ մեղքերուն  
 թողութիւնը անմիջապէս անկէ առնել. մէկը երբ  
 ասանկ կ'ընէ, այսինքն իր մեղացը թողութիւնը  
 ուղղակի անկէ կ'առնէ, ոչ որ՝ ո՛չ երկնից մէջ, ո՛չ  
 երկրիս վրայ, ո՛չ ալ դժոխքին մէջ կարող է անոր  
 մեղքերը ետ բռնել: Այլ հիմայ աս ինչպէս համա-

ձայն բերելու է՝ ներերը իշխանութիւնը կարգ մը մարդոց տրուած է ըսածներնուն :

Գարձեալ . մեղաց թողութիւնը Լստուծմէ խընդրելու ու անմիջապէս անկէ յուսալու պատուէր ու նենալնէս զատ , սա ալ կայ՝ որ անիկայ տրուելու ժամանակին ու պայմաններուն վրայով Սուրբ Գիրքէն սորվածնիս կը ներհակի՝ թէ՛ առաքելոց և անոնց յաջորդներուն աս իշխանութիւնը ունենալնուն , և թէ՛ ապաշխարող մեղաւորին ու ներող Լստուծոյ մէջտեղը անոնց միջնորդ մտնելնուն : Չենք գիտեր ո՛ւսկից տեղ պիտի գտնեն ներս սպրդելու՝ աս կարծեցեալ իշխանութիւնը բանեցընել ուզողները : Ասան զի ներումն գտնելու անժխտելի պայմանները հաւատքն ու ապաշխարութիւնն են . ասոր՝ ամէնքը պէտք է միաբանին : Լս է Վրիստոսի և իր առաքեալներուն քարոզութեան բովանդակութիւնը : Գանք որ հաւատքը սրտին մէջը իր գոյութիւնը կ'առնէ , և սրտին դէպ 'ի Լստուած ունեցած վիճակը կը ցուցընէ : ( Հռոմ . Գ . 10 : Սող . ծա . 19 : Ք Լյորն . Է . 10 : Գործ . Ի . 21 : ) Լնիկայ՝ մեր սրտին դէպ 'ի իրեն աս վիճակը առնելը տեսածին պէս , իսկոյն ալ մեզ թշնամի սեպելով չնայիր վրանիս . աս վայրկեանէն ետե ալ մենք հաշտուած ենք , և մեղքերնիս աւրուած : Թէ որ աս ասանկ չէ , ուրեմն սա խօսքը՝ որն որ Վրիստոս կ'ըսէ , ճշմարիտ չէ . “ Լն որ ինձի կը հաւատայ՝ յաւիտենական կեանք կ'ունենայ ” : ( Յովն . Գ . 47 : ) “ Թէ որ անանկ է՝ դատապարտութիւն չկայ Վրիստոս Յիսուսով եղողներուն ” : ( Հռոմ . Ը . 1 : ) Ընչուչտ Լստուած չսպասեր ու նայիր՝ որ քահանան իր արձակումն առնելով գայ և մտնէ դարձի եկող անառակին ու իր մէջտեղը : Սեր կողմանէ հաւատքը եղածին պէս՝ իսկոյն ետեւէն կու գայ Ընոր կողմանէ ալ արդարացընելը . ա-

սանկ՝ քահանան դեռ իր գործողութիւնը չսկսած քանը կը ըմնայ : Եւ ներումը անգամ մը Աստուծմէ առնուելէն ետեւ՝ ալ քահանային հաւանութեան վճռոյն կարօտութիւն չունենար վաւերական ըլլալու համար : Իսկ թէ որ մեր կողմանէ հաւատք չեղած՝ քահանան արձակէ ալ, Աստուած չկրնար հաստատել անոր գործողութիւնը . քանզի անկարելի է առանց հաւատքի զԱստուած հաճեցընելը : (Եբր. ԺԿ, 6 : ) Ուստի քահանայից արձակմանը տեղ չի նեչու համար, պէտք է կարծենք որ կրնայ ըլլալ թէ՛ մարդ մը ճշմարիտ հաւատք ու ապաշխարութիւն ունենայ, և տակաւին Աստուծմէ թողութիւն չառած մնայ :

Վարձեալ . թէ որ աշխարհիս վրայ՝ ուղածնուն պէս մեղքերէ արձակելու կամ անոնք ետ բռնելու իշխանութիւն ունեցող տեսակ մը մարդիկ ըլլալը ստոյգ է, ուրեմն Աստուած զսպուած է մեր աղօթքները լսելէն : Ընանկ է նէ ինչո՞ւ պատուէր կուտայ՝ ըսելով « Ի՛նչ մը մի՛ հոգաք . հապա ամէն աղօթքով ու խնդրուածքով, գոհութիւնով՝ ձեր խնդրուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ » . (Փիլեմո. Գ, 6 . ) Խնդրածներնիս մեզի շնորհելու համար չէ՞ մի : Եւ ապաշխարութեամբ մատուցուած խրնդրուածքները՝ զանիկայ ողորմութեան և ներողութեան յօժարեցընելու զօրութիւն ունի՞ն : Ընչուչտ ունին, աս՝ մէկը չկրնար ուրանալ : Ուրեմն ի՞նչ ըսենք . գթառասն Աստուած կ'ուզէ ողորմութիւն ցուցընել մեզի, 'ի վերայ այսր ամենայնի ստիպուած է իր բարերար գործը սանձահարելու, ու ներողութիւնը ետ բռնելու, որովհետեւ քահանային կ'իյնայ աս բանն ընելու ելլել . ասա՞նկ ըսենք : Իսոյց մեզի արձակում տալու համար քահանային միտքը համոզելու ի՞նչ զօրութիւն ունին մեր աղօթքներն ու արտմոլութիւնները, վասն զի ասոնք դէպ'ի

քահանային եղած բաներ չեն . և հնար չէ անոր՝ ճշտիւ մեր սրտերուն ինչպէս ըլլալը գիտնալ : Ուստի ասկէ կ'ելլէ որ մեր աղօթքները թէպէտ և կը շարժեն մեր Արարչին գուժը , բայց մեղքերնուս թողութիւն ստանալու կողմանէ ամենեւին իրական օգուտ մը չեն ընելու : Այլ աս մեզի սա կարծիքը կը բերէ որ՝ Արարիչը 'ի կախ ըսուած ցաւալի վիճակին մէջ մնալով՝ քահանային գործողութեանը կը սպասէ : Ա՛ երջը՝ թէ որ երբեմն չուզէ քահանան արձակում շնորհել , մեր Ատեղծողը ո՛չ թէ միայն երկար պիտի սպասէ , այլ ձախորդութեամբ երբեմն ալ 'ի զուր սպասած պիտի ըլլայ . ու ասանկ՝ պիտի ստիպուի թողուլ՝ որ ներումն ստանալու պայմանները ճշմարտութեամբ ու հաւատարմութեամբ կատարող հոգիներ ալ իր գորովալից աչքին առջևը կորնչին , որովք՝ եթէ քահանայէն չարդիւուէին՝ ուրախութեամբ երկինքը պիտի ընդունէր :

Յայտնապէս կը տեսնենք որ Աստուծոյ աղօթքը ընելէն թուլցընելու մեծ զօրութիւն ունի ասանկ վարդապետութիւն մը : Ա՛ ասն զի՝ քահանան արձակում կու տայ և մարդոց հոգիները անոր ինքնօրէն ու անսահման զսպողութեանը տակն են հաւատցող մարդը՝ բնականապէս յաւէտ քահանային կը նայի թողութեան համար , քան թէ Աստուծոյ . և ասանկ՝ իրօք Աստուծմէ վեր կը դնէ քահանան , թէպէտ և Աստուածաշունչն իրենց աչաց առջև ունեցող այսքան մարդիկ՝ անոր մէջ ո՛չ աս մեծ շնորհքը քահանայէն ստանալու միջոցներու համար խօսք մը անգամ տեսած , ու ո՛չ ալ քահանայէն ասանկ շնորհք մը խնդրելու վերաբերեալ բառ մը գտած են :

Վարձեալ . Աստուծոյ արդարութեանը չվայելեր մարդոց ձեռքը ձգել ասանկ իշխանութիւն մը . վասն զի ասանկ բան մը ընելը անոր կառավարութեանը մէջ այնչափ անկարգութիւն ու խառնա-

կութիւն խոթուելու պատճառ մը կ'ըլլայ, որ եթէ մենք անոր արդար ըլլալը կը հաւատանք, ստիպուած ենք հաւատալու ևս՝ թէ ան ասանկ իշխանութիւն մը ամենեւին չյանձնեմք մարդոց ո՛ր և իցէ կարգին :

Թէ որ աս իշխանութիւնը ունեցողները կատարելապէս սուրբ ըլլան, ու ունեցած ըլլան ան միտքը՝ որ Քրիստոսի մէջն էր, որպէս զի ամէն պարագաներու մէջ Քրիստոսի յար և նման գործելուն աղէկ վստահութիւն ունենանք, և եթէ՛ դատողութիւններնուն մէջ անվրէպ առաջնորդուելու համար՝ պահանջուած ճանաչումն ու գիտութիւնը ունենան մարդոց բնաւորութեանը վրայօք, ան առեւտր անոնց ասանկ իշխանութիւն մը գործածելուն այնչափ ընդդիմութիւն չպիտի ելլէ. որովհետե՛ւ եթէ բանը ասանկ ըլլայ, անոնց կապած կամ արձակածները ճիշտ նոյն իսկ ան մարդիկը կ'ըլլան, որ Մատուած ինքն ալ կապած կամ արձակած է: Բայց մենք գիտենք որ մինչև անգամ առաքեալները՝ ոչչափ որ բարի էին ալ, կատարելապէս սուրբ չէին: (Փիլեպ. գ. 12:) Ընոնց յաջորդ սեպուածները, ասոնցմէ ոմանք գէթ բարի ալ չեն կրնար ըսուիլ. քանի քանիներ խիստ գէշ վկայուած են՝ մինչև անգամ ասանկ անձանցմէ, որ իրենց առջևը կը վախնան ու կը դողան, և օրհնածնին օրհնած՝ ու անիծածնին անիծած ըլլալուն ալ՝ բոլորով սրտիւ կը հաւատան: Ըսանկները միանգամայն սա հաւատքն ունին թէ՛ կրնայ ըլլալ որ աս հոգևոր իշխանութիւնը ունեցող մէկը ինքը կորստեն որդի մը եղած ըլլայ, և ան աստիճան չար՝ որ դժոխքին ամենասաստիկ տաքութեան տեղը անոր համար պատրաստուած ըլլայ. նա և կ'ըսեն որ՝ եթէ տասուերկու ընտրուածներուն մէջ զև մը, կորստեան որդի մը կար, անոնց յաջորդներուն մէջ ինչո՞ւ չպիտի գանուի: Բայց մէկուն

Համար չար մարդ է ըսելը՝ անիկայ անանկ սիրտ մը ունի՝ ըսել է, որ շիտակութիւն չընէր, և թէ աւնոր գործը չարութիւն ընել է՝ ըսել է :

Թէ որ աս ասանկ է, ինչ երաշխաւորութիւն կրնանք ունենալ որ իր պաշտօնին մէջ անարդարութիւն չպիտի ընէ՝ ետ բռնելու մեղքերը ներելով ու ներելունքը ետ բռնելով : Քահանայական արձակում փնտռողներն ալ կ'ընդունին՝ որ ասանկ մէկու մը անարդարութիւն ընելը կարելի բան է, բայց նոյն ատենը կը հաւատան որ փրկութիւննին ան չար յաջորդին ընելիքէն կախուած է . զարմանք : Եւսոր համար է՝ որ ոմանք առաւել կը վախնան մէկ ապիրատ քահանայ մը սրբողջընելէն՝ քան թէ Եւստուծոյ դէմ մեղանչելէն . որպէս զի չըլլայ թէ անիկայ թշնամի ըլլալով՝ զիրենք կապէ, ու վրէժխնդրութեան համար մշտնջենաւոր կորուստի մատնէ : Ինչ, չար մարդ մը ուզածը դժոխքը խրկելու իշխանութիւն կ'ունենայ, և Եւստուած կապուած կ'ըլլայ անոր ըրածին իր կնիքն ու հաստատութիւնը տալու : Թէ որ ասանկ հաւատք մը ունենանք, մեծապէս կ'անարգենք զԵւստուած, ու ալ վստահութիւնը կը վերցընենք անոր արդարութեանը վրայէն :

Բայց՝ ուրիշ բան ալ կայ : Եւս ներողութեան մատակարարները պէտք է որ խիստ բազմաթիւ ու երկրագնտիս վրայ ամենայն ուրէք ցրուած ըլլան : Պէտք է երկինքին տակը եղած բոլոր ազգաց մէջ գտնուին, ու ամէն լեզու խօսին . որպէս զի կարելի ըլլայ բոլոր մարդոց՝ դիւրաւ և ուզած ատեննին անոնց քովն երթալ : Եւսոնց ներկայութիւնը ո՛չ միայն բազմութեամբ խոնկալ քաղաքները՝ այլ և մեծ ու փոքր գիւղերն ալ պէտք է լեցընէ . ո՛ր որ կենդանի մարդ կրնայ գտնուիլ՝ գիւղ եզեր, լեռ եզեր, դաշտ եզեր, կամ ծովուն կղզիներն են եզեր, ա-

մէն տեղ պէտք է անոնց ներկայութիւնը տարածուի : Իսկ եթէ ասանկ որ ըլլայ, անոնք պինչափ շատուոր բազմութիւն մը, այնքան ընդարձակ ցրուած ու անանկ տարրեր տարրեր պարագաներու ներքե ըլլալով՝ զրեթէ անկարելի պիտի ըլլայ գործողութեան միօրինակ կարգ մը կամ զբութիւն մը պահել մէջերնին : Այս կրնայ ըլլալ որ դարեր անցնելով՝ ուրիշ կանոններ ու ան կանոններուն ուրիշ կերպ գործողութիւնները ելլեն, և երթալով աշխարհիս զանազան կողմերը հաստատութիւն գտնեն, ինչպէս որ իրօք ասանկ բաներ եղած են և կ'ըլլան այս իշխանութիւնը ունենալ ձեւացողներուն մէջ : ( ) րինակի համար, Հսոյմէական Վաթնութիւններուն մէջ՝ տակնով քահանաներուն թոյլ կը տրուէր ամուսնանալու, բայց անցեալ մտա դարերուն մէջ անանկ եղաւ՝ որ քահանայի մը ամուսնանալը մէկ պիղծ ու գատապարտելի մեղք մը սեպեցին ու գատապարտեցին, և քահանաներ անեծքի տակ կապեցին ամուսնական վիճակի մէջ մանկնուն պատճառաւ : Սակայն ասոր ներհակ՝ մինչև անգամ՝ սոսիս օրերը տեղ տեղ թոյլտուութիւն կ'ընեն քահանայից ամուսնութեանը : Վանտապէս պահքը կը տեսնենք թէ՛ աստե՛ն կ'ըլլայ որ մէկ քաղքի մը մէջ մարդ մը պոսինչ օրը թէ՛ որ միս ուտե՛, քահանան կը բանադրէ անիկայ, բայց ուրիշ աստե՛ն և ուրիշ տեղ նոյն օրը միս չուտելու պատուէր անգամ չկայ :

Վասե ըսենք թէ յիշեալ ներողութիւն բաշխողներուն սնրաւ բազմութիւնը ամենը մի և նոյն սահմանեալ կանոնները բռնեն, և թէ ասանկ ալ ըլլայ, անոնց գործողութեանը մէջ զանազանութիւն կը մտնէ : Վիցուք թէ անոնք ամենը բարի անձիկնք եղած ըլլան, տակաւին ամենազեղա և անտխալ շղթալնուն համար՝ շատ անգամ պիտի պատահի որ մի



և նոյն մարդուն վրայ մեկեքնին մեկ գաղափար մը պիտի ունենայ և միւսնին ուրիշ և առջինին աննման գաղափար մը : Ինչպէս որ Պօղոս և Նաոնարաս Յովհաննէսին վրայ ունէին : (Վարժ . ԺԵ . 37 .)

Աչ սասնկով , անշուշտ սասնց մեջէն ոմանցմէ՝ միւսներէն աւելի զիրութեամբ արձակում առնուելուն համար , մարդու մը արձակում ստանալը կամ շտանալը իր գացած քահանայէն կախեալ բան մը պիտի բլայ : Ըստ ըսածս իրօք կ'ըլլայ ալ՝ Ըստուծոյ անունովը ներողութիւն կը մտաակարարենք զբուցողներուն ժողովրդոցը մեջ : Ոմանք կընային որ եթէ մեզքերնին մեկ քահանան շարձակեր , միւսին կ'երթան և անկէ արձակութիւն կ'առնեն զիրու : անանկ որ եթէ հաւատանք՝ թէ Ըստուած սո մտաակարարութիւնը մարդոց տուած , ու ինքզինքը պարտքի տակ զրած է անոնց բրածը հաստատելու : պէտք է նաև սո ալ հաւատանք՝ որ անիկոյ փոփոխական և ինք իրեն գեմ հակառակող Ըստուած մին է : Այս մանտուանդ երբ միտքերնիս կը բերենք թէ ոմանք այնչափ կակուղ ու թուլիկ կ'ըլլան՝ որ ո՛վ որ առջինին երթայ , շուտով արձակում կուտան՝ առանց ազաշխարած բլաշուն մեկ քաջ ապացոյց մը փնտսելու : ու կրնայ բլայ որ՝ ոմանք ալ այնչափ շար բլան որ զողերուն յանցանացը կցորդ , համեստ կանանց առաքինութիւնը եղծանող , ու զիրաստանալի թողութեան մը խոստմունքը ժողովրդոց առջին գնելով՝ զանոնք ամեն տեսակ անզգամութեան զրգողներ ևս բլան , եթէ սանք մտածենք կ'ըսեմ , ո՛հ ինտո՛ր կրնանք հաւատալ որ անոնց բրածները կ'ընդունի և կը հաստատե ամենասուրբն Ըստուած , մինչև որ զանիկոյ իջեցրնելով հեթանոսներուն շտատուածոցը կարգը չգնենք :

Մեր Տերօջը միտքը առաքելոց ու անոնց յորդաներուն սասնկ իշխանութիւն մը տալ չլլայր

մէյ մ'ալ սա մտածութիւնով կը հաստատուի որ Սուրբ Գրոց մէջ վերջին դատաստանին վրայօք եղած խօսքերը կարգալով՝ զրուցուածքին կերպերէն միշտ կը հասկըցուի թէ ան օրը Մատուած ամենեւին բանի տեղ չպիտի սեպէ ան վճիռներուն մէկ հատն ալ, որ մարդիկ աս աշխարհիս մէջ իր անունովը կու տան, այլ ամէն մէկուն արժանաւորութիւնը ինքը ինտո՛ր որ կը բռնէ՝ անանկ պիտի դատէ զանոնք : ( Թ . Կորնթ . 7 . 4 , 5 : ) Թէ որ քահանային տուած արձակումը իրօք վաւերական ըլլար, արձակման վկայարան մը՝ պէտք էր որ երկինքը երթալու հաստատուն ու անխախտ անձագիր ըլլար . սակայն մենք աղէկ գիտենք որ անով մէկը չպիտի կարող ըլլայ ազատիլ ան օրը ըլլալու ան հրեղէն փորձին հանդիսէն : « Քանզի ամենքս ալ Քրիստոսի ատեանին առջևը կանգնելու ենք », ու ան ատենը անիկայ մեզի չպիտի ըսէ թէ երկրին վրայ իմ անունովս ներողութիւն բաժնողներուն մէկէն մեղքերնուդ թողութիւնը առա՞ծ էք մի, հապա՛ պիտի նայի թէ արդեօք մեր բարքը մէկ գործնական ապացոյց մը եղա՞ծ է մի իր անկեղծ բարեկամներն ըլլալնու :

Եւ համարինք թէ աս իշխանութիւնը ծուռ գործածելու վտանգ մը չկայ . 'ի վերայ այսր ամենայնի հարցընենք թէ՛ ի՞նչ օգուտ կ'ելլէ անիկայ մարդոց ձեռքը ձգելէն : Մտուածմէ թողութիւն գտնելու համար՝ ապաշխարութիւն ու հաւատք պէտք ըլլալը գիտենք . ( Գործ . ք . 38 : ԺԳ . 31 . ) ուրեմն Քրիստոս մեղքերը թողելու իշխանութիւնը պարբերօց տուած ժամանակը միտքը ի՞նչ էր, ըսել ուզեց՞ որ անոնք աս պահանջմունքները մէկդի ձգելով՝ նոյն ինքն Մտուածոյ ըրածէն աւելի դիւրին պայմաններերով կրնան ներողութիւն տալ : Եթէ մէկը պատասխանէ թէ Մո՞ր կրնային, ասով կը հաս-

տատէ որ Եստուած ինքն իրեն դէմ կը հակառակի :  
 Եթէ ըսէ Ո՛չ՝ չէին կրնար , ուրեմն անոնք ո՛չ  
 Եստուծոյ շնորհած մարդոցը կրնային թողութիւն  
 բաժնել՝ ո՛չ ալ Եստուծոյ տուածէն աւելի դիւրա-  
 գոյն եղանակաւ մը կրնային ներողութիւն տալ ,  
 մանաւանդ իրենցը անորինէն ուշ պիտի մնար .  
 որովհետեւ Եստուծոյ թողութիւնը յիշեալ պայման-  
 ները՝ այսինքն ապաշխարութիւնն ու հաւատաբը կա-  
 տարուելուն պէս իսկոյն կը տրուի : Եյսպէս՝ եթէ  
 մարդոց տուած թողութենէն օգուտ չկայ , վախնա-  
 լու պատճառ չե՞նք ունենար որ անկէ չարիք ելլէ :  
 Ի՛նչպէս անպէս մարդիկ չը պիտի մտմտան թէ իրենց  
 ընկերներէն աւելի դիւրին կրնան թողութիւն ձեռք  
 ձգել՝ քան թէ արդար և անփոփոխելի Եստուծմէ :  
 Չար ու նենգամիտ մարդիկ չը պիտի հակամիտին  
 մտքերնուն մէջ ըսել թէ՛ Ե՛հ խաբէական ու խար-  
 դախ ձեւերով քահանային ալ կրնանք վարպետու-  
 թիւն բանեցընել , որպէս զի անկէ թողութիւն առ-  
 նեն առանց ապաշխարութեան : Ենոնք եթէ հա-  
 լատան որ՝ սրտագէտ Եստուծոյ պիտի տան իրենց  
 ըրածներուն հաշիւը , այնչափ չեն համարձակիր  
 մեղանշել . իսկ եթէ անանկ հասկըցած ըլլան՝ որ ի-  
 րենց պէս մարդոց հաշիւ տալով բաներնին կը լմնայ ,  
 ան ատենը չը պիտի յօժարին աւելի ազատաբար ի-  
 րենց չարութիւնները կատարելու :

Ոմանք գուցէ այսպէս պիտի մեկնեն . պիտի ըսեն  
 թէ 3<sup>րդ</sup> . Ի . 23 տունին մէջի աս խօսքերէն մենք  
 չենք առներ՝ որ Վրիստոս առաքելոց և անոնց յա-  
 ջորդներուն իշխանութիւն տուաւ ինք իր գլխունուն  
 թողութիւն տալու . հապա անոնք սահմանեց՝ որ ի-  
 րենց Տէրոջը ու եղբայրներնուն մէջտեղը միջնորդ-  
 ներ կամ թարգմաններու պէս կենան , և պաշ-  
 տօննին ըլլայ մարդոց յայտ առնել՝ թէ մեղքերնին  
 ներուած է կամ չէ . որունն որ ներուած է , Եե-

բուած է ըսել, ու որո՞ւնն որ ներուած չէ, ներուած չէ ըսել: Ա՛ղէկ, թող ատանկ հաւտացած ըլլան. Սակայն աս մեկնութիւնը ուրիշ անյաղթելի դժուարութիւն մը կը հանէ. քանզի եթէ ասոր նայինք, անոնք ստոյգը գիտցած կ'ըլլան թէ որո՞ւն մեղքերը ներուած են ու որո՞ւնը չեն: Բայց աս գիտութիւնը ո՞ւնկից կ'առնեն: Կամ անմիջապէս Աստուծմէ առած ըլլալու են, կամ չէ նէ՝ իրենք իրենցմէ ամէն մէկ մարդու բարքը, վարքը, գաղտնի խորհուրդները, և մինչև անգամ անոր սրտին Աստուծոյ առջևն ինչպէս ըլլալը լաւ մը ճանչցած ըլլալու են. որպէս զի գիտնան թէ արդեօք անիկայ Աստուծմէ թողութիւն առած սեպուելո՞ւ է կամ չէ: Արովհետև Աստուած յատկապէս սրտի՛ն ինչպէս ըլլալը կը նայի, անիկայ՝ թէ որ հոն մեղաց համար ճշմարիտ ապաշխարութիւն և դէպ ՚ի Հիսուս Քրիստոս հաւատք գտնէ, ձրիապէս կը ներէ մեր Տէրօջը Քրիստոսի համար. չէ՞ թէ որ սրտին մէջ աս բաները չգտնուին, ամենեին հնար չէ անկէ թողութիւն առնել: (Հոով. 7. 9, 10: Գործ. ք. 37: Իմ. 7: 7: ) Սակայն տե՛ս որ՝ ցոյց գիտութիւնը մարդու մը տրուած չէ. մինչև անգամ՝ Արկնից թագաւորութեան բանալիքը մեր ձեռքըն է ըսողներն ալ չեն կրնար և չեն ալ ըսեր որ իրենց տրուած է. անոնք մարդուս վրայով հասարակ մարդոց գիտցածէն աւելի բան չեն գիտեր. եթէ խոստովանցընելով սորվին ալ, ճիշտ ուրիշներուն պէս խաբուելու են թակայ են: Վանզի թէ որ մէկը՝ մինչև անգամ արձակուամ առնելու մտօք խոստովանանքի նստած ատենը, գործած մեղքերուն ամենէն շատը մէկդի ձգելով զանոնք գիտմամբ չյիշէ, խոստովանահայրը կարողութիւն չունի անոր աս նենգութիւնը տեսնելու. և շիտակը նայինք նէ՝ խոստովանահայրերը ամէն օր կը խա-

քուին աս կերպով . շատերը կ'երթան , կը չոքին առջևնին , սուտը կը զրուցեն ու կ'ելեն կ'երթան քաներնին՝ թեթեցուցած սիրտով մը ու պինդ մը հաւատալով . որ ալ մեղքերնին ներուեցաւ , թէպէտ և միաքերնուն չէ ելած՝ որ ան կարծած ներումնին նենգութիւնով ձեռք անցուցին : Արդ եթէ անոնք մարդոց սրտին չըսեմ՝ այլ մինչև անգամ արտաքին գործոցը մէջ ասանկ խաբուելու ու այսչափ տգէտ մեալու ենթակայ են , ինչպէս հնարաւոր կրնայ ըլլալ անոնց՝ որ և իցէ մէկու մը վրայ դատում ընելու , թէ արդեօք անիկայ Աստուծէ ընդունուած է կամ չէ : Սիրտերը քննելը՝ Աստուծոյ և միայն Աստուծոյ իր աստուածային իրաւունքն է : ( Կ թ . 39 : ) Վրիստոս կ'ըսէ՝ « Քոլոր եկեղեցիները պիտի ճանչնան թէ ես ան եմ՝ որ երկամունքներն ու սիրտերը կը քննեմ » : ( Հայր . 23 : ) Առաքեալները մարդոց սրտին գաղտնիքը գիտցողներու տեղ չորին ինքզինքնին , մինչև ամենէն մերձաւոր բարեկամներնուն սիրտերը գիտցող չէին ձեանար . քանզի Աստուած մարդոց սիրտերը գիտցող ըլլալուն վրայօք խօսած ատեննին՝ անանկ կերպով մը կը խօսին , որ կը հասկըցուի թէ անոնք ո՛չ ոնէին աս աստուածային գիտութիւնը և ո՛չ ոնենալ կը ձեացընէին ինքզինքնին : ( Տե՛ս Գործ . 24 : Ժե . 18 : Կորնթ . 7 . 5 : ) Իրաւ Պետրոս կըրցաւ գիտնալ Անանիային ու Սափիրային ըրած կեղծաւորութիւնը , սակայն ասիկայ միայն ան հեղուն եղած ըլլալու է , որովհետև առաքելոց օրերը կեղծաւորութեամբ եկեղեցւոյ մէջ սպրդող մտնող անարժան անձինքը միայն աս երկուքը չէին . մենք դժբաղդութեամբ հաւատալու տեղ ունինք՝ որ ասոնց նման շատերը եկեղեցւոյ անգամ ու քրիստոնեայ կը սեպուէին , որոնց իրօք ինչպէս մարդիկ ըլլալնին առաքեալները ո՛չ ի-

րենք աղէկ ճանչցան՝ ո՛չ ալ հետեւապէս ուրիշներուն առջևը երևան հանեցին: Անոնք՝ դարձի եկող սեպուածներէն շատերուն վրայ իրենց տարակոյսն ու վիշտը համարձակ կը յայտնէին շատ անգամ. բայց վերջին և արդար վճռոյ մը համար ամէն բան Վրիստոսի ատեանին կը ձգէին, ուր ամենայն ինչ թէ՛ արտաքին թէ ներքին ՚ի լոյս պիտի բերուին իրենց ճիշտ գոյներովը. ( Լուսն . ԺՊ . 9—13 : Գաղ . Պ . 11 , 20 : Էփ . Կորն . ԺՊ . 5 : Վիլի . Էփ . 12 , 16 . ) ուստի աշխարհիս երեսը ալ ո՞վ կրնայ զրուցել թէ՛ Լս անոնցմէ աղէկ գիտեմ կամ կը ճանչնամ մարդոց սիրտը : Լս անոնց զրուցուածքին կերպէն՝ որն որ վերը ըսինք, կը հասկըցուի՝ թէ յատուկ յայտնութիւն առած չէին գիտնալու թէ մարդոցմէ որոնք ինչպէս կ'երևնան Աստուծոյ աչացը առջև. միայն թէ մէկ քանի մասնաւոր անձանց վրայով Աստուած աս բանը գիտցուց անոնց: Ասանկ ըլլալէն ետեւ, Առաքելոց յաջորդներն ենք ըսողները ի՞նչ համարձակութիւնով մարդուն կ'ըսեն՝ Վու մեղքերդ ներուած է, քանի որ չեն գիտեր՝ գուցէ անոր սիրտը Աստուծոյ դէմ թշնամութիւնով լեցուն ըլլայ : Այսն որոյ աս բանին վրայ մէկու մը տալու հաստատութիւննին եւ թէով կրնայ ըլլալ, ասկէ անդին չեն կրնար անցնիլ, և թէ որ անցնին ալ, ապահով բան չէ: Անոնք աս կրնան ըսել. թէ որ դուն մեղքերուդ վրայ Աստուծոյ ուղածին պէս տրտմութիւն մը փորձառութեամբ ունեցած ես, և եթէ բոլորով սրտիւ Վրիստոսի հաւատացեր ես, վստահ եղիր՝ որ քու մեղքերդ ներուած են. ասկէ աւելի չեն կրնար զրուցել անոնք, և այսչափը՝ ուշադրութեամբ Աստուծոյ խօսքը կարդացողներուն ամէնքն ալ գիտեն:

Նոս դնենք՝ ըստ սովորութեան Հայոց գործածուած արձակման ձևը հանդերձ ան խնդրուածքով , որ խոստովանորդին կը մատուցանէ քահանային՝ անկէ արձակում խնդրելու համար :

Խնդրութեան գրութեան


Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին Արդին Լստուծոյ . զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ , արձակեսցես զիս՝ ի կապից մեղաց իմոց , աղաչեմ զքեզ :

Լստուծոյ գրութեան

Ա՛վ սուրբ հայր՝ քեզ կը բռնեմ հաշտարար միջնորդ ու բարեխօս Լստուծոյ միածին Արդոյն քով , որ քեզի տրուած ատ իշխանութիւնովը իմ մեղացս կապերէն արձակես զիս . կ'աղաչեմ քեզի :

Լստուծոյ մի գրութեան

Աղորմեսցի քեզ մարգասէրն Լստուած և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց , խոստովանացելոցն և մոռացելոցն : Եւ ես կարգաւ քահանայական իշխանութեան , և հրամանաւն աստուածային՝ թէ ( զոր արձակիցէք յերկրի , եղիցի արձակեալ յերկինս : ) Երովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց . ՚ի խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց . յանուն Հօր և Արդոյ և Հոգւոյն Արբոյ : Եւ դարձեալ՝ տամ զքեզ ՚ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ . զի զորինչ գործիցես բարիս , եղիցի քեզ ՚ի բարեգործութիւն , և ՚ի փառս հանդերձեալ կենացն , ամէն :



## Ելևարհայտ

Ողորմի քեզի մարդասէրն Լստուած ու բոլոր մեղքերուդ թողութիւն տայ, թէ խոստովանածներուդ թէ մոռցածներուդ, և ես ալ իմ քահանայութեանս իշխանութիւնովը ու Լստուածոյ հրամանովը՝ թէ (երկրիս վրայ ինչ որ արձակէք, երկինքին մէջ ալ արձակած ըլլայ,) աս նոյն խօսքովը կ'արձակեմ քեզի մեղքին ամէն մասնակցութենէն, թէ՛ խորհրդով՝ թէ՛ խօսքով և թէ՛ գործքով գործուածներէն. և որ և Որդւոյ և և շոգոյն Սրբոյ անունովը: Եւ նորէն կը դարձնեմ քեզ սուրբ եկեղեցւոյ խորհուրդներուն, որպէս զի՛ ինչ բարի բան որ ընես, քեզի բարեգործութիւն մը ըլլայ ու ապագայ կենաց փառք ամէն:

Արձակման սկիզբը՝ սահմանէն անդին անցնելէն քաշուիլ մը և զգուշաւոր ճշդութիւն բանեցրնել մը կ'երևնայ. որպէս թէ քահանան գիտմամբ ծածուկ պահած մեղքերնուս չխառնուիր, ու անոնց համար պատասխանատու չըլլար, և որպէս թէ միայն «խոստովանած» ու խոստովանելու «մոռցուած» մեղքերուն արձակումը կրնայ անկէ առնուիլ: Բայց քիչ մ'ալ առաջ երթալով, կը տեսնենք որ քահանան առանց քաշուելու և խիղճ ընելու՝ համարձակապէս իր վրան կ'առնէ՝ խոստովանորդին «մեղաց ամէն մասնակցութենէն» արձակելը, մարդը թէ՛ խորհրդով գործած ըլլայ անոնք՝ թէ խօսքով և թէ՛ գործքով, ու թէ և ամենամեծ մեղքերը ծածկած ալ ըլլայ յատուկ գիտաւորութեամբ: Իրօք՝ կա՞ն հաւատացողներ, որ քահանան աս խօսքերը բերնէն հանելուն պէս խոստովանողին վրայ, անոր բոլոր մեղքերը կը թողուին, գիտմամբ չյիշած մեղքերն ալ, խոստովանածներն ալ՝ ու նաև մոռցածներն ալ: Ընանկ է նէ՛ ինչ պէտք է մարդուն խոս-



տովանիլ , քանզի ահա՛ քահանան չխոստովանուած ու ծածուկ պահուած մեղքերէն ալ կրնայ արձակել՝ ճիշտ ինչպէս որ խոստովանուածներէն կ'արձակէ :

Եթէ մեկը ըսէ որ՝ Վահանային ըսած “կ'արձակեմ քեզի մեղքին ամէն մասնակցութենէնը” անկէ առաջ յիշած՝ “Թէ խոստովանածներուդ թէ մոռցածներուդ” խօսքին կրնայի , ուրեմն՝ կը պատասխանեմ , անոր տուածը ըստ մասին թողութիւն մըն է . անանկ է նէ՛ մեղաւորին օգուտ մը չունի . որովհետեւ՝ “Ո՛վ որ բոլոր օրէնքը պահէ , ու մէկ բանով մը ծռի , անիկայ բոլոր օրէնքներուն պարտական կ'ըլլայ” : ( Յով . ք . 10 : ) Եսկէ զատ՝ Եստուած ըստ մասին թողութիւն չտար , ո՛չ ալ ըստ մասին խոստովանութիւն կ'ընդունի . անիկայ թէ որ մէկուն մեղքերը ներէ , անոր բոլոր մեղքերը կը ներէ , ու զանիկայ երանելի կ'ընէ : ( Լուկ . 7 , 8 : ) Ենգամ մը մաքրուած մարդը ալ մեղքի խիղճ չունենար . Եստուած՝ անոր մեղքերն ու անօրէնութիւնները այլ ևս չյիշեր : ( Լեւ . 7 , 2 , 17 : ) “Վատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն” : ( Լուկ . ք . 1 : ) Եւ Քրիստոս՝ որուն որ մեղքերը ներէ , “Վնա՛ խաղաղութիւնով” կ'ըսէ անոր : Ու թէ որ բանին բնութեանն ալ նայինք , անկարելի է որ մարդ մը Եստուծոյ առջևը զեղջի եկող ու ապաշխարող ըլլայ մէկ մեղքին համար , ըսել կ'ուզեմ՝ սիրտը ցաւած ու վշտացած ըլլայ Եստուծոյ անհնազանդ գտնուելուն ու անիկայ սրգողցընելուն համար մէկ մեղքին կողմանէ , և նոյն ատենը ուրիշ մէկ մեղքին՝ ան ալ իր գործածներէն ամենէն մեծին համար ո՛չ սիրտը կտորի և ո՛չ զանիկայ խոստովանի : Եմենէն մեծին համար ըսի , որովհետեւ մարդս բնականապէս իր ամենէն մեծ մեղքը կը ծածկէ : Թէ որ մէկը Եստուծոյ ուզածին պէս տըրտ-

մութիւն քաշէ , անոր տրտմութիւնը 'ի հարկէ ամէն յանցանքներուն կը տարածի՝ մանաւանդ ան յանցանքներուն որ իր գործածներուն մէջ ամենասոսկալին են : Ուրեմն ան անձը որ՝ Աս մեղքերս կը խոստովանիմ կ'ըսէ , բայց բոլոր անարգանքն իր վրայ առնելով ինքզինքը սիրտերը քննող Աստուծոյ առջևը խոնարհեցընելուն տեղը՝ ամենէն սարսափելի մեղքերը կը ծածկէ , անանկ մարդը իր մեղքերուն վրայ՝ յանդուգն ստախօսութեան և կեղծաւորութեան յանցաւորութիւնն ալ բարդելով՝ անոնք բազմապատիկ աւելի կը ծանրացընէ : Հապա ինչպէս մարդիկ եղած պիտի ըլլան ան հոգևոր ուղեցոյցները՝ ան բազմութիւ հոգոց վստահութիւնն իրենց կապող կրօնական առաջնորդները , որ ասանկ կեղծաւոր անձանց մեղքերուն միայն մէյմէկ կտորին թողութիւն տալ կը ձևանան :

Սեղքերնէն ազատելու համար աս ճամբուն ապաւինելով՝ անիկայ բռնող ու պաշտպանողներէն ըսող պիտի ըլլայ՝ որ , Ռոլոր բանը ապաշխարողին անկեղծութեանը կը նայի , և քահանան՝ “կարծակեմ քեզի մեղաց բոլոր մասնակցութենէն” խօսքն որ բերնէն կը հանէ , անոր համար է՝ որ ինքը անանկ կը բռնէ թէ մարդը պարզապէս , կատարելապէս ու ճշմարիտ զղջմամբ բոլոր իր մեղքերը խոստովանեցաւ : Շատ աղիկ , ուրեմն քահանան անոր կ'իմացընէ՞ որ եթէ կեղծաւորութիւն ընէ կամ մէկ բան մը ծածուկ պահելու ըլլայ , մեղքերուն ամէնքն ալ՝ թէ խոստովանածները՝ թէ չխոստովանածները բոլորը մէկէն չարձակուած կը մնան : (Թէ որ կ'իմացընէ , աս ընելով՝ անիկայ ինքն իրեն դէմ ապացոյց կու տայ , որ ամենեին իշխանութիւն չունի մէկ մարդու մը բացարձակապէս ըսելու՝ Վու մեղքերդ ներուած է , և աս անոր համար՝ որ կարող

չէ ստոյգ գիտնալ թէ արդեօք անոր խոստովանու-  
թիւնը անկեղծ է, կամ կէս մը պատրուակելով ու  
կէս մը մեղմացընելով է: Այսպէս՝ կը տեսնենք որ  
քահանան՝ հասարակ մարդու մը ըսելիքէն աւելի  
բան չկրնար զրուցել իր խոստովանորդոյն. այսինքն՝  
Թէ որ քու բոլոր մեղքերուդ վրայ ճշմարտապէս ա-  
պաշխարհեր ես, քեզի թողու՞թիւն կայ: Հիսուս Վը-  
րիստոսի արիւնովը, եթէ ոչ՝ տակաւին դատապար-  
տութեան տակ ես:

Սեր Տէրօջը խօսքէն առաքելոց ասանկ իշխա-  
նութիւն մը տալ չիմացուելուն մէկ պատճառն ալ  
աս է՝ որ առաքեալները իրենք իրենց վրայով ա-  
սանկ բան մը չհասկըցան: Հայտնի է որ մեր Տէ-  
րօջը ան խօսքը ըսելովը ինքզինքնին իշխանութիւն  
առած չսեպեցին՝ թողութիւն տալու, կամ թէ մե-  
կը մէկալը վստահեցընելու թէ Աստուած մեղքեր-  
նին ներած է: Ասխա ամենեւին խօսք չկայ տտոր՝  
որ առաքեալները ասանկ իշխանութիւն մը բանեցը-  
նելու երբեք ձեռք չգարկին: Վորձք Առաքելոցին  
մէջ անոնց երեւելի գործքերուն պատմութիւնը ու-  
նինք. աս սրբազան պատմութիւնը կարգալով դիւրին  
է գտնելը թէ անոնք ինչ ընելու համար խրկուած  
սեպեցին ինքզինքնին. բայց գտածնիս ինչ կ'ըլլայ:  
Հոն մինչև անգամ մէկ տեղ մը գրուած չենք  
տեսներ՝ որ անոնք մէկուն մէլքերը ներելու ձեռք  
զարկած ըլլան. կամ թէ անոր՝ Վու մեղքերդ նե-  
րուած է ըսած ըլլան: Աս մասին Սուրբ Վիրքին  
ասանկ ընելուն պատճառը տալու է. և ասիկայ  
ընելու երկու ճամբայ կայ: Սէկ ճամբան՝ Առա-  
քեալները ասանկ բան չընենուն համար յիշուած  
չէ՝ ըսելն է. միւսը՝ Թէ որ ըրին ալ, Հոգին Սուրբ  
անիկայ շատ պզտիկ բանի տեղ դնելով Սուրբ  
Վրոց մէջ յիշելու արժան չսեպեց՝ ըսելն է: Բայց  
յայտնի է որ շիտակ պատճառ առաջինը պիտի

բռնուի, ո՛չ թէ ետքինը: Ինչու որ եթէ՛ ոմանց հաւատացածին պէս՝ մեղքերը ներելու և անոնք ետ բռնելու գերմարդկային իշխանութիւնը կար առաքեալներուն քով, ու թէ որ աս իշխանութիւնը կը գործածէին, մանաւանդ թէ որ անիկայ իրենց յաջորդներուն անցուցին՝ որ երթան անոնք ալ գործածեն մարդոցը վրայ մինչև աշխարհիս վերջը, թէ որ աս բաները ասանկ եղան կ'ըսեմ, անանկ է նէ՛ ասիկայ գերաստիճան պիտանութիւն ունեցող բան մը եղած ըլլալու էր մեզի: Եւ որովհետև Սուրբ Վիրքը՝ մեր օգուտին համար տուեր է Ըստուած, ասոր համար մենք չենք կրնար կարծիլ թէ այսքան խիստ հարկաւոր բան մը զանց կ'ընէ ան: Ար տեսնենք որ՝ մեր մարդասէր Տէրոջը իր ասանկ իշխանութիւն մը սնննալը և անիկայ մարդոցը վրայ գործածելը յատկապէս նշանակելու արժան սեպուեր է: Տեղ տեղ կը յիշուի թէ ան՝ անուննին տալով՝ կ'ըսէր մարդոց «Քու մեղքերդ ներուած են, գնա՛ խաղաղութիւնով»: Ըրդ Տէրոջը՝ աս իշխանութիւնը գործածած ըլլալը ասանկ մասնաւորապէս նշանակելու արժան որ սեպուած է, կը վայլէ՞ր որ առաքեալներունը զանց ըլլար ու լուսութեամբ անցնուէր, թէ որ անոնք ալ գործածած ըլլային: Սեր խելքին հասածին նայելով՝ աւելի յարմար կ'ըլլար Վրիստոսինը զանց ընել՝ քան թէ անոնցը, քանզի Վրիստոսի՝ Ըստուած և մարդ ըլլալուն ուրիշ առատ ապացոյցներ ունենալովնիս, կրնայինք հետևաբար գիանալ թէ անիկայ անտարակոյս աս աստուածային իշխանութիւնը ունի, թէ և գործի դրած մէկ օրինակն ալ մինչև անգամ յիշուած չըլլար, վասն զի անվիճելի բան է՝ որ Ըստուածոյ մեղաց թողութիւն տալ կ'իյնայ: Բայց մարդոց համար չենք կրնար զրուցել թէ՛ աս իշխանութիւնը անտարակոյս անոնց ալ կ'իյնայ, վասն

որոյ մէկը չկրնար մեղ պարտաւոր սեպել մարդոց ալ տրուած ըլլալուն հաստատու՝ մինչև որ առջևնիս յայտնի, ազգու և հաստատուն վկայութիւններ չըլլան: Վիտենք որ շատերը մեր Տէրոջը ան խօսքը, որուն վրայ հիմայ խորհրդածութիւն կ'ընենք, բաւական պայծառ ու հաստատուն վկայութիւն պիտի բռնեն: Ե, յո՛ւ. թէ որ Սուրբ Վրոց մէջ ուրիշ խօսքերէ կ'երևնայ որ առաքեալներն ալ անոնց զբուրուցածին պէս հասկըցան, անատենը տուած նշանակութիւննին բաւական կը հաստատուի՝ ան խօսքերուն ասոր հետ մէկտեղ գալովը. չէ նէ, մինակ ասկէ չենք կրնար հանել որ աս իշխանութիւնը մարդոց տրուեցաւ: Սուրբ Հոգին աս ճամբովը բան չընէր, անիկայ մէկ երկու կապակցութիւն չունեցող և քովիններէն բոլորովին տարանջատ կեցած խօսքերու վրայ չընէր մէկ խիստ ծանրակշիռ ճշմարտութեան մը հաստատութիւնը: Ե, յսու ամենայնիւ՝ ըսել չենք ուզեր որ Եստուծոյ սոսկ մէկ խօսքը իր նշանակութեանը վրայ առանց տարակոյս մը թողելու՝ կարևոր վարդապետութիւն մը որ հաստատէ ալ, անիկայ անբաւական է՝ մինակ մէկ խօսք մը ըլլալուն համար, ո՛չ. հապա՛ երբոր վարդապետութիւն մը աս կերպով հաստատել ուզելով մեր առջին դենն, 'ի սկզբան՝ մէյմը երկմտելու տեղ ունինք. որովհետև կը տեսնենք որ Սուրբ Վրոց բոլոր գլխաւոր ճշմարտութիւնները կրկին և կրկին ու տարբեր տարբեր կերպերով յիշուած են, որպէս զի անոնց վրայ տարակոյս մը չմնայ: Ենոր համար իրաւունք ունինք երկմտելու՝ թէ վկայութիւն բերուած անջրպետեալ խօսքերը արդեօք հարևանցի՞ մը նայելով տեսնուած նշանակութիւնը ունին կամ թէ ուրիշ նշանակութիւն, երևութաբար ցուցուցած բաներնին կը վարդապետեն կամ թէ ուրիշ միտք ունին: Երդ եթէ Եստուած ներողու-

Թիւններ շնորհելու գործը իրօք առաքեալներուն ու անոնց յաջորդներուն ձեռքը տուաւ, անոնցմէ առաջ մարգարէից կամ քահանայից ասանկ պաշտօն մը տուած չըլլալով, աս բանը Աստուծոյ մարդոց համար ըրած տնօրէնութիւններուն պատմութեանը մէջ բոլորովին նոր թուական մը դրած պիտի ըլլայ, ո՛չ միայն այսչափ, հապա նաև առաջկուց եղած բոլոր բաներէն անանկ տարապայման տարբեր, և ուղիղ՝ պատշաճ ըսուած բանին վրայ մեր ամենուս ունեցած գաղափարներուն այնչափ հակառակ բան մը ըրած պիտի ըլլայ, որ բոլոր ուրիշ բաներէն աւելի հարկաւ ասոր վրայօք պէտք էր խօսք խօսքի ետեւէ ու պատուէր պատուէրի վրայ կրկնուիլ Սուրբ Վրոց մէջ: Վրիստոսի խօսքին միտքը՝ եթէ յիշեալ տարօրինակ գործը առաքելոց տալ հասկընանք, բնականապէս պիտի ըսենք թէ՛ անշուշտ ասիկայ ուղղակի և կամ գէ՛թ անկնարկութեամբ մը հաստատող խօսքեր ալ ըսուած ըլլալու են ետքէն, բայց աս ակնկալութեան հակառակ՝ կը տեսնենք որ Սուրբ Վրոց մէջ ետքէն եղած խօսքերը ամենեւին չեն հաստատեր առաքելոց ասանկ սքանչելի պարգև մը տրուիլը և լուսնայն մըն ալ չեն իմացըներ: Առաքելոց ըրածներուն վրայով սրբազան պատմագրիչին բոլոր տուած տեղեկութիւններէն ամենեւին չերևնար որ երբեք անոնց միտքէն անցած ըլլայ թէ՛ մեղքերը թողելու համար Տէրոջը ունենած իշխանութիւնը իրենց ալ տրուած էր, և թէ ան աստուածալայել իշխանութիւնը բանեցընելու արտօնութիւն առած էին: Իրաւ անոնց գործերուն մէկն ալ հիմակուան ատենը Անոնց յաջորդներն ենք զրուցողներուն ըրածին նման խոստովանանք ընել ու արձակուամ տալ էր՝ ըսենք նէ, ան ատենը Աստուածաշունչ Վրոց մէջ “Վործք Առաքելոց” կոչուած գրքին իր տուած խոստովան-

բը կատարած ըլլալը ուրացած կ'ըլլանք . որովհետև  
 ըսել կ'ըլլայ թէ՛ աս Հոգեշունչ Վիրքը առաքելոց  
 աշխատութիւններուն մէկ պատմութիւնը տալ կը  
 խոստանայ , 'ի վերայ այսր ամենայնի ան պատմու-  
 թեանը մէկ խիստ երեւելի ու հարկաւոր մասը բո-  
 լորովին զանց ընելով՝ անոր նկատմամբ զգուշաւոր  
 ու յատուկ լռութիւն մը կը պահէ սկիզբէն մինչև  
 վերջը : Մարդ որչափ որ կրնայ տեսնել իր ամե-  
 նախոր զննութեամբը , առաքելոց սասնկ իշխա-  
 նութիւն մը ունենալը կամ գործածելը հեղինակին  
 գիտցած բանը չէր . կամ թէ որ գիտէր ալ , ետքէն  
 գալու մարդոցմէ ծածուկ պահել ուղած է : Իսոյց  
 ստոյգ սասնկ եղած է կրնա՞նք ըսել , որովհետև  
 իրաւ գործածած որ ըլլային , անշուշտ կը գիտնար՝  
 ու յատուկ աշխատութեամբ մեզի կ'իմացընէր : Աւս-  
 տի պատշաճ և արդար է ասկէ մակարբերել թէ՛  
 առաքեալները այսպիսի իշխանութիւն մը բանե-  
 ցընել չձևացան երբեք : Այլ մեծ բան է որ ա-  
 նոնք իրօք գիւղէ գիւղ՝ քաղքէ քաղաք ու գաւառէ  
 գաւառ պտըտին աս տարօրինակ իշխանութիւնը  
 բանեցընելով , սակայն և այնպէս՝ անոնց պատմու-  
 թիւնը մանրամասնաբար զրոյ հեղինակ մը կարող  
 եղած ըլլայ աս բանին յիշատակութիւնը բոլորո-  
 վին դուրս ձգելով յօրինել իր պատմութիւնը :  
 Վանզի այնչափ մարդիկ՝ աշխարհս վերանորոգող-  
 ներու պէս ելլելով ու այնքան այլևայլ տեղեր  
 ճանապարհորդելով աս աստուածային իշխանու-  
 թիւնը որ բանեցուցին , անտարակոյս աս բանին  
 վրայ յատուկ խօսքեր ծագած ու պատասխաններ տը-  
 րուած պիտի ըլլայ . ու նաև առաքելոց կենացը մէջ  
 աս բանը երևան հանող անանկ պատահմունքներ  
 հանդիպած պէտք է ըլլան , որ այսպիսի պատմագիր  
 մը չկրնար չժանուցանել : Ըն զարմանքի մէջ ին-  
 կած Հրէաները " Ո՞վ է աս որ մեղքերու թողու-

Թիւն ալ կուտայ” որ ըսին մեր Տէրօջը համար ,  
 ի՛նչ կը կարծենք , անոր արբանեակներուն բան մը  
 չըպիտի զրուցէին , երբօր անոնք Տէրօջը նոյն իշխա-  
 նութիւնը իրենց վրայ ալ անեւելով՝ անոր ասոր  
 թողութիւն տալու պարտէին . Արեւից և հեթանո-  
 սաց մէջ . եթէ ասանկ ընէին կ’ըսեմ , ասով հայ-  
 հոյիչներ կոչուելու և այնքան քաշածներէն զատ  
 երբեմն աս առթով ալ նորանոր դառն նեղութիւն-  
 ներ կրելու ենթակայ չըպիտի ըլլային :

Գարձեալ . եթէ Գործք Մտաքելոց գրքին՝ աս  
 իշխանութեան վրայ խոր լուծիւն պահելը մեծ  
 բան է , Մտաքելոց թուղթերուն ալ ասանկ ընելը  
 աւելի մեծ բան չէ՞ մի : Վանդի ասոնք առա-  
 քեալներուն իրենց ձեռքովը գրուեցան , ու Վրիս-  
 տոնէական սուրբ կրօնքին դուրսեանը մէջ մանող  
 ամէն տեսակ բանի վրայ կը ճառեն թէ՛ վարդա-  
 պետութեան վերաբերեալ է եղեր և թէ գործա-  
 ծուութեան վերաբերեալ , ինչ որ առաքելոց խնամ-  
 քին տակ եղած եկեղեցիներուն հարկաւոր էր սոր-  
 վիլ ու գիտնալ՝ ասոնց մէջ գրուեցան : Սակայն  
 կը տեսնենք որ , մեր հոգոյն ամենահարկաւոր սոր-  
 վելիքներուն վրայով՝ Մտաքելոյ կողմանէ յատկա-  
 պէս յօրինել սրուած այս երկար Վամակներուն մէջ  
 գանուող այնքան այլևայլ նիւթերուն հետ՝ գոնէ  
 միայն մէկ հատ անգամ անանկ զրուցուածք մը չը-  
 կայ , որ անկէ մարդ կարող ըլլայ գէթ կերպով մը  
 հետեցընել թէ՛ առաքեալները աս ահաւոր իշխանու-  
 թիւնը ունենալ ձեացեր են կամ թէ գործածեր են :  
 Իայց ասոր հակառակ՝ ինչպէս յառաջագոյն ցուցու-  
 ցինք՝ ասոնց մէջ կը կարդանք քանի քանի այնպիսի  
 խօսքեր , որոնք կ’իմացընեն թէ անոնք ասանկ իշխա-  
 նութիւն ո՛չ կը գործածէին և ոչ իսկ ունէին : Ո՛ր  
 և իցէ մարդ՝ որուն միտքը ծուռ գաղափարներով  
 պաշարուած և կարգացածը իր ծուռ կարծեացը վը-



բայ մեկնելու վնասակար սովորութեանը բնաւորեալ չէ, մէյ մը աս գրուածները զգուշութեամբ կարգալուն պէս՝ իսկոյն պիտի համազուի, ու ըսէ թէ՛ Մսանկ բան չըլար, ատ անհնար բան է, ատիկայ անոնց սորվեցուցած բաներուն բոլոր իմաստին ու ոգիին անյարմար՝ հակասական և շիտկէ շիտակ ներհակ է\* : Արի՛ն սքանչելի նախախնամութեամբ

\*Սէկ քանի խօսքեր, ինչպէս ան ՏԻՄ. ան. 20, և ՀԻՄ. Է. 15, վկայութիւն բռնելով՝ երբեմն յառաջ կը բերեն որպէս թէ ցուցընել ուզելու որ զրուցած իշխանութիւնին առաքեալները կը գործածէին : Բայց թէ որ աս վկայութիւններուն առաջինը՝ Սոլոսան իշխանութիւնը բանեցուցած ըլլալուն ապացոյց ըլլայ, անատենը ան ՍԻՄ. Է. 4 և 5 տունները ինչ կը ցուցընեն. չէ՞ որ ասոնք ալ հետեւութեամբ կը ցուցընեն որ բոլոր եկեղեցին ալ զանիկայ բանեցուց : Սակայն Սատանային մատնելը յիշեալ երկու տեղն ալ ուրիշ բան չկրնար ըլլալ՝ միայն թէ խրատ ըլլալու պատիժ մը, որ կը տրուի եկեղեցւոյ մաքրութեանը, ու յանցաւորին խելքը գլուխը բերելով՝ անիկայ նորէն ճամբու բերելու համար, ո՛չ թէ անոր կորստեանը : Բանզի ան Սորնթացուցին մէջի անձը՝ եկեղեցիէն Սատանային մատնուելէն հոս երբոր ապաշխարութեան նշան ցուցուց՝ նորէն եղբայրութեան մէջ ընդունուեցաւ. տես Բ. ՍԻՄ. Է. 5—9 : Ու նոյն թմուղիքը գրող առաքեալն ինքը կ'ըսէ թէ՛ Սոր իշխանութիւնը շինութեան համար է ու ո՛չ թէ կորստեան : ( Բ. ՍԻՄ. Է. 8 : Ժ. 19 : ) Եւ Բրիստոսի զրուցածներուն նայելով՝ եկեղեցւոյն իր յանցաւոր անդամոց տալու ամենէն վերջին պատիժը այսչափ է. զանոնք հետանոսի ու մաքսաւորի պէս սեպել, այսինքն եկեղեցւոյ անդամ ըլլալէն հանել. ( ՍԻՄ. Ժ. 17. ) ու կ'երևնայ որ Սատանային մատնել խօսքին մէջ առաքեալին ալ բոլոր միտքը ասոր կը նայի. որովհետեւ Մատուոյ եկեղեցիէն դուրս ո՛վ որ կայ՝ բոլորը Սատանային թագաւորութենէն են, որն որ աս աշխարհիս աստուածը կ'անուանի :

Իսկ ճակորդսէն առնուած վկայութեանը. ասոր մէջ բայն մը չկայ՝ որ իմացընէ թէ հոն խոստացուած ներումը եկեղեցւոյ եւրեցներէն առնուելու էր. այլ մանաւանդ երբ որ առանց քաշկրտելու կարգանք, դիւրաւ մը կ'իմացուի թէ՛ ինտոր որ Տէրը ոտք պիտի հանէ հիւանդը, նմանապէս անոր մեղացը ներումն ալ անիկայ պիտի տայ : ( Հոս կարդա՛ Մատ. Ը. 24 : ) Առաքեալները՝ որ հրաշքով հիւանդներ կը բժշկէին, կ'երևնայ թէ իւրով կ'օծէին զանոնք : ( ՍԻՄ. Ժ. 13 : ) Բայց Տէրը զանոնք քարոզութեան հանած ժամանակը անանկ բան մը չգրուեց, որով կարենար հասկըցուիլ թէ՛ անոնց կատարելու պարտքերէն մէկն ալ մեղաց թողութիւն տալը պիտի ըլլար : Ընոր ըսածը աս էր, Երկնից թագաւորութիւնը մտ է ըսելով՝ քարոզեցէք, հիւանդները բժշկեցէք, բորոտները սրբեցէք, դեերը հանեցէք, և :

անկորուստ մեզի հասած աս անգին թուղթերը կը խօսին մկրտութեան վրայ, տերունական ընթրեաց վրայ. և կը սորվեցնեն թէ ինչ տեսակ մարդիկ արտօնութիւն կրնան ունենալ աս սուրբ խորհուրդներն ընդունելու, և թէ ինչպէս մատակարարուելու են ասոնք: Ար խօսին առանձնական աղօթքի, ու նաև աստուածային երկրպագութեան համար հրապարակական ժողովքներ ընելու վրայով: Ար սորվեցնեն թէ եկեղեցիները ինչ ընելու են իրենց յանցաւորներուն, և անոնց պատուէր կուտան որ՝ մէկդի քաշուին ամբարշտութեամբ դացողներէն, չար ու անկարգ անձինքը մէջերնէն հանեն. իսկ թէ որ անոնք ապաշխարեն, յանցանքնին ներեն ու նորէն ընդունին, միանգամայն անձերնուն աղէկ նայելով՝ որ չըլլայ թէ իրենք ալ իյնան: Ար յորդորեն որ եղբայրները մէկզմէկուհետ սիրով վարուին ու իրարու ներեն ինչպէս որ Մատուած Քրիստոսով ներեց անոնց: Ա՛խրատեն ևս որ հաւատացեալները մեծ ջանքով աշխատին իրենց կոչումն՝ ու ընտրութիւնը ապահովեցնելու. սակայն չեն երեցըներ որ առաքելական կամ քահանայական արձակումն է աս ըղձալի ապահովութիւնն ստանալու մէկ ճամբան: Մտով մենք գոնէ սա կ'իմանանք, որ առաքելոց մտացը մէջ արձակումը հարկաւոր չէր մարդուն՝ իր փրկութեանը համար հաստատուն վստահութիւն ունենալու: Մ գերազանց գրութիւններուն մէջ կը խօսուի անանկ բաներու վրայով, որոնք փրկուելու մարդոց վրայ միշտ պէտք է պատահին, և որոնք յուսոյ կատարեալ հաստատութիւն ու ապահովութիւն տուող իրեր են, և քրիստոնեայք կը յորդորուին՝ որ յիշեալ բաները ժրութեամբ ի գործ դնեն: Մ փրկութեան հետ կից գացող քաներուն վրայ խօսուածները մէկ անգամ չէ՛ երբ

կու անգամ չէ, այսինքն միայն տեղիկ մը կամ երկու տեղ չեն. հապաքողոր աս Հոգեշունչ Վարուժոց ամէն կողմը փոյթ ու աշխատութիւն խնայուած չէ ան մարդոց փրկութեանը՝ որոնց համար որ գրուեցան : Եւսպէս կը տեսնենք որ առաքեալները ամէն տեղ կը ցուցնեն մարդոցը՝ թէ ինչ ընելու են փրկուելու համար, առջևնին կանոններ կը դնեն՝ որ բռնեն, և աներկբայ վստահութեամբ կ'ըսեն անոնց, Եթէ աս կանոններով երթաք՝ Վրիստոսի օրը մենք պիտի ուրախանանք որ պարագ տեղը չվազեցինք և ընդունայն չաշխատեցանք : Երբ թէ որ անոնք մեղքեր ներելու համար իրենց իշխանութիւն առած ըլլալը կը հաւատային, կամ թէ որ ներող Մտուծոյ ու սպաշխարող մեղաւորին մէջտեղը անձնողներ կը ճանչնային ինքզինքնին, ուրեմն՝ արքայութիւն երթալու կերպն ու ճամբան ցուցնելով՝ անոր մէջ քալելու համար մարդոցը թախանձած ատեններնին, ինչո՞ւ չէին զրուցեր և քրիստոնէից միտքը չէին ձգեր թէ՛ մեղքերնէն արձակուելու համար առաքեալի մը կամ քահանայի մը երթալ ու անկէ արձակում առնել հարկաւոր է. ինչո՞ւ կ'ըսեմ, չէին իմացըներ աս բանը՝ որ վրանին առած պաշտօննին աղէկ կատարած ըլլային, ու անթիւ մարդիկ ալ ուղղապէս և որոշ գիտնային իրենց ամենացանկալի բանին՝ իրենց հոգւոցը փրկութեանը հասնելու համար ինչ ընելիքնին : Բայց եթէ անոնց համօրէն գրուածոց մէջ ասոր վրայով պատուէր մը գտնելու ելլենք, կամ գո՞նէ անոնց այսպիսի գաղափար մը ունենալուն՝ կամ թէ գէթ անոնց օրովը գտնուած եկեղեցեաց մէջ ասանկ սովորութիւն մը ըլլալուն մինչև անգամ մէկ փոքր նշանը փնտռելու ելլենք, գիտցած ըլլանք որ զուր տեղը պիտի վատնենք մեր աշխատանքը : Եկեղեցիներուն գրած պատուէրներնէն

'ի զատ, ձեռունիս ունինք Տիմայ անոնց զանազան խրատները, որ աս եկեղեցիներէն մէկ քանիին երէցներուն պաշտօնին ու պարտուցը կը վերաբերին. նաև ունինք Տիմոթէոսին և Տիտոսին գրուած ան պատուական Թուղթերը. ասոնք իրենց գործակից ընկեր էին Աւետարանին գործոյն մէջ, և եկեղեցիներու հովիւներ եղան: Այս յատկապէս գրուած խրատներուն ու Թուղթերուն մէջ Սուրբ Հոգին կը սորվեցընէ՝ թէ եպիսկոպոսի մը ինչ անձնական հանգամանքներ հարկաւոր են, և թէ ինչ են անոր պաշտօնին ինկած պարտաւորութիւնները, և: Սակայն և այսպէս՝ բոլոր ասոնց մէջ ևս մի և նոյն լուծիւնը պահուած է՝ կարգաւորներուն յանձնեալ կարծուած ան սքանչելի իշխանութեանը վերայ: Արձակուամ տալու վրայ բառ մը անգամ չը յիշուելով՝ եպիսկոպոսներէն կը պահանջուի սորվեցընել, խօսքը քարոզել, վրայ հասնիլ ժամանակին կամ ժամանակէ դուրս, սաստել, յանդիմանել, ամենայն երկայնմտութեամբ ու վարդապետութիւնով յորդորել, և զգուշանալ՝ թէ՛ իրենց անձերնուն թէ սորվեցուցած վարդապետութիւններնուն, ու ասանկ ընելով՝ կ'ըսեն, ձեր անձերն ալ պիտի փրկէք, ձեզ մտիկ ընողներն ալ: Ահա՛ւասիկ՝ ասոնք ինչ գեղեցիկ ու յարմար գործեր են եպիսկոպոսի մը՝ իբրև Վրիստոսի հօտին վերակացու և օրինակ. ինչ արժանաւոր պաշտօն՝ որպէս հովիւ եկեղեցւոյ ու երէց և ուսուցիչ հաւատացելոց, և իբրև քարոզիչ փրկութեան. իսկ իբրև Աստուած մեղաց թողութիւն տալ փոխանորդաբար, քա՛ւ լիցի, հեռի՛ սյոսպիսի իշխանութիւն մը դիւրախօս և տկար մահկանացուէն:

Տիմայ գուցէ ոմանք աս մեր զրուցածներուն համար պիտի ըսեն թէ, Ասոնց բոլորը ուրիշ բան չեն ցուցընէր՝ միայն թէ մէկ ջանք մը Աստուծոյ Խօս-

քին մէկ յայտնի զրուցուածքը մէկդի վերցընելու : Օրուցելը դիւրին է , թէ որ միայն Մս ասանկ է ըսելով բանը կը կլուի : Բայց ատանկ չէ : Սեր դիտումը պարզապէս սա ցուցընել է՝ թէ անիկայ ծուռ հասկըցուած և հետեւապէս գէշի գործածուած է : Արովհետեւ ետքի դարերուն մէջ անոր վրայ անանկ վարդապետութիւն մը ու ծէս մը հիմնեցին ու ընդարձակօրէն գործի դրին , որ նախկին եկեղեցիներուն բոլորովին անծանօթ ու օտար էր :

Աւրեմն ի՞նչ է , պիտի ըսուի , աս խօսքին բուն նշանակութիւնը : Սինք առանց տարակուսելու սա պատասխանը ունինք աս հարցմունքին . Մս խօսքին միտքը լիակատար իշխանութիւն մը ու նաև գերբնական իմաստութիւն տալ էր առաքեալներուն , որ երթան ու փրկութեան պայմանները մարդոց առջևը դնելով , իշխանութեամբ և անսխալութեամբ սորվեցընեն անոնց՝ թէ ի՞նչ կերպով կրնան մեղքերնուն թողութիւնը ձեռք ձգել : Մհա՛ ասանկ իշխանութիւն մը ունէին առաքեալները , և ստիկայ Տերօջմէ առած կը ճանչնային ինքզինքնին , և յարմարութիւն գտածնուն պէս առանց երկմտելու կամ ծածկելու աս իշխանութիւնը ՚ի գործ կը դնէին : Ինչպէս Պետրոս Պենտէկոստէին օրը իրեն հարցընող ան մեծ բաղժութեանը պատասխանեց . “ Մպաշխարեցէք ու ձեզմէ ամէն մէկը թո՛ղ մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղաց թողութեան համար ” : ( Գործ . ք . 38 : ) ‘ Եյն երանելի առաքեալը ուրիշ ատեն մ՛ալ ըսաւ . “ Աւտի զղջացէք՝ ու դարձի՛ եկէք , որ մեղքերնիդ ջնջուի ” : ( Լ՛նդ . ք . 19 : ) Պօղոսն ալ այսպէս կ՛ըսէ . “ Հայտնի ըլլայ ձեզի մարդի՛կ եղբայրներ , որ ասով ( Յիսուսով ) ձեզի մեղաց թողութիւն կը քարոզուի . և ան ամէն բաներէն՝ որ Սովսէսին օրէնքովը չկրցաք արդարանալ , ասով ամէն ո՛վ որ հաւատայ կար-

գարանայ” : ( Ընդ Ժ 38 : ) Գարձեալ՝ ան եռանգալից հոգով հարցընող բանտապետին կ’ըսէ , “ Հաւատա՛ Տէր Զիսուս Վրիստոսի ու պիտի փրկուիս գուն և քու բոլոր տունդ ” : ( Ընդ Ժ 31 : ) Լուսաբազմարդին առաքելոյն բոլոր թուղթերուն մէջ ալ՝ աս նոյն զրուցուածքը կը գտնենք ամենամեծ վտահաճութեամբ կրկին և կրկին պնդած . “ Ըսկէ ետև ան հաւատքովը արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Ըստուծոյ հետ մեր Տէր Զիսուս Վրիստոսի ձեռքովը ” : ( Հռոմ . Ե . 1 : ) “ Գատապարտութիւն չկայ Զիսուս Վրիստոսով եղողներուն ” : ( Ընդ Ը . 11 : ) “ Եթէ քու բերնովդ Զիսուսը Տէր խոստովանիս , ու քու սրտիդ մէջը հաւատաս , թէ Ըստուած անիկայ մեռելներէն յարուց , պիտի փրկուիս ” : ( Ընդ Ժ . 9 : ) Ըհա՛սսանկ անոնք ձայներնին վերցընելով Զիսուս Վրիստոսի անուամբ մեղաց թողութիւն գտնելու հոգէնորոգ վարդապետութիւնը կ’աւետէին . չէ թէ հաւատացելոց մեջէն աս և ան որոշելով մինակ անոնց ուղղուած խօսքով մը , և չէ թէ միայն արձակում առնողներուն նայող ձեով մը , այլ ընդհանուր զրուծուածքով մը՝ բոլոր Ընոր հաւատացողներուն : Ըս բանն ընելը կը ճանչնային անոնք իրենց խրկուելուն գրեխաւոր նպատակը ու իշխանութիւններնուն չափն ու կոպարը . ինտոր որ իրենց Տէրն ու վարդապետը սորվեցուցեր էր՝ տուած վերջին պատուէրներուն մէջ , թէ “ Ըպաշխարութիւն ու մեղաց թողութիւն պէտք է քարոզուի իր անունովը բոլոր ազգաց մէջ ” , ( Գոր . Ի . Ի 7 , ) անոնց գրաւ թողլով սա խօսքը՝ թէ “ Ըն որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի , և ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի ” : ( Սոր . Ժ 15 , 16 : ) Ըռաքեալները մեզի կը հաստատեն որ Տէր Զիսուսէն առած պաշտօննին “ Ըստուծոյ շնորհօցը Ըւետարանին վկայ ըլլալ ” էր : ( Փործ .

ի . 24 : ) Հետ այնորիկ յառաջ երթալով՝ հաւատա-  
ցեալներուն ու հաւատացեալ շեղողներուն նշանները  
կը սահմանեն , և կը ցուցնեն թէ հաւատքին ար-  
դիւնքները որոնք են , ու անհաւատութեան պտուղ-  
ները որոնք են . աս ընելով մեզի անվրէպ կանոն-  
ներ կու տան , որպէս զի ամէն մէկ մարդ ինքնիրեն իր  
անձը փորձէ ու դատում ընէ և գտնէ՝ թէ ո՞ր կարգէն  
է : Օր օրինակ՝ մէկ կողմէն մեզի կը սորվեցընեն  
թէ “ Հաւատքը սիրով կը գործէ ” , “ Սիրտը կը  
մաքրէ ” , “ Լշխարհին կը յաղթէ ” . կը սորվեցը-  
նեն՝ թէ “ Լն որ Վրիստոսի մէջ է , նոր արարած  
մըն է ” , թէ “ Վրիստոսին եղողները մարմինը խա-  
չը հանած են իր կիրքերովն ու ցանկութիւններովը  
մէկտեղ ” : “ Լստուծոյ որդիքը ասով յայտնի է ”  
կ'ըսեն , “ Լմէն ո՞վ որ Լստուծմէ ծնած է՝ մեղք  
չգործեր , ինչու որ անոր սերմը իր մէջը կը մնայ ,  
ու չկրնար մեղք գործել , պատճառն որ Լստուծմէ  
ծնած է ” : ( ւ Յ՝ . 7 . 9 : ) Լնոնք կ'որոշուին  
իրենց մէջ բնակող Վրիստոսի Հոգիէն , Լստու-  
ծոյ հնազանդ կենալնէն և մարդոց վրայ իրենց ու-  
նեցած սէրէն : Իսկ միւս կողմանէ տեսնեք ինչ  
կ'ըսեն Տեառն մերոյ հաւատարիմ առաքեալները .  
անոնք սոք կը կոխեն որ՝ “ Լնիրաները Լստուծոյ  
թաղաւորութիւնը չեն ժառանգեր . ո՛չ պոռնիկնե-  
րը , ո՛չ կռապաշտները՝ ո՛չ շնացողները , ո՛չ ի-  
գացեալները՝ ո՛չ արուագէտները , ո՛չ գողերը՝ ո՛չ  
ագահները՝ ո՛չ զինովները՝ ո՛չ բամբաստողները ու  
ո՛չ յափշտակողները ” : ( ւ Կ՝ . 9 : )  
Վաւ “ Թէ որ մէկը Տէր Հիսուսը՝ չսիրեր , նզովեալ  
ըլլայ ” : ( Լնդ Ժ . 22 : )

Լս զրուցածներնիս բաւական թող ըլլայ՝ մեղ-  
քերը ներելու ու ետ բռնելու համար առաքելոց բա-  
նեցուցած կերպին օրինակը տալու : Հիմայ Տե-  
պանք որ՝ անոնք թողութիւն գտնելու պայմաննե-

ըր կը ցուցնեն և մեր առջին կը դնեն անշրջելի կանոն մը , որուն պէտք է ամէն մէկ մարդ ինքզինքը յարմարցնէ . եթէ ո՛չ , կը դատապարտուի : Առաքեալները նշաններ կու տան՝ որ անոնցմով ճանչցուին մարդիկ թէ երկու դասերուն որմէն են . հաւատացեալ են՝ կամ անհաւատ , թողութիւն գտածներէն են՝ կամ թէ դեռ չգտածներէն : Արորովհետեւ Քրիստոսէն իշխանութիւն առած՝ անոր անունովը կը խօսին , անոր համար անոնց խօսքը օրէնք կ'ըլլայ . և օրէնք ըլլալով՝ անոնց զրուցածէն զատ ուրիշ կերպով մը անհնար չ'ըլլայ որ մէկը թողութիւն գտնէ : Անանկ որ՝ այնուհետեւ ամէն մարդուն ընելիքը աս պիտի ըլլայ . անոնց գրածներուն մէջ պիտի նայի , որ իմանայ թէ ինքը ինչ վիճակ ունի Աստուծոյ առջև : Արուցուածքները ընդհանուր ըլլալով ամէն մարդու ուղղուած պէտք է սեպուին , ամէն մէկ մարդ ինքզինքը աս առջևնիս գրուած փորձի կանոններուն՝ վաւերական կանոններուն քով բերելով կրնայ դատել , թէ իր մեղքերուն թողութիւն գտած ըլլալը յուսալու տեղ ունի՝ , կամ չէ : Այլ Տեառն մերոյ իր տիեզերական ահեղ ատեանը բացած օրն ալ անոնց քարոզած Աւետարանին նայելով պիտի ըլլայ ամէն մարդուն դատաստանը :

Արդ՝ գուցէ ոմանք ասոր դէմ ալ սա պիտի ըսեն . Աթէ միայն աս մտօք առաքեալները կրնային մեղաց թողութիւն տալ , ատկէ կ'ելլէ որ ո՛վ և իցէ ուրիշ մէկն ալ՝ Աւետարանը ձեռքը ըլլալէն էտէ՛ կրնայ անոնց պէս թողութիւն տալ : Բայց ասանկ ընդդէմ զըուցողներուն միտքը ձգելու ենք որ՝ առաքեալները աս իրենց յանձնուած գործը առած ատեննին , Աոր Ատակարանին և ո՛չ մէկ գրելուիսը դեռ գրուած էր , ո՛չ միայն այսչափ , այլ Վրկչին իր անունը իսկ տակաւին անձանօթ էր աշ-



խարհիս : Ընդհանր դառն նախատանօք և անտանելի խոյտառակութեամբ 'ի խաչ հանելուծն վրայ գեւ հաղիւ հազ քանի մը օր անցած կը սեպուէր , ետքը յարութիւն առնելն ալ առաքեալներէն զատ միայն մէկ քանի հոգի իմացեր էին : Առաքեալները հիմայ Ընտր վկաններ պիտի ըլլային , ու պիտի ցուցընէին թէ՛ ան 'ի սկզբանէ անտի մեծ անձկանօք սպասուած Մեսիային վերաբերեալ մարգարէութիւնները Ընտր վրայ կատարուեցան : Ամէն ազգաց քարոզելու պիտի ելլէին՝ որ Սաղովբեցի Հիսուսը Քրիստոսն է , որ անիկայ աշխարհիս վրայ իշխանութիւն ունի մարգոց մեղքերուն թողութիւն տալու , և թէ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ : Ընտնց կը մնար ան Փրկչին խօսքերն ու գործքերը հրատարակել , և յայտնել ու սորվեցընել թէ անիկայ ինչ պայմաններով կը փրկէ մարդիկը : Ընտնցը սկզբնաւորական գործ մըն էր . եկեղեցւոյ հիմները դրին , անոր հաւատալիքներ հաստատեցին , անոր անդամն ըլլալու պէտք եղած հանգամանքները որոշեցին , սյսինքն՝ ցըրուցին թէ ինչ որպիսութիւններ հարկաւոր է մարդու մը վրայ՝ Աստուծոյ թագաւորութեանը մէջ ընդունուելու համար : Եկեղեցւոյ կառավարութեանը ու բարեկարգութեանը կանոններ դրին , սյսինքն՝ ցըրուցին թէ ինչ պայմաններով անդամոց արտօնութիւն կայ եկեղեցւոյ մէջ պահուելու , և ինչ յանցանքներու պատճառաւ անկէ արտաքսուելու են անոնք . որպէս զի յանցաւորները տեսնեն թէ մինչև որ ապաշխարելով իրենց չարութեանէն դարձի չգան՝ երկնից թագաւորութեանը յարմարութիւն չեն ունենար : Ահա՛ սյսպէս՝ Տեառն մերոյ յատկապէս ընտրած ան առաքեալները եկեղեցւոյ ապագայ վիճակին ու ընթացքին ձև , և կարգ կանոն սահմանեցին , որ մինչև աշխարհիս վախճանը անանկ երթայ :

Նոր կտակարանին գրեթէ բոլորը անոնց ձեռքէն ելած գործն է , որ ըստ մեծի մասին՝ նախկին եկեղեցիներուն աւանդուած առաքելական խրատներով ու պատուէրներով լեցուած է : Անոնք «Քրիստոսի դեսպաններն» էին՝ իրենց Տէրոջը կամքը գիտցընելու իշխանութիւն առած , և «Աստուծոյ խորհուրդներուն մատակարարներն» էին : Ուստի աս ըսածներնուս վրայ դատելով՝ ո՛չ միայն անոնց ատենի մարդիկը , այլ բոլոր գալու դարերը անոնց կապուած են երկնից ճամբան սորվելու : Ղաւթան ցոյց տուին , և ցուցուցած ճամբանուն մէջ ո՛վ որ քալէ՝ անոնց վստահութիւն տուին , որ մեղքերնին ներուած է : Քանը կարճ խօսքով յայտնելու ձեռով կրնանք ըսել թէ , որոնք որ սրտանց Հիսուսի Քրիստոսի կը հաւատան , անոնց ամենուն մեղքերը ներած են անոնք : Համարձակութեամբ կը պնդէին որ բոլոր ասանկներուն մեղքերը ներուած են . բոլոր ուրիշներունը՝ այսինքն բոլոր յանկեղծ սրտէ Քրիստոսի չհաւատացողներունը ներուած չեն : Այլ «Որուն մեղքերը ներէք» Եւ խօսքը իրեն պէտք եղողը կը հասկընայ , թէ մեր Տէրը ասով իշխանութիւն տուած է իր առաքեալներուն իր անունովը խօսելու . և թէ ամէն մարդոց ինչ ըլլալիքը և վերջին ըլլալիքը անոնց խօսքերովը պիտի վրձնուին :

Հիմայ տեսանք որ առաքելոց ձեռքը յանձնուածը պղտիկ գործ մը չէր , այլ անհունապէս ծանրակշիւ բան մըն էր : Թէ և իշխանութիւն չունէին զատ զատ անոր ասոր մեղքերը ուղածուն պէս ներելու կամ ետ բռնելու , սակայն՝ թողութիւն ըստանալու պայմանները Աստուծոյ կողմանէ բոլոր մարդոց յայտնելու և Աստուծոյ թագաւորութեանը մէջ ընդունուելու համար մարդուս վրայ պահանջուած հանգամանքները վաւերականապէս սահմանելու իշխանութիւն առած էին :

Զոս արժան է ևս յիշել թէ, անոնք աս պաշտօնին վրայ չգրուած՝ նախ Զոգին Սուրբն առին իբր յատուկ պարգև, և յետ այնորիկ աս առաքելական պաշտօնը. որովհետև տարակոյս չկայ որ եթէ մոլորելու ենթակայ ու անօգնական և սխալական մարդոց ձեռք ասանկ ամենազգուշալի մեծ դործ մը հաւտացուէր, ապահով չէր ըլլար: Ըստուած՝ մարդու մը չսխալելուն մինչև որ երաշխաւորութիւն մը չգնէ, չկրնար ըլլալ որ իր աստուածային անունովը նոր բաներ սորվեցընելու խրկէ զանիկայ՝ ու ինքզինք միանգամայն կապէ անոր սորվեցուցած վարդապետութիւններուն հաստատութիւն և հաւանութիւն տալու: Ընաքեալներն Զոգոյն Սրբոյ առաջնորդութեանը տակ պիտի մտնէին, և աս վիճակին մէջ ըլլալով՝ իսկ և իսկ անոր տուած խօսքը պիտի խօսէին. աս բաւական ապացոյց՝ բաւական գրաւ էր վստահեցընելու որ անոնք Ըստուծոյ անարժան բան մը՝ կամ այնպիսի բան մը չպիտի խօսէին, որ Ըստուած հաւանութիւն չտալիք ընէ: Ընաջ՝ Փրկիչն մեր անոնց զրուցեր էր թէ, « Ինչու որ՝ չէ՛ թէ դուք էք որ կը խօսիք, հապա՛ ձեր Զօրը Զոգին, որ ձեր ներսիդին կը խօսի »: (ՍՊԻԷ . Ժ . 20 :) Ընոնք ապահովցուցեր էր իր բարեշնորհ խոստմամբը թէ՛ ան Զոգին ամենայն ճշմարտութեամբ պիտի առաջնորդէ զիրենք, և առաջկուց զրուցած ամէն բաները միտքերնին պիտի բերէ, ու ետքէն ըլլալու բաներն ալ պիտի յայտնէ. քանզի թէ որ Սուրբ Զոգին յատուկ կերպով մը չտրուէր անոնց, այսինքն՝ թէ որ հիմակուան քահանայից ու քարոզչաց պէս ըլլային, իրենց յատուկ պաշտօնը չպիտի կրնային գլուխ հանել: Ընաքելութեան մեծ պաշտօնին երթալու ճամբայ չհանած՝ « Ընէք Զոգին Սուրբը » ըսելով անոնց վրայ փչելը՝ յայտնապէս կը ցուցընէր թէ աս

պաշտօնին կատարումը՝ իրենց արուած ան անխաղ  
 Առաջնորդն ունենալուն կապուած էր, և աս բա-  
 նով է որ անոնք կը զանազանին աւետարանին հա-  
 սարակ քարոզիչներէն : Իրենցմէ առաջ մարգա-  
 րէներուն ըրածին պէս՝ այնպէս « խօսեցան անոնք՝  
 ինչպէս որ Հօգին Սուրբէն շարժեցան », նշաններու՝  
 հրաշքներու ու հզօր գործերու միջոցաւ իրենց ա-  
 ռաքելութիւնը հաստատելով :

Հիմայ կը մնայ հարցընել թէ, « Առէք Հօգին  
 Սուրբը » ըսելով առաքելոց արուած իշխանութիւ-  
 նը՝ չէ՞ որ անոնց յաջորդներուն ալ անցաւ :

Աս հարցման մենք կարճ կերպով՝ Ո՛չ՝ կը պա-  
 տասխանենք, երկու պատճառաւ : Ասիս, աս իշխա-  
 նութեան սրբազան պաշտօնը վարելու յարմա-  
 րութիւն ունենալու համար՝ այն ընտրեալ առա-  
 քելոց ունեցածին պէս Սուրբ Հօգին ունենալու  
 է. քանզի աս պաշտօնը եթէ անոնց չկրցաւ արուիլ  
 Հօգին տրուելէն առաջ, յաջորդներուն ինտոր կըր-  
 նայ արուիլ : Եթէ Փրկիչը « Առէք Հօգին » ըսե-  
 լով անոնց վրայ փչած չըլլայ, « Արուն մեղքը թօ-  
 ղուք, թողուած ըլլայ » խօսքն ալ զրուցած չը-  
 լար. որովհետեւ աս երկու բանը մէկտեղ կ'երթան,  
 այսինքն Հօգոյն պարգևուիլն ու յիշեալ պաշտօնը :  
 Եւ թէ որ անանկներ ըլլայ որ զրուցեն թէ, Ան-  
 տարակոյս՝ առանց Հօգին ունենալու ան պաշտօնը  
 ո՛վ կրնայ գլուխ հանել. բայց աս աստուածային  
 յատուկ Պարգևը յաջորդարար յառաքելոց անտի  
 և անոնց պէս մեզի ալ եղած է և կ'ըլլայ : Ու-  
 բեմն ըսածնին թող ցուցընեն՝ կ'ըսենք, անոնց ը-  
 րածին պէս մեծապանջ նշաններով՝ ակներե հրաշք-  
 ներով և ուրիշ հզօր գործեր գործելով ու գալու  
 բաները առաջկուց իմացընելով, ևն : (Տե՛ս նաև  
 Առայ . խա . 22 , 23 ) : Արկորդ, մարդոց ա-  
 սանկ իշխանութիւն մը ունենալուն ալ կարօտու-

Թիւն մնացած չէ . և եթէ ունենան ալ , անիկայ բանեցընելու տեղ չկայ : Վանդի առաքելալները անգամ մը յայտնած ու հրատարակած են “Մտուծոյ բոլոր խորհուրդը” . և “( )դ տակար բան մը ետ պահած չունին” : Մըքայութիւն տանող մի և միայն ճամբան՝ մեղաց թողութիւն ստանալու մի միայն պայմանը լիովին ցուցուցեր են , որ է՝ ապաշխարութիւն առ Մտուած , և հաւատալ Տէր Յիսուս Վրիստոսի . ու նզովք դրեր են տարրեր աւետարան բարոզելու յանդգնողին վրայ , թէ՛ մարդ ըլլայ անիկայ կամ թէ և մինչև անգամ երկինքէն հրեշտակ մը ըլլայ . որով ցուցուցեր են թէ իրենցը անխախտ և անփոփոխ պէտք է մնայ մի և միայն Մետարան փրկութեան : Էտեւարար այլ ևս ո՛չ տեղ կը մնայ և ոչ առիթ՝ առաքելական յատուկ իշխանութիւնը բանեցընելու : Ընիկայ ինչ դիտումով որ տրուեցաւ անոնց , ան դիտումը անթերի կատարուած ու ընցած է նոյն ժամանակէն . անոնց գրութիւնները արդէն ամէն մէկ մարդը ունեցած որպիսութիւններուն նայելով որոշած են , զանիկայ դասելով կամ հաւատացելոց կարգը կամ անհաւտից , ապաշխարողաց կամ անզեղչից . և անոր մեղքերը ներուած կամ չներուած ըլլալն ալ ցուցուցեր են յիշեալ կարգերուն որմէ՛ն ըլլալուն նրկատմամբ . և անոնց արգէն տուած որոշումն ու վճիռը երկնից մէջ հաստատուն բան կը բռնուի , և անտարակոյս երկրիս վրայ ալ մէկ հանձար մը չկրնար զանիկայ խախտելու հնարք ձարտարել : Ինչ որ կը մնայ ընել՝ ամէն մարդուն իր վրայ ձգուած է , որչափ ժամանակ որ Մտուած ապաշխարելու միջոց տալ կը հաճի անոր : Մտուծոյ քաղցրութիւն ցուցուցած միջոցին մէջ՝ թէ որ մեղաւորը չարերուն կարգը թողլով Տէրօջը դառնայ , ողորմութիւն՝ ու անհաւատից վրայ հասնելու ծանր դա-

տապարտութենէն ազատութիւն կը գտնէ : (Թո՛ղ ուրեմն անոնք՝ որ սրբազան պաշտօնին մէջ մտեր են, առաքելական պատուէրին հնազանդելով « ուշադրութիւն ունենան կարգալու, յորդորելու, վարդապետութեան » : (Թո՛ղ կ'ըսեմ՝ չէ՛ թէ առաքելոց յատուկ եղած պաշտօնը ունեցած սեպուիլ ուղեւով, այլ անոնց խոնարհ ու քարեսիրտ օգիտվը տագորուելով՝ ինչ որ անոնք սորվեցուցած են և ինչպէս որ սորվեցուցած են, նոյները նոյն կերպով քարողեն ժողովրդոց . քանզի միայն ասանկ ընելովն՝ թէ՛ իրենք և թէ իրենց մտիկ ընողները կրնան փրկութեան հասնիլ :

# Խ Ո Ս Տ Ո Վ Ե Ն Ե Ն Ք



Անդքը Մատուճոյ դէմ՝ յանցանք մըն է . ուրովհետեւ բանականութիւնն ալ կը սորվեցընէ որ մարդ մը հաշտուիլ ուզելով՝ իր յանցանքն որ պիտի խոստովանի, պէտք է զբկեալ կողմին խոստովանի, անիրաւութիւնը որո՛ւ որ բրած է՝ անոր, ո՛չ թէ ուրիշ մէկու մը : Աւրեմն մեղանշելու մէջ բրածնիս Մատուճոյ դէմ՝ անիրաւութիւն ըլլալով բանը անոր խոստովանելու ենք : Մտոր թերեւս պատասխանուի թէ, Մտուած ասանկ բաները փոխանորդի ձեռք ալ կրնայ ընել, և ահա՛ քահանան, որ տեղակալ կամ փոխանորդ սահմանուած է անոր կողմանէ : Բայց՝ աս անանկ բան մըն է որ հաստատութեան կիստ կարօտ է . հաստատել կ'ուզէ՝ կ'ըսեմ, թէ ան այնպէս կարգադրեր է որ՝ իր ահաւոր ատուածութեանը ու անհուն իշխանութեանը դէմ՝ գործած մեղքերնիս և անօրէնութիւննիս մեր մեղսակից եղբայրներէն մէկուն խոստովանելով՝ իրեն խոստովանածի պէս ըլլանք : Այնքաւ բառը իր սովորական նշանակութեամբը հասկըցուած բռնելով՝ աշխարհիս վրայ մեղքեր ներելու իշխանութեամբ տուածնաշնորհեալ մարդ կամ ասանկ կարգ մը տարօրինակ մարդիկ ըլլալը սորվեցընող վարդապետութիւնը մոլոր սեպելնուս պատճառները մենք արդէն տուած ենք . ու այս գաղափարին վրայ առաւել հաստատուելու պարտաւորութիւն և իրաւունք ունինք սա բանով որ Սրբազան Սատեանք մեղքերնիս Մատուճոյ խոստովանելը միօրի-

նակ կը քարոզեն , ու անոնց և ո՛չ մէկուն մէջ՝ առանձին խօսքով մը գո՛նէ չպահանջուիր մեզմէ որ քահանային խոստովանանք ըլլանք : Աթէ Սուրբ Վիրքերը բաց և յայտնի կերպով պատուիրէին բոլոր մեղքերնու խոստովանութիւնն այսքան ատենն անգամ մը և մի ըստ միօջէ քահանային մէկուն ընել , ասիկայ նեցուկ մը կ'ըլլար Վահանան թողութիւն տալու իշխանութիւն ունի ըսած խօսքերնուն : Սակայն բանը ասանկ չենք գտներ , բովանդակ Մատուածաշունչին մէջ՝ մեղքերնիս քահանային խոստովանելու պատուէրի մէկ տկար նըշոյլն անգամ չկայ : Ըսաջ մեղքեր ներելու առանձինն Մատուծոյ յատկացեալ իշխանութիւնը վրանին առին՝ անիկայ շատ անգոր պատճառներու վրայ հիմնելով . յետ այնորիկ ելան աս կարծեցեալ իշխանութեանը որպէս մէկ բնական յաւելուած մը՝ խոստովանանքը վրան աւելցուցին , որ ասոնց ո՛չ մէկը ու ոչ միւսը ամենեին հեղինակութիւն չունին Մատուծոյ Վիրքէն : Աթէ Հին Ատակարանին զրուցածներուն նայինք , կը տեսնենք որ Մատուծոյ դէմ գործած մեղքերնիս՝ Մատուծոյ խոստովանելու ենք : Ըհա՛ Սաղմոսերգուն խօսքը . “ Իմ մեղքս քեզի յայտնեցի , ու իմ անօրէնութիւնս չճածկեցի . ըսի թէ՛ Տէրօջը պիտի խոստովանիմ մեղքերս . ու դուն թողուցիր իմ մեղքիս անօրէնութիւնը” : ( Սաղ . ԼԹ . 5 : ) “ Աս գիտեմ իմ անօրէնութիւնս ու իմ մեղքս միշտ իմ առջիս է : Վեզի , մինակ քեզի մեղանչեցի , ու քու աչքերուդ առջևը չարութիւն ըրի , որ արդար ըլլաս խօսքիդ մէջ , ու անարատ ըլլաս դատաստանիդ մէջ ” : ( Ընդ ծա . 3 , 4 : ) “ Ատացուց գրքին մէջ շատ պատուհասներ կը սպաննացուի Խորայէլացուց ազգին , որոնք երբ Մատուծոյ անհնազանդութիւն ընէին՝ գլխունուն պիտի գար , և դարձեալ Մատուծոյ ողորմութիւնը անոնց



կը խոստացուի , որն որ պիտի վայելէին՝ թէ որ յանցանքներնուն վրայ ապաշխարելով զանոնք խոստովանէին : ( Գլխ . ինչ . 33 , 40—44 : ) Գաւնիէլ մարգարէին կենաց ժամանակը յիշեալ սպանալիքները 'ի գործ դրուեցան , անիկայ՝ աս առիթով ըրած աղօթքներուն և Խարայելի Աստուծոյ առջին ըրած խոստովանութեանը մէջ՝ Սովսիսի օրէնքին պահանջած մեղաց խոստովանութեան ինչ ըլլալը մեզի իմացուցած է : Բուն անոր խօսքն է աս . “ Իմ Տէր Աստուծոյս աղօթք ըրի , խոստովանեցայ , ու ըսի . Ո՛հ Տէր՝ մեծ և ահաւոր Աստուած . . . մենք մեղք գործեցինք , անօրէնութիւն ըրինք ու ամբարշտութիւն ըրինք . . . ո՛վ Տէր՝ երեսի ամօթ կը վայլէ մեզի , մեր թագաւորներուն , մեր իշխաններուն ու մեր հայրերուն , որովհետև քեզի դէմ մեղք գործեցինք ” : ( Գաւն . թ . 4—8 : ) Յետոյ յորդորեց Աքարը՝ որ իր մեղքերը խոստովանի . որո՞ւ . իրե՞ն . ո՛չ . ո՛չ իրեն՝ ոչ քահանայապետին՝ ոչ ալ ուրիշ մէկու մը , այլ Տէրոջը . ասանկ ըսաւ անիկայ . “ Հիմայ Խարայելի Տէր Աստուծոյն փառք տուր ու խոստովանէ՛ անոր ” : ( Յէս . Է . 19 : ) Կը կարգանք թէ Ազրաս ևս Գանիէլին նման իր մեղքերն ու իր ժողովուրդինները կը խոստովանի՝ այսպէս ըսելով . “ Օնկան վրայ եկայ ու ձեռքերս իմ Տէր Աստուծոյս առջևը տարածեցի , ու ըսի . Ո՛վ Աստուած իմ՝ կ'ամչնամ , ու իմ երեսս քեզի վերցընելու չեմ համարձակիր՝ ո՛վ Աստուած իմ . վասն զի մեր անօրէնութիւնները մեր գլխէն վեր բարձրացան , ու մեր յանցանքը մինչև երկինքը ելաւ ” : ( Ադք . թ . 6 : ) Ու ժողովուրդն ալ կը յորդորէ նոյնպէս ընելու՝ ըսելով . “ Գո՛ք մեղք գործեցիք . . . հիմայ ձեր հայրերուն Տէր Աստուծոյն առջևը ձեր մեղքերը խոստովանեցէ՛ք , և անոր հաճոյ եղածը ըրէ՛ք ” : ( Անդ . Ժ . 10 . 11 : )

Երդ՝ ահա գտանք որ Հին Ատակարանին տնտեսութեան տակը՝ մեղքը միշտ Ըստուծոյ կը խոստովանին եղեր : Յայտնի կ'երևնայ որ ան օրերը Ըստուած երկրիս վրայ տեղակալ մէկ հատմ' անգամ չունի եղեր , որ մարդիկ իրեն երթանուն տեղը անոր դիմեն , ու մեղքերնին ականջն 'ի վար խոստովանին : Ըն ատենները երբ մէկ առիթով մը խոստովանութիւնը կը յիշուէր՝ կամ երբ խոստովանելու պատուէր մը կը արուէր , առ հասարակ ամէն մարդ կը հասկընար թէ՛ անիկայ ո՛չ թէ մարդոց կամ ուրիշ էակի մը , հապա Սիրտերը Վննողին պիտի ըլլուի , որն որ երբեք ակնառութիւն չընելու և իւրաքանչիւր անձին իր գործքերուն նայելով կը հատուցանէ . ինչպէս Ովսեայ մէջ՝ “ Աս պիտի երթամ ու իմ տեղս դառնամ , մինչև որ անոնք իրենց յանցաւոր ըլլալը խոստովանին , ու իմ երեսս փնտռեն ” կ'ըսէ Ըստուած : ( Ով . Ե . 15 : ) Աս ասանկ՝ երբոր Աոր Ատակարանին մէջ մեղաց խոստովանութեան վրայ խօսք կ'ըլլայ , վերը զրուցուած նոյն կերպովը հասկըցուելու է : Աս ի՞նչ իրաւունքով նոյն բանը հոս մասնաւոր մտօք՝ և ան ալ Ըստուծոյ խօսքերուն ընդհանրութեանը հակառակ նշանակութեամբ անոնք , մինչդեռ ամենեւին տեղ մը ըսուած չէ որ Ըստուածաշունչ Վրոց աս մասին մէջ այսինքն՝ Աոր Ատակարանին մէջ տարբեր մտօք պէտք է հասկընալ : ( )րինակի համար . երբոր *io* Յով . *iw* . Գտունը կը կարդանք , “ Հապա թէ որ խոստովանինք մեղքերնիս , հաւատարիմ ու արդար է անիկայ մեր մեղքերուն թողութիւն տալու , և մեզ բոլոր անիրաւութենէն սրբելու ” , աս խոստովանութիւնը որով ըլլալու է պէտք է հասկընանք : Ընանկ մարդ մը , որ խոստովանանք ըսուած բանը քահանային կ'ըլլուի սորվելու է , ու յետ այնորիկ արձակումն ալ նմանապէս քահանայէն

կ'ըլլայ ճանչցած է միշտ՝ ասիկայ կարգալու ատենը գուցէ իսկոյն միտքը խոստովանարանին (խոստովանանք տօլապը՝ ըստ պապականաց) ու քահանային ականջն 'ի վար շնչալուն պիտի երթայ : Բայց խօսքը ինքնին ամենեին ո՛չ քահանայից կը նայի և ո՛չ առաքելոց . ու թէ՛ առջևէն յիշուած՝ և թէ՛ ետևէն եկող խօսքերուն մէջ ալ մէկ անանկ զրուցուածք մը չկայ, որ գո՛նէ անոր զօրութեամբը կարող ըլլանք սորվիլ թէ անոր նշանակութիւնը քահանայից խոստովանիլ է : Թէպէտ աս խօսքը գրողը ան մարդոցմէ մէկն էր, որոնց մեր փրկիչը զրուցեր էր՝ «Որուն մեղքը թողուք, թողուած ըլլայ» : այսու ամենայնիւ՝ ո՛չ յիշեալ տեղը և ոչ ուրիշ տեղ մը մարդիկը յորդորած ունի երանելին, որ իրեն կամ պաշտօնակիցներէն մէկ ուրիշին առջևն երթան ու մեղքերնին խոստովանին, նմանապէս միւս առաքեալներն ալ ասանկ յորդորանք մը տուած չունին : Հապա ընդ հակառակն Յովհաննէսին աս զրուցած խօսքէն ուղղապէս և դիւրաւ մը սա կ'իմանանք՝ որ խոստովանութիւնը Մատուծոյ ըլլալու է, ու աս այնչափ յայտնի կ'իմանանք հոս՝ որչափ որ Հին Ատակարանին մէջ անոր նման խօսքերէն : Ուստի պէտք է խոստովանինք՝ որ մեղքը խոստովանելու վրայով՝ Նոր Ատակարանին մէջ գտնուած միակերպ վարդապետութիւնը յար և նման է Հին Ատակարանին մէջինին . և ականջալուր խոստովանանքի սովորութիւնը, որ ետքի ատենները դժբաղդարար այսքան տիրապետած է շատ տեղեր, ո՛չ Հին Ատակարանէն կը սորվուի՝ ո՛չ ալ Նորէն :

Եւ մինչև հոս հասկըցընելէն ետև՝ որ խոստովանութիւնը Մատուծոյ ըլլալու է, կարծենք ալ հարկ չմնար զրուցել թէ՛ խոստովանութեան դիտումը մեր ըրածն ու չըրածը ամենագիտին Մատուծոյ գիտցընել չէ . որովհետև «Եմէն բան բաց ու յայտնի է

անոր աչքին առջևը , որուն հետ է մեր գործը ” :  
 ( Եբր . 7 . 13 : ) Ինչպէս որ Սաղմոսերգուն ալ  
 կը զրուցէ . “ Ո՛վ Տէր՝ իս քննեցիր ու ճանչցար :  
 Գուն գիտես իմ նստիլս ու ելլելս . իմ խորհուրդս  
 հետուանց կ'իմանաս : Իմ շաւիղս ու պառկիլս կը  
 քննես ու իմ բոլոր ճամբաներս գիտես : Ինչու որ  
 բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ : Ըհա՛մ ո՛վ Տէր՝  
 դուն ամէնը գիտես ” : ( Սող . ճլթ . 1—4 : )  
 “ Ի՞նչ որ ըսեմ . Իրաւցընէ՛ խաւարը զիս պիտի  
 ծածկէ , ան ատենը գիշերն ալ լոյս կ'ըլլայ իմ  
 բոլորտիքս : ( Ըհա՛մ ճլթ . 11 : ) Ուստի մեր  
 խոստովանութիւնները ո՛րչափ յետին ճշդութեամբ  
 և որչափ մտերամասն ալ որ ըլլան՝ թէ՛ յայանի  
 թէ ծածուկ մեղքերնուս Ըստուծոյ ունեցած կա-  
 տարեալ տեղեկութեանը վրայ բան մը չեն կրնար  
 աւելցընել : Ա՛յսն որոյ անոր պահանջած խոստո-  
 վանութիւնը՝ մեր ըրած բաները սոսկ պատմելնուս և  
 անոնք մէկիկ մէկիկ շրթամբ յիշատակելնուս վրայ  
 չկայանար , հապա սս բանին վրայ կը կայանայ՝ որ  
 մեր յանցաւոր ըլլալը՝ ուստի և արդար իրաւամբ  
 պատժոյ արժանի ըլլալնիս աղէկ մը զգանք , և սս  
 զգարմիլս ամօթով զարնուիլք ու սրտերնիս կոտ-  
 րի , ինչպէս որ Եղեկիէլ մարգարէն կ'ըսէ . “ Չեր  
 գէշ ճամբաներն ու ամբարիշտ գործերը պիտի յի-  
 շէք և ձեր անօրէնութեանցը համար ու ձեր պղծու-  
 թեանցը համար դուք ձեզմէ պիտի զգուիք ” : ( Ը-  
 հա՛մ . 19 . 31 : ) Ըհա՛մ Սովսէսին խօսքն ալ . “ Ի՞նչ որ  
 ան ատենը անոնց անթղիատ սրտերը խոնարհին և  
 իրենց անօրէնութեան պատիժը ընդունին . . . ” :  
 ( Ըհա՛մ . ի9 . 41 : Տե՛ս ևս Եղեկի . թ . 33 : )  
 Պէտք է աղէկ միտք առնենք ասիկայ՝ որ մեղք  
 գործած ըլլալնիս խոստովանիլը ուրիշ բան է , գոր-  
 ծած՝ մեղքերնուս վրայ սպառնացուած պատժոյն ար-  
 ժանանալնիս զգալն ուրիշ բան է . ասոնք՝ իրարմէ

տարբեր բաներ են : Մեղապարտ ըլլալնիս սրտանց չճանչցած լոկ խոստովանելը՝ օգուտ մը չընելէն զատ , անաժօթաբար նախատինք տալու յանցաւորութիւնն ալ կը բարդէ արդէն ըրած յանցանքնուս վրայ : Եսիկայ ի՞նչ ընել է . յանցանքը Եստուծոյ վրայ նետելով , ու մանաւանդ ամբարիշտ ժպրհուժեամբ մը զԵսիկայ արհամարհելով՝ մեր անձն արդարացընել է : Այլ ասանկով , ուրիմն ներսիդինիս յանցաւորութեան խորին և իսկական ըզգացմունք մը չունեցած՝ Երարչին դէմ մեր գործած մեղքը խոստովանելով , ան մեղքը աւելի ծանրացուցած կ'ըլլանք . ուր ընդհակառակն պէտք է մեղի ինքնապարսաւ ողւով՝ գառնադին վշտաւ և սաստիկ պատկառանօք ինքզինքնիս ցածցընել , և ըրածնուս բոլոր ամօթն ու նախատինքը մեր մեղուցեալ անձերուն վրայ առնել :

Գարձեալ . կրնանք տեսնել որ բանին բնութիւնովը մեղաց խոստովանութիւնը քիչ շատ հրապարակաւ ալ ըլլալու է . այսինքն՝ ըստ իմիք մեր ընկերներուն առջեւ ալ պէտք է խոստովանինք մեղքերնիս : Եսել չեմ ուղեր քահանայի մը առջև առանձնակի , հապա մեզ ճանչցողներուն : Այլ անոնց ալ՝ բոլոր գաղտնի մեղքերնիս մի ըստ միոջէ թուել ու տեղն 'ի տեղը գիտցընելը վրանիս պարտք դրուած չէ՝ քահանային խոստովանանք ըլլողներուն ըրածին նման . հապա ըսածս աս է . որովհետեւ մեր վարքը առաջկուց գիտցող մարգիկը անշուշտ մեր բռնած չար ճամբաներն ալ տեսած կ'ըլլան . ուստի եթէ ըլլայ որ ետքը խելուրնիս գլուխնիս գալով մեր անզգամ վարուցը վրայ ազդու և ուղիղ զգացումներով արթըննանք , անանկ որ զանոնք Եստուծոյ առջևը խոստովանինք խոնարհութեամբ և անոր պահանջած հղանակաւ , անտեսնը անտարակոյս ճանչուորներնիս ալ իրը պիտի

Հասկընան , ու ծածկելն անկարելի կ'ըլլայ : Բուն  
 իսկ մեր կենցաղավարութիւնը բանն երևան կը  
 հանէ , ու մեր դէմքին երեւոյթները կը մատնեն մեզ .  
 քանզի դէմքը մարդու սրտին ցուցակն է : Մէկը՝  
 երբ իր մեղացը համար ինտոր որ պէտք է կը վշտա-  
 նայ , և անոնց վրայ իր ունեցած պարտուպատշաճ  
 զգացումներէն սիրտը գրաւուած ըլլալով՝ ինքզինքը  
 խոնարհեցուցած է , ու առանձնութեան մէջ կը  
 սգայ անոնք ըրած ըլլալուն համար , ասանկ ատեն-  
 ները՝ ալ " իր դէմքին հպարտութիւնը " գացած կ'ըլ-  
 րայ : Ըստուհետեւ՝ այլ ևս ան առաջի ամբարտա-  
 ւան , ինքնահաճ կամ խրոխտ տեսքը կամ ան ան-  
 փոյթ երեւոյթը չես նշմարեր անոր վրայ : Ընկայ՝  
 այլոց առջև ալ իր Ըստուծոյն՝ իր մեծ բարերարին  
 յարգանացն ու փառացը նկատմունքը մէկդի ձգե-  
 լով անարգ ապերախտութեամբ մը շարժած ըլ-  
 լալուն համար , պարտաւոր է անոր որ՝ որ ընկեր-  
 ներու գործակցութեամբ և որոնց առջև որ զանի-  
 կայ անպատիւ ըրեր է , ան նոյն տեղերը խոստո-  
 վանի իր ըրածները , և նոյն մարդոց պէտք է  
 հասկըցընէ՝ որ ան իր առաջքի անառակ վարմունք-  
 ներուն համար ինքզինք կը մեղադրէ , և հիմայ ան-  
 ձամբ զանձն կը դատապարտէ : Ըսանկ մէկը բոլոր  
 իր չար ճամբաները կը ձգէ , և ամէնը կը տեսնեն  
 անոր ասանկ ընելը ու պատճառը ևս կ'իմանան :  
 Ըստ . եթէ մեր անզգամութենէն զգաստանալով  
 ինչ մեղաւոր արարածներ ըլլալնիս ճշմարտապէս  
 իմանանք , ու ինքզինքնիս Ըստուծոյ առջև անկեղ-  
 ծաբար խոնարհեցուցած որ ըլլանք , աս բանը չը-  
 կրնար մեր ընկերներէն ծածուկ մնալ : Բայց աս  
 որչափ տարբեր բան է քահանային մէկուն ականջն  
 ի վար դաղտուկ մը փսրլտալէն : Ըփս՞ս , ատի-  
 կայ հաւատարիմ ճշդութեամբ ընող որչափ մար-  
 դիկ մեր աչաց առջևը ամէն որ կը տեսնենք , որոնց

մինչև անգամ ճանչցած բանը չէ մեր յիշած բուն  
խոստովանութիւնը :

Վաջ յայտնի է որ մեղքերնիս Մատուց խոս-  
տովանելէն զատ՝ միեանց ևս խոստովանելու յա-  
տուկ պատուէր ունինք Մատուածաշունչ Սուրբ  
Վիրքէն . ինչպէս Յով . Ե . 16 տունին մէջի խօսքը :  
Մ և ասոր նման ուրիշ խօսքեր շատ հեղ իբր  
յաղթողաբար յառաջ քշուած են՝ կարգաւորաց  
առջև խոստովանելու ծէսը Սուրբ Վրոց վկայու-  
թեամբ հաստատելու . բայց յայտնապէս առանց ի-  
րաւանց, ու իրաւունք ըսուած բանին մէկ թեթեւ  
ստուերն անգամ չունենալով : Ընթերցողին միտ-  
քը եթէ կողմի մը քաշուած չէ արտաքին ներգոր-  
ծութենէ մը, աս խօսքին մէջ պարզապէս սա գե-  
ղեցիկ պատուէրը պիտի տեսնէ, որ մնաս տուած  
կամ վշտացուցած ընկերնուս քովն երթալով՝ մա-  
նաւանդ երբոր անիկայ քրիստոնեայ եղբայր մը ե-  
ղած ըլլայ, ըրած յանցանքնիս հեղութեամբ խոս-  
տովանինք անոր, և տուած մնասնուս հատուցումն  
ալ ընենք՝ որչափ որ ձեռուրնուս կու գայ : Ինտոր  
մեծ Հաշտարարն մեր Վրիստոս ինքը մարդասի-  
բաբար կը յորդորէ ըսելով՝ « Ի՞նչ որ քու ընծադ սե-  
ղանին վրայ կը բերես, ու հոն միտքդ կու գայ՝ թէ  
քու եղբայրդ քու վրայ սրդողած է, ձգէ՛ քու ըն-  
ծադ սեղանին առջև, գնա՛ առաջ եղբօրդ հետը  
հաշտուէ՛, ու ետքը եկուր որ քու ընծադ մատու-  
ցանես » : ( Սուրբ . Ե . 23 , 34 : ) Եւ ասանկ  
գէպքի մէջ՝ ո՛չ միայն մէկ կողմը, հապա երկու  
կողմն ալ փոփոխակի պարտաւորութեամբ մը կա-  
պուած են իրարու . մէկը խոստովանելու, և միւսը  
ներելու պարտաւորութեամբ . « Ի՞նչ որ » կ'ըսէ  
« քու եղբայրդ ձեզէ՛ս Կէ՛մ մեղանչէ, յանդիմանէ  
զանիկայ, ու թէ որ ապաշխարէ՛ ներէ՛ անոր :  
Եւ թէ որ եօթն անգամ բեղի գէ՛մ մեղանչէ՛ ու

եօթն անգամ դառնայ քեզի և ըսէ , կ'ապաշխարեմ , ներէ՛ անոր" : (Վարդ. Ժէ. 3, 4) Սատեթէոսի աւետարանը կ'իմացնէ որ՝ առ խօսքը Պետրոսին սա հարցմունքին պատճառաւ մէջ բերուած է . "Տէ՛ր՝ քանի՞ անգամ թէ՛ որ եղբայրս ինձի մեղանչէ՛ ներեմ՝ անոր , մինչև եօթը անգամ : (Նիսուս անոր ըսաւ . քեզի չեմ ըսեր՝ թէ՛ մինչև եօթը անգամ , հապա մինչև եօթանասուն անգամ եօթը" : (Սարգ. Ժը . 21, 22) Ըստուծոյ խօսքին առ կտորին անգամ դիմելու համարձակեր են երբեմն՝ Սարգ Վերքը դուք չէք հասկընար ըսողներէն , հաստատելու համար թէ քահանայ մեզք ներելու զօրութիւն ունի , և թէ ժողովուրդին անոր ասոր դէմ գործած մեղայր խոստովանութիւնը ինքը ըսելու իրաւունք ունի , և ուզեր են՝ որ ժողովուրդն առ տեղը սոյնպէս հասկընայ : Իսոյց ո՞վ կրնայ հաւատալ՝ որ իրենք իրօք ասանկ կը հասկընան , առ ի՞նչպէս նկատուի ունենալ Սարգ Վերք աստուածային ներշնչութեանը , որուն յարգը իրե իրենք միայն աշէկ ճանչցող ըլլալու պէս՝ չեն թողուր որ պարզամիտ հասարակութիւնը իր հասկըցած իմաստովն ասնէ մէջի խօսքերը : Սակայն յիշեալ խօսքը յայտնապէս միայն անանկ յանցանքներու վրայօք է , որ ուրիշները մեր անձերուն դէմ գործած կ'ըլլան , և անկէ հնար չէ սորվիլ որ մարդիկ ուրիշներուն դէմ ըրած յանցանքներնին ժողովուրդով՝ մեզ առջին գալու ու զանանք խոստովանելու են , և ան՝ թէ որ քահանայական պաշտօն ունինք : Արեւն կարգամ հարցմունքին առ կտորը՝ Վարդանի՞ անգամ թէ՛ որ եղբայրս մեղանչէ ինձի՛ չէ՛մ՝ ներեմ՝ անոր" : Այլ մեր Տէրը՝ վրայ բերած հետախայ խօսքին վերջը կը ցուցնէ որ առ պարտաւորութիւնը ո՛չ միայն առաքելոց ու աւետարանին միւս պաշտօնեկից վրայ դրուած է , այլ ամեն



մէկ մարդու հաւասարապէս հարկ է ասանկ պարագայի մէջ ներել . “Մասնկ ալ իմ երկնաւոր Հայրս պիտի ընէ ձեզի , թէ որ ձեր սրտերէն չէք թողուր ամէն մէկը իր եղբօրը իրենց յանցանքները ” : ( Ստք . ԺԲ . 18 , 35 , ) Պողոս առաքեալ ալ կ'ըսէ . “ Սէկզմէկու հետ անձի եղիք , զթած , ներելով Տէրի՛ն , ինչպէս որ Մատու՛մ Քրիստոսով ներեց մեզի : ( Եփ . 2 . 32 , )

Նոր Ատակարանին մէջ մեղաց խոստովանութեան վրայօք երկու ուրիշ զրուցուածքներ ալ կան . և աղէկ կ'ըլլայ որ անոնց վրայ ալ քիչ մը խորհրդածներ հաս , ու տեսներ՝ թէ անոնցմէ կրնանք սորվիլ խոստովանանքի արարողութիւնը : Մտաջինը Հոգիականնէս մկրտչին քարոզութեանն ու մկրտութեանը գացողներուն համար զրուցուած է , և է այս . “ Ար մկրտուէին իրմէն Հորդանան գետին մէջ , ու իրենց մեղքերը կը խոստովանէին ” : ( Ստք . 7 . 6 , ) Մ. յո . բայց որո՞ւ կը խոստովանէին . Հոգիականնէսին , թէ Մատու՛ց : Մ.ս խօսքը կրնայ ըլլալ որ առաջին նայուածքով ծուռ հասկըցուի՝ ականջալուր խոստովանութեան նպատաւոր կերպով մը , և գուցէ՝ Նոր Ատակարանին մէջ բոլոր ուրիշ խօսքերէն աւելի զիրութեամբ աս կերպով հասկընալու կողմին տարուի : Սակայն քիչ մը խորհրդածութիւնը բաւական կ'ըլլայ իմացընելու՝ որ աս տեղ յիշուածը գլխովին տարբեր է ան ծիսական խոստովանանքէն , որն որ քահանային մեղաց թողութիւն տալու իշխանութեանը հաւատացողները այս օրուան օրս իրրեւ փրկարար կանոն բռնած են , և յատկացեալ ժամանակներուն անխափան կը կատարեն : Հիմակուանները կարգաւորին կը խոստովանին աս մտք՝ որ անիկայ իշխանութիւն առած է բոլոր մեղաց խոստովանութիւնները լսելու , ու ամենարձրելոյն Մատու՛ց անունովը թողութիւն

չնորհելու . թէ որ խոստացած արձակումը չըլլայ , ո՛վ խոստովանանքի կ'երթայ անոր : Յովհաննէս մկրտիչ մեղքեր ներելու իշխանութիւն չունէր . աս ասանկ ըլլալը պէտք է անոնք անգամ խոստովանին , որ կը հաւատան թէ՛ առաքելոց և անոնց յաջորդ կարծուածներուն աս վերին իշխանութիւնը տրուած է . քանզի ան « Որուն մեղքերը ներէք , ներուած ըլլայ » խօսքը դեռ ևս զրուցուած չէր : Յովհաննէս մկրտիչ առաքեալներէն մէկը չէր , հապա մարգարէից կարգէն էր : Ըստ յառաջընթաց մարգարէին պաշտօնը քրիստոնէական տնտեսութեանէն առաջ , ու անոր պատրաստութեանը համար էր . և քրիստոնէական տնտեսութեանէն առաջ մեղք ներելու իշխանութիւնը մարդոց տրուիլը մէկը չընդունիր : Թէ որ Հոգից քահանաները կամ մարգարէները և մանաւանդ Յովհաննէս մկրտիչ սովորութիւն ունենային Ըստուծոյ անունովը մեղքերու թողութիւն տալու , Վրիստոսի աս իշխանութիւնը իր վրան առած ատենը՝ ըրածը օտար բան մը չպիտի երևնար դպիրներուն : Եւ այդ սակայն կը տեսնենք որ բանը՝ առաջուց երբեք չլսուած ու բնաւ չգիտցուածի պէս զարմացուց անոնք , մինչև ըսին թէ « Ո՛վ է ասիկայ , որ հայհոյութիւններ կը խօսի . ո՛վ կրնայ մեղքի թողութիւն տալ՝ բայց միայն Ըստուած » : ( Գ . 1 . Ե . 21 : )

Ուրեմն ան խոստովանութիւնը՝ որ Յովհաննէսին աշակերտները կ'ընէին իրենց մկրտուած ատենը , դէպ'ի Ըստուած ուղղուած խոստովանութիւն մըն էր : Եւ աս միանգամայն մարդոց առջև կ'ընէին՝ անոնց ալ յայտնի ըլլալու համար , որովհետև հրապարակաւ կը դաւանէին իրենց նոր յառաջադրութիւնը , որ այնուհետև՝ ալ կենաց նորոգութիւնով պիտի քալեն : Ու Յովհաննէսին պահանջածն ալ՝ աս էր , և աս բանին կը մկրտէր ժողովուրդը

պատուիրելով անոնց՝ որ ապաշխարութեան ար-  
ժանաւոր պառւղ բերեն :

Սիւսը՝ Ափեսոսի մէջ Պօղոսին քարոզութիւնո-  
վը դարձի եկողներուն վերաբերութեամբ զրուցուած  
սա խօսքն է . “Աւ ան հաւատացեալներէն շատե-  
րը կու գային ու կը խոստովանէին՝ և իրենց ըրած-  
ները կը պատմէին” : (Վարձ . ԺԺ . 18 : ) Ըս  
խոստովանութիւնը՝ Յովհաննէսին աշակերտացը ը-  
րածին նման Ըստուծոյ ալ ու մարդոց ալ կ’ընէին ,  
ո՛չ թէ մէկդի քաշուելով առանձնակի առաքեալին  
կամ անոր պաշտօնակցացը մէկուն : Ըսիկայ հրա-  
պարակական և ճշմարիտ խոստովանութիւն մըն էք ,  
որուն համեմատ ցուցնելով իրենց գործքն ալ՝  
“Ախարդական բանի հետեողներուն շատերը գիր-  
քերնին կը բերէին՝ ամենուն առջև կ’այրէին” :  
Հոս անանկ բառ մըն ալ չկայ , որմէ մարգ կարե-  
նայ հետեցրնել՝ թէ խոստովանութիւնը գաղտնա-  
պէս առաքեալին եղաւ . ո՛ր կը մնայ սա հանել՝  
թէ առաքեալը մեր օրերը քահանայից ըրած կեր-  
պովը արձակում ալ տուած ըլլայ ան մարդոցը :  
Հապա՛ ինչպէս որ Յովհաննէս մկրտիչ մկրտու-  
թեան համար ապաշխարութեան խոստովանութիւն  
կը պահանջէր , նմանապէս առաքեալները Յիսուս  
Քրիստոսի վրայ հաւատք ու գէպ ’ի Ըստուած ա-  
պաշխարութիւն կը պահանջէին . և իրենց ունկն-  
դրացը սրտերը քննել ու ճանչնալ չկրնալնուն հա-  
մար՝ անոնց շրթունքէն ելած խոստովանութեանը  
կը նայէին , ու նոյն ասեւնը անոնց արտաքին գործ-  
քերուն մէջ ևս անանկ վկայութիւններ կը փնտռէին ,  
որոնք բարեգուշակ նշաններ կրնան համարուիլ  
Վրիստոսի վրայ սէր և իրենց մեղացն համար ըս-  
տոյք տրամուծիւն ունենալնուն : Աւ հոս աս դար-  
ձի եկող մարդոցը ըրածն ի՞նչ էր . ուրիշ բան  
չէր՝ միայն ներքին զգացումներնուն բնական արտա-

յայտութիւնը, ո՛չ թէ սովորութիւն եղած ծէս մը : Ես ալ դիտելու արժան է որ աս բանը տարօրինակ դէպքի մը պէս կը յիշատակուի . նա մանաւանդ խոստովանողին կողմանէ բոլորովին ըստ հաճոյից եղած գործի մը պէս . քանզի՝ կ'ըսուի « Այւ ան հաւատացեալներէն շատերը ( ո՛չ թէ ամէնքը ) կու գային ու կը խոստովանէին՝ և իրենց ըրածները կը պատմէին » : Ուր ընդհակառակն եթէ սուրբն Պօղոս սորվեցուցած ըլլար որ՝ անոնք իր առջևը գալով մեղքերնին չխոստովանած ու իրմէն արձակում չուռած՝ չեն կրնար երկնից արքայութեանն արժանի ըլլալ , ան առեմնը ամէնքն ալ ընելու էին , և անոնցմէ մէկը զանց առնելու չէր աս աննահանջելի գործը : Ընտարակոյս հաւատացելոց ամէնքը հաւատքնուն ու ապաշխարած ըլլալնուն ցոյցերն ունէին վրանին . իսկ շատերը այսչափին գոհ չըլլալով իրենց ազդու զգացումներէն դրդեալ յառաջ կու գային , ու հեթանոսական տգիտութեան օրերնուն մէջ ինչ անմտական և չար բաներ որ ըրեր էին՝ կը ցուցնէին :

Ե՛հա՛ այսպէս՝ եթէ բովանդակ Եստուածաշունչ Պիտրը սկիզբէն մինչև վերջին ծայրը քննութեան առնենք , բնաւ երբեք վկայութիւն մը չենք կրնար գտնել ցուցնելու՝ թէ ականջալուր խոստովանութիւնը ներշնչութիւն ունեցող սրբազան անձերէն պատուիրուած էր , կամ գոնէ անոնց օրինակովը հաւանութիւն առած էր : Այւ ինչ որ առաքելոց ու անոնց յաջորդներուն մեղք ներելու կամ արձակում տալու համար տրուած կարծեցեալ իշխանութեանը վրայով արդէն զրուցեցինք ու քննեցինք անցած թուղթերուն մէջ , նոյնը խոստովանանքին համար ալ կ'ըսենք որ՝ եթէ աս սովորութիւնը նոյն ինքն Տէրոջմէն կամ անոր ընտրեալ առաքելոցմէ հաստատուած բան մը ըլլար , ՚ի հարկէ

Սուրբ Գրոց մէջ անոր վրայով դրական վկայութիւն կ'ունենայինք՝ կամ Գործք Մաքելոցին մէջ, կամ չէ նէ՝ Մաքելական Ամակներուն մէջ : Մաքեալք՝ որ ամենայն հաւատարմութեամբ յատուկ խնամք կը տանէին օգտակար բան մը ետ չձգելու, սյնքան եկեղեցեաց վերաբերեալ իրերը կարգադրելու ատեն՝ նոյնպէս նաեւ իրենցմէ ստորին եղող եկեղեցական պաշտօնէից հրահանգ ու խրատներ աւանդած ատեննին, բնականաբար առիթներ գտած ըլլալու էին աս նիւթին վերաբերութեամբ զանազան բաներ խօսելու . աս մեծ նիւթին, որն որ մեր օրերը՝ ուր որ իբր պարտք մը հաւատացուի ու տիրէ՝ նոյն տեղի թէ՛ քահանայից թէ՛ ժողովրդոց այնքան ժամանակը կը զրուէ ու զանոնք այնքան կը զբաղեցընէ : Մ.Ս.՝, չենք կրնար երկբայիբ որ ասանկ առիթներ գտած ըլլալու էին, եթէ անոնց ժամանակներն ալ եկեղեցիներուն մէջ առ հասարակ տիրապետող սովորութիւն մը՝ եթէ Վրիստոսէն կամ առաքելոցմէ պարտք դրուած հարկաւոր ծէս մը ըլլար : Բայց ասոր ներհակ՝ առաքելոց խօսքերուն մէջ՝ անանկ պատուէրներ կը գտնենք, որ աս վարդապետութիւնը սորվեցընողներուն չէլնար . ըսել կ'ուզեմ՝ թէ որ աս վարդապետութիւնը սորվեցընող ըլլային իրօք, ան տեսակ պատուէրներ չպիտի տային : Օր օրինակ՝ Պողոս առաքեալ Տիմոթէոսին կ'ըսէ . « Բայց անոնք որ մեղք կը գործեն՝ ամենուն առջևը յանդիմանէ, որ ուրիշներն ալ վախնան » : ( ԽՏԻ. Ե. 20 : )

Աւտի կը հետևեցընենք որ ականջալուր խոստովանանքը՝ Մտուծոյ մեր վրայ դրած պարտքերուն մէջ չկայ . հասցա անխոհեմ մարդոց ինքնօրէն հաստատած մէկ հնարքն է, ու ամլաս ալ չէ . այլ ամենողբալին այն է՝ որ չար և քստմնելի հեռութիւններ բերելու ենթակայ եղող մէկ հնարք

մըն է, նման բոլոր ուրիշ շինծու յաւելուածներուն՝ որ մարդիկ ամենիմաստ Արարչին պատուէրներուն հետ զնելու յանդգներ են : Մէկը՝ որ իր խիղճը գաղտնի մեղքերով ծանրաբեռնեալ ու արատաւորեալ ըլլալով, բարեպաշտ բարեկամին քով կու գայ, և իր սիրան անոր բանալով խրատ մը կը խնդրէ, աս աղէկ բան է : Բայց ասիկայ ուրիշ գործ է, ու մահկանացու մարդը Աստուծոյ տեղ զնելով մեղաց թողութիւն ընդունելու համար անոր խոստովանանք ըլլալն ուրիշ գործ է, ինչպէս որ բազմաթիւ խաբուած մարդիկ կ'ընեն : Աս դրութիւնը, որ անհամար մարդոց մէջ կարգաւորաց տիրապետութեան սոսկալի միջոցը, ժողովրդոց բարեպաշտութեան փորձ, և վերստին եկեղեցւոյ մէջ ընդունուելու անձանց առաջին հարկաւոր ընելիքը եղած է, գլխովին անհիմն է, և անոր վրայ յոյսերնին զնողները՝ ՚ի վախճանի շատ խեղճութեամբ կորագլուխ մնալով դատարկ պիտի ելլեն : Աս ականջալուր խոստովանանքին վրայ հաստատուած մոլար հաւատքը յիշեալ սարսափելի վտանգն ունենալէն զատ՝ ըստ ինքեան միշտ փաստակարար ալ է շատ կողմանէ :

Ս նասակար է քահանային, որ խոստովանանքները կը լսէ . « Գէշ խօսքերը՝ աղէկ բարքը կ'ապականեն » ( Իս Կորնթ, ԺԵ . 33 ) կ'ըսէ առաքելը : Բայտ որում քահանաներն ալ ուրիշ մարդոց նման ենթակայ են փորձութեան մէջ իյնալու, ուստի և անոնց պէս իրենց ալ հարկաւոր է զգուշանալ՝ հսկել և ազօթել, որ փորձութենէն ազատ պահուին : Բայց եթէ անոնց իրաքանչիւրին ծոցը իր խոստովանորդոց գաղտնի յայտնի՝ և հին ու նոր մեղքերուն աւանդարանը պէտք է ըլլան, ինչպէս ուրեմն իրենք ալ աւրուելէն զերծ մնան : Ինչպէս կրնան սրտերնին անարատ ու մաքուր բռնել՝

երբոր դուրսէն այս պղտոր և պժգալի հասանքը շարունակ ներս կը թափի : Վրանի՛ քանի կարգաւորներ խոստովանաւեղոյն մէջ իրենց յայտնուած իրերով ու առջևնին բացուած ծածուկ խորհուրդներով փորձութեան մէջ ինկած ու կործանած են : Թեթե ու կասկածելի պատճառներով կրնա՞նք հաւատալ թէ ամենաբարի Տէրն մեր՝ որ «Սեղ փորձութեան մի՛ տանիր» ըսելով աղաչանք ընել կը պատուիրէ մեզի, իր միակ եկեղեցւոյն մէջ սյնալիսի պաշտօն մը սահմանադրած ըլլայ, որ անոր գործադրութիւնն ըլլայ սյոպէս, մարդուն մէկը նստի, ու իր խոստովանորդոցմէ այր և կին, ծեր և տղայ, ամուսնացեալ և չամուսնացեալ գան, ու զատ զատ անոր քով մէկ կամ կէս ժամ առանձնանալով, որչափ որ մեղք ըրած են նէ՛ անոնց ամենուն ալ դարչելի ու ապուկանիչ պատմութիւնը անոր ականջն՝ ՚ի վար մանրամասնաբար զրուցեն, և ան ալ անոնց ամէն մէկուն ըսածին ուշադրութեամբ ականջ կախէ՛ տեսնելու թէ ինչ պիղծ խորհուրդներ ու անկարգ ցանկութիւններ ունեցեր են, և թէ քանի՛ անգամ ու ինչ պարագաներու տակ և ՚ի՛նչ դիւրութիւններով խոտորեր են կամ թէ ուրիշները խոտորցուցեր են առաքինութեան բարի ճամբէն : Ինչքան միաբանութիւն ազանկ կարգադրութեան մը և քրիստոնէական կրօնից ամենամաքուր բնութեանը մէջ :

Այս վնասակար է խոստովանողներուն : Վրանզի ստախօսութեան փորձ փորձելու առիթ մը ղնել է անոնց առջին, և ան ալ՝ անհարկաւոր առիթ մը : Սարգիկ խարուելու ենթակայ եղող ընկերներնուն առջև իրենց պակասութիւնները զրուցած ատեննին՝ անոնցմէ խիստ գէշերը ծածկելու ու միւսներն ալ շնչին ու թեթե ցուցընելու փորձութեանը միշտ դիւրապատրաստ են : Աստի և խոստովանալի գա-

ցած ատեննին փոխանակ իրենց մեղքերէն ազատելու՝ շատ անգամ աս կերպ խարէութիւններով անոնց վրայ ուրիշ նոր մեղքեր ալ աւելցընելով՝ ետ կը գառնան : Իոսատովանանքը փաստակար է խոստովանորդոց նաև սա պատճառաւ՝ որ ստայօղ պատճառանք մը կ'ըլլայ զանոնք Աստուծմէ հեռու պահելու , որ ինքն է միակ աղբիւր ամենայն սրբութեան : Սաղմոսերուն ինչ կ'ըսէ . « Իայց Աստուծոյ մօտենալս բարի է ինծի » : ( Սաղմ . հփ . 28 : ) « Եմանապէս աղէկ է ամէն մարդոց Աստուծոյ մօտենալ : Արովհետև՝ աղօթք ընելով , յանցանաց խոստովանութիւնով , գոհաբանութիւնով , աստուածային խոստմունքներուն՝ հրաւերներուն՝ սպանալիքներուն՝ և ասոնց պէս ուրիշ բաներու վրայ խորհրդածութիւններ ընելով Ստեղծողին հետ մեր ուղղակի հաղորդակցութիւն ընելը՝ ամենալաւ ներգործութիւններ կը տպաւորեն մեր հօգուոյն վրայ , ու մեզ մաքրելով անոր կը նմանցընեն : Իայց երբոր կ'ուզենք ուրիշի ձեռօք ընել Աստուծոյ հետ մեր ունեցած գործը , այսինքն՝ թէ որ ուրիշ մը զնենք որ անիկայ մեր տեղը ընէ , աս շնաշխարհիկ ու աննման օգուտնիս կը փախցընենք : Մարդ չկրնար ըսել որ՝ խոստովանանքին բանեցուցած ներգործութիւնը մեր բնաւորութիւնները շիտկել կամ գոնէ սանձել է . քանզի ասոր ներհակը կը պատահի : Մարդիկ՝ իրենց նման մարդոցմէ մէկուն խոստովանանք ըլլալով թողութիւն կրնան ձեռք բերելը հաւատալովին՝ աւելի թեթեւ ու զուլնաքեսոյ բանի մը պէս կը նային մեռքին , և աւելի անսանձ յօժարութեամբ մը և շատ առաւել համարձակ ազատութեամբ կը գործեն զանիկայ , քան թէ ան ատենը՝ երբոր թողութիւն ստանալուն իսկական և միակ ճամբան լաւ հասկըցած ըլլան :

Եսկէ յառաջ եկած մէկ երևելի շարիքն ալ աս



է՛ որ անօրէնութեան գաղտնիքները դեռ ահաս պատանեկաց և միամիտ աղջկանց բանալով, և զսնոնք այն կանուխ հասակնուն մէջ ասոնց զաղիք գիտութեանն ընտելացընելով, անոնց դեռ անվարժ ու զիրահակ միտքերը կ'եղծէ ու կ'ապականէ : Խոստովանանքի առեւ քահանան Մարայ ամենասուրբ ըսելով՝ ան Օղջումն ըսուած երկար յօգուածը կը սկսի, ու 'ի բերան կը կարգայ առջևը նստող խոստովանորդոյն կողմէն, եթէ անիկայ բարեբաղդութեամբ սորված չըլլայ : Ըսոր մէջ հետզհետէ յիշատակուած ան սոսկալի և անլուր մեղքերէն, ու խոստովանորդոյն ըրածները միտքը բերելու մտօք քահանային հարցուցած տեսակ տեսակ հարցմունքներէն առիթ ունենալով շատերը անանկ ծածուկ մոլութիւններ սորվնր են ու չարութեան այնքան զանազան եղանակներուն տեղեակ եղեր են որ, եթէ աս առիթը չըլլար՝ կարելի է որ յաջողութեամբ անձանօթ մնային իրենց : Կ'սէ ինչպէս որ յառաջագոյն քիչ մը խօսք ըրինք՝ մեղանչելու փորձութեան մէջ իյնալու ան մասնաւոր վտանգին վրայով, որուն մէջ կը կենայ մէկ կողմանէ կարգաւորը՝ երբոր խոստովանանքի առթով փորձութեան պատճառ ըլլող անձանց հետ այնքան յաճախ և այնչափ մօտ նստելով թէ՛ այր ըլլան թէ կին՝ անոնց գաղտնի փսրլտուքը ուշի ուշով մտիկ կ'ընէ, միւս կողմանէ (իցէ՛ թէ չըլլար՝ բայց) չըկրնար ըլլալ որ կարգաւորն ինքը շինծու ջերմեռանդութեան հետ միացուցած քահանայական մեծանձնութեան պատկառելի կերպարանքին ներքև ծածկուող ամենաչար սրտի մը տէր ու իսկ և իսկ անզգամ մէկն ըլլալով (ինչպէս որ շատ ասանկներ երևան ելած են) իր քահանայական ներգործութիւնն ու խոստովանատեղոյն տուած նպաստաւոր պատեհութիւնը՝ պարզամիտ խոստովանորդիքը աւ-

րելու և անոնք գլխէ հանելու համար դործածէ :  
 Խիստ դիւրին բան չէ՞ անոր՝ որ ներողութիւն խոս-  
 տանալով դիւրահաւատ ոմանք համոզէ իր ցանկա-  
 ցածը անոնց կատարել տալու . քանզի "մեղաց ա-  
 մէն մասնակցութենէն արձակելու" կարողութիւ-  
 նը իր ձեռքն ըլլալը անգամ մը հաւատացեր են ա-  
 նոնք : Այլ մի թէ ցաւալի՛ բայց քաջածանօթ բա-  
 ներէն մէկը չէ՞ աս՝ որ շատ կարգաւորներ անամօ-  
 թաբար փորձ փորձեր են խոստովանանքի նստող  
 կնիկները գլխէ հանել ու դժբաղդաբար բաղմիցս  
 յաջողած ալ են :

## Ե Պ Ե Շ Խ Ե Ր Ե Ն Յ



Ըրձակման ու Խոտտովանանքի ետեէն պէտք է  
 Ըպաշխարանքին վրայ ալ խօսինք հոս, որն որ ա-  
 նոնց հետ մէկտեղ մի և նոյն մոլորական դրութիւ-  
 նը կը կազմէ՝ հակառակ Ըստուածաշունչ Սուրբ  
 Պրօց : Ըպաշխարանքն ընդունող և բանեցընող  
 երևելի մարդոցմէ՝ հեղինակութեան տէր եղող ո-  
 մանց յօրինած գրութեանցը մէջ տրուած սահման-  
 ներուն նայելով, Ըպաշխարանքն է Բէլէուլ սիւրբ,  
 Խոտտովանո-լի-ն յանցանոց, և Վճարումն :

Ընոնք՝ որ աս ծէսն իրենց կրօնից մէկ մասը  
 բռնած են, ապաշխարութեան համար մեզի տրուած  
 պատուէրը ասիկայ համարելով՝ մեծապէս կը սխա-  
 լին և չարաչար կը խաբեն : Այնչալ պատուէրին  
 մէջ՝ կը կարծեն թէ քիչ մը տրամութենէն ուրիշ  
 էականապէս սա մեծ բանը կայ . վճարումն, այսինքն  
 գործուած յանցանոց քաւութիւն ըլլալու համար  
 բաներ մը ընել . որպէս թէ մեզաց փոխա, նը  
 քաշել՝ որ անոնք ջնջուին : Ըյս ճամբան բռն Ը-  
 ներուն մէկ մեծ մասը ան աստիճան յանդգներ են  
 որ՝ մինչև Սուրբ Պրօց թարգմանութիւններնուն  
 մէկ քանիին մէջ՝ ոպտշխարէ-լի-ն սիօրինակ ոպտշ-  
 խարան, ոպշ-լ թարգմանած են : Ըս ընելը՝ ճըշ-  
 մարիտ ապաշխարութեան վրայով Սուրբ Ըետա-  
 րանին տուած ողջամիտ վարդապետութեանը մէջ  
 հիմնական մոլորութիւն մտցընել չէ՞ : Այրաւի ա-  
 պաշխարելու ենք, որպէս զի ներումն ըլլայ . ու թէ որ  
 մեղքերնուս վրայ անդարձ և անապաշխար մնանք,

Թողութիւն չկայ մեզի . բայց ասիկայ ճշմարիտ ապաշխարութեան համար կ'ըսեմ . և աս որչափ հեռու բան ան ինքնաչարչար ճնշումներով մարմինը զուր տեղը մորմոքելէն , որուն ընդհանրապէս ապաշխարանք անուն կու տան անոնք : Ապաշխարանք ըսածնին՝ ինչ մտօք որ մէջերնին առ հասարակ կը հասկըցուի ու կը գործածուի , կը բաղկանայ կատարուելու համար պատուիրուած զանազան արտաքին գործքերէ , որոնք մարդուս մտացը վիճակին վերաբերութիւն մը չունին . զոր օրինակ , քիչ մը դրամ ողորմութիւն տալ , այս ինչ աղօթքը այնքան անգամ կրկնել , Սուրբ Գիրքէն որոշեալ մաս մը կարդալ , տաժանելի ուխտագնացութիւն մը ընել , և կամ ասոնց պէս ուրիշ արտաքին բան մը : Աւ ասիկայ ըլլուելէն ետե՛ ալ ամէն բան լմնցած է , որուն մտքէն կ'անցնի՝ որ մտացը վիճակին հետ ևս ընելու գործ մը ունի : Այժմէ պատահի որ ապաշխարանքը գնող խոստովանահայր կարգաւորը ետքէն հարցընէ խոստովանորդոյն՝ թէ արդեօք դրած ապաշխարանքը քաշե՞ր է թէ ո՛չ , ինչ ոգւով ու ինչ սրտով կատարած ըլլալը շատ քիչ անգամ կը հարցընէ : Այսպիսի ապաշխարող մը՝ որ խօսքով միայն ապաշխարող կը կոչուի՝ և ո՛չ իրօք , վրան հարկ դրուած գործը սկիզբէն մինչև վերջը կը կատարէ՝ կամակա՛ր ըլլայ թէ դժկամակութեամբ , ինքնահաճութեան խորհրդով՝ և թէ ինքնապարսաւ մտածմունքով . զանիկայ անգամ մը լմնցո՛ց մի , ալ ազատեցաւ , ալ ևս խորհելու բանը չմնաց : Իսկ Աստուծոյ Գիրքին մէջ պատուիրուած ու բացատրուած ապաշխարութիւնը ասանկ չէ , և ասոր շնմանիր . հապա գլխաւորապէս մարդուս մտացը վիճակին կը նայի անիկայ : Անոր մէջ մտքի փոփոխութիւն կայ . ( Սոր . ին . 29 . ) և ան ալ սոսկ խորհրդոց կամ գաղափարի փոփոխումն չէ ,

որ ասիկայ շատ անգամ հասարակ գործքերնուն նկատմամբ կ'ընեն մարդիկ՝ սակայն առանց ինք իր անձերնին մինչև նոյն տտենը բռնած ծուռ ընթացքնուն համար դատապարտելու . հապա մէկ երջանիկ փոփոխութիւն մըն է , որ ո՛չ միայն գալիքին համար ուրիշ ճամբայ բռնել կուտայ , այլ և անանկ նոր ու մասնաւոր զգացումներ կը պարունակէ , որոնք անցած գացածները պարտուպատշաճ և խորին խորհրդածութեամբ աչքէ անցընելէ կը ծագին : (Մ զգացումներն են սրտի ցաւ , ամօթ և ինքզինք դատապարտել : (Տե՛ս Գ 1-ի . ԺԵ . 21 : ք Կ 1-ի . Է , 9 : Լ 1-ի . Լ 2 . 31 : 2-ի . 21 : ) Ըսիկայ՝ մանաւանդ Մտուծոյ նկատմամբ տեղի ունեցած մտաւոր փոփոխութիւն մըն է . “Գէպ ՚ի Մտուած ապաշխարութիւն քարոզեցի” կ'ըսէ Պօղոս : (Գ 1-ի . 21 : ) փոփոխութիւն մը , որ Սուրբ Հոգին միայն կրնայ գլուխ հանել աս կերպով . սրտերնիս լեցընելով աստուածային գերազանց լուսաւորութեամբ , ցուցընելով ու նաև զգացընելով մեզի՝ թէ ինչպէս սուրբ ու ինչպէս արդար է մեր ամենակալ Մարիչը , և թէ մենք պարտաւոր՝ տկար ու կարօտ արարածներս մեր յօժարակամ հնազանդութիւնն ու անկեղծ սէրը Մեկէ զլանալով ո՛րչափ մեծեղուն շարագործութիւն ըրած ենք : Մհա՛ այս եղանակաւ տեղի ունեցող ներքին փոփոխութիւն մը ՚ի հարկէ վարուց ալ փոխուիլն յառաջ կը բերէ առաքելոյն ըսածին պէս՝ “Սենք որ մեղքին մեռանք , ինչպէս գեռ անոր մէջը կենանք” : ( Հ 1-ի . 2 : )

Հարկաւոր է ևս հոս յիշել թէ՛ մեր նիւթին վրայով Մտուածաշունչ Գրոց բանեցուցած լեզուն շատ ազդու և բացայայտ է : Ս՛վ չընդունիր որ վարուց ու բարուց վերանորոգումն կայ Մտուծոյ պատուիրած ապաշխարութեան մէջ . ամէն մարդ

կ'ընդունի աս : Սակայն շատերը՝ Լ՛ս աշխարհիս մէջ կատարելութեան ժամաննն շին անկարելի է ըսելով, և աս պարագայէն իբր թէ ազատութիւն մը առած՝ յիշեալ վերանորոգման չափն ու կշիռը նուազցընելով, այնքան թեթեւ կամ անտարբեր բաներուն վրայ կը կայացընեն անիկայ, որոնցմէ ամենեին մէկը չկրնար հետեցընել մարդուն ճշմարտապէս ապաշխարած ըլլալը : Ըսով ըսել կ'ըլլայ թէ՛ ասանկ ընողները որպէս թէ հաւնած ու յանձն առած են որ՝ անառ հասարակ Ս'նք մարդ ենք ըսելով յառաջ քշուած կեղծուպատիր պատճառանքը դեմ ելլէ ու հակառակի ան ամէն քաջալերական զրուցուածքներուն, զորոնք Լ՛ստուածաշունչը միշտ առջևնիս դնելով՝ մարդիկը Քրիստոսով նոր արարածներ ընելու մէջ Լ՛ստուծոյ Հոգւոյն բանեցուցած զօրեղ ներգործութիւնը մեզի կը ճանչցընէ . այսինքն՝ կը սորվեցընէ որ թէ և տկար են մարդիկ, բայց Սուրբ Հոգւոյն ազդեցութեան ոյժովը սրբտի և բարուց լաւ վիճակ մը առնելու ընդունակ կ'ըլլան . վիճակ մը որ առաջքինէն յայտնի և որոշ տարբերութիւն կ'ունենայ : ( ք Կորնթ . Ե . 17 : Լք Է . ք . 10 : Լք Դ . 22—24 : ) Ըրգարե պէտք է ամէնքս ընդունինք որ՝ երբ մարդկային գործերը Լ՛ստուծոյ կատարեալ արգարութեան ճըշգոյ կշռորդով կշռուելու բերութիւն, բոլոր մարդիկ մեղապարտ ու բազմադիմի յանցանօք արատաւորած կը գտնուին, մինչև անգամ ամենէն կատարեալները : Ըսու ամենայնիւ՝ աս սուտ չհաներ ան անդրգուելի ճշմարտութիւնը թէ ճշմարիտ ապաշխարութիւնը վարուց ամբողջ վերանորոգման մը կ'առաջնորդէ : Ի՞նչ . անհնարին ու ակնկալութիւն չըլլուելու բաներ են ասոնք՝ որ կ'ըսուին « Լ՛ն որ կը գողնար, ալ թող չգողնայ », զինեմովը պէտք է զգաստանայ, և հայհոյիչը անձնանուէր ու ջերմեռանդ երկրպա-

գու ըլլայ և ջանացող՝ որ իս Ստեղծողին ա-  
նունը սուրբ ըլլայ, բղխջատհոս յիսջատհոս դառ-  
նայ, և ագահը արգար ու առատասիրտ: Աթէ  
բերնով ապաշխարած ենք աղաղակենք, սակայն  
միւս կողմանէ մարմնոյն տկարութիւնը փաստ առ-  
նելով՝ վրանիս զօրութիւն ստացող մեղքերուն մէջ  
իյնալու թող տանք ինքզինքնիս, մենք զմեզ յիմա-  
րաբար խաբած չենք ըլլար: Ըստուծոյ մեզմէ պա-  
հանջած ապաշխարութիւնն ուրիշ բան չէ՝ բայց ե-  
թէ բովանդակապէս վերանորոգուիլ մը. վերանո-  
րոգուիլ մը՝ որ առ Ըստուած և առ ընկերս եղած  
պարտականութիւններնուս նկատմամբ մեր ունե-  
ցած ստոյգ ճանաչմանը վրայ հիմնուած ըլլայ: Ընոր  
ամենաբարի կամացը այնպիսի սուրբ ու յարգական  
նկատում մը պէտք է ունենանք, և ՚ի վեր քան  
զամենայն՝ Վրիստոսով մեզի ցուցուցած հիանալի  
ողորմութեանը կողմանէ՝ իրեն ունեցած պարտա-  
կանութիւններնուս վրայ այնպիսի խորին ճանաչ-  
մունք մը ունենալու ենք, որ ասոնք ունենալովնիս  
՚ի ներքուստ մղուինք ետ պահուիլ գիտութեամբ  
մեղքի մէջ իյնալէն: Ըստ օրհնեալ արգիւնքը մեր  
վրայ յառաջ կուգայ Ըրարչին անսահման բարու-  
թեանը մէկ ուզիլ և ճշմարիտ տեսութիւնը ունե-  
նալէն. քանզի կը կարգանք որ անոր քաղցրութիւնը  
ապաշխարութեան կը տանի: ( Լուով . ք . 4 : )  
զՎրիստոս խաչին վրայ հաւատոյ աչօք տեսնելն է՝  
որ մեղաց բուն զօրութիւնը նուաճելու գործը գը-  
լուիս կը հանէ: Ըն որ առաքեալը իրեն համար  
կ'ըսէ թէ « Վրիստոսի հետ խաչը ելայ », ( Գաղ .  
ք . 19 , ) նոյնը ստոյգ է ամէն մէկ ճշմարիտ հա-  
ւատացելոց վրայ: Պօղոս խաչը ելած էր աշխար-  
հիս ու աշխարհս ալ անոր. ( Ընդ . 14 , ) ա-  
նիկայ մեռած էր մեղքին: Ըն ապաշխարութիւնը՝  
որ Ասայի մարգարէն կը քարոզէր, աս է, « Ըմ-

բարիչտը իր ճամբայէն՝ ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի ու Տէրօջը դառնայ” : ( Լւսայ . ծԵ . 7 : ) Մարդ մը քանի որ ուղիղ սրտիւ ու անլեղծաբար և հաստատուն որոշմամբ մը յառաջադրած չէ իր մտքին մէջ՝ որ ալ մէկդի ձգելով ամէն չար ճամբաները՝ Լստուծոյ ճամբուն մէջ քալէ , անոր քով ապաշխարութիւն ըսուած բանը չկայ : “ Երբ Կտակարանը անանկ կը ցուցնէ որ՝ իսկապէս քրիստոնէութեան դարձողները իրենց առաջքի գարշ ազտեղութիւններէն բոլորովին մաքրուած կ’ըլլան . “ Եւ դուք մէկ քանիներնիդ անանկներ էիք , բայց լուացուեցաք , բայց սրբուեցաք , բայց արդարացաք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը , ու մեր Լստուծոյ հոգիովը ” : ( Ի Կորնթ . 7 . 11 : )

Հիմայ ահա՛ւասիկ բանը շատ պայծառ կը տեսնենք Լստուծոյ Խօսքին մէջ . կը տեսնենք որ Լստուծոյ պահանջած ապաշխարութիւնը խաղ չէ եղեր , հապա բան մըն է եղեր : Քրիստոս մեռաւ “ Ար մեզ բոլոր անօրէնութիւններէն ազատէ , ու մաքրէ իրեն սեփհական ժողովուրդ ընէ՝ բարի գործքերու նախանձաւոր ” : ( Տիմ . 14 : ) Եւ երբ որ անիկայ մէկուն թողութիւն շնորհէ , միանգամայն ապաշխարութիւն ալ կուտայ անոր , ( տես Կորնթ . Ե . 31 , ) որն որ ստուգիւ յառաջ կը բերէ վարուց այնպիսի վերանորոգում մը՝ որ մարդոց տեսութենէն չկրնար փախչիլ :

Ճայց ան արարողութիւնները՝ որոնց անունն ապաշխարանք առջի դրեր են , աս յիշեալ պատուական ու ակներև արդիւնքները չունին . որովհետև անոնք ընողը՝ յաւետ ինքնահաւանութեան զգացմունքով կ’ընէ ընդհանրապէս՝ քան թէ անձը դատապարտելով , և ըրածը իրօք վարձուց արժանի գործ մը ընել կը սեպէ , և սոյն աս մաօք կ’աշխատի



անոր : Անիկայ երբ կը խորհի որ խոստովանանքն եղաւ՝ ապաշխարանքը քաշեց , ու քահանային օրհնենքն ալ առնելով մեղաց թողութիւնը ձեռք անցուց , ալ սիրտը կը զովանայ ու պատիր հանգիստ մը և մէկ մեծ թեթևնալ մը կը զգայ իր բեռներէն : Սակայն աս ամէն բրածներէն ինչ առաւ . սրտին մէջ նոր ու կենդանի զօրութիւն մը տպաւորուեցաւ՝ ետքը կրկին մեղաց մէջ իյնալէն զանիկայ զերծ ու ապահով ընելու . ամենեւին : Իսկը խօսելով՝ անիկայ բրած անօրէնութիւններուն համար ո՛չ կը դատապարտէ ինքզինքը , ո՛չ ալ անոնց վրայ նայած ատենը աւելի զգուանք մը կը զգայ՝ քան թէ ինչ որ յառաջագոյն կը զգար : Ասկէ աւելին կայ . ո՛չ ինքը , ո՛չ ուրիշ մէկը և ոչ իսկ արձակուամ տուող ու ապաշխարանք դնող քահանան ամենափոքր աստիճան ակնկալութիւն մը կ'ունենայ , կամ թէ ըսեմ՝ մէկուն մտքէն չանցնիր սպասել , որ անիկայ ալ ասկէ ետև մինչև հիմայ եղածէն աւելի բարի մէկը պիտի ըլլայ : Բոլոր արարողութիւններուն բրածն աս եղաւ՝ որ մարդը պատրաստուեցաւ իր մեղացը վաղեմի ընթացքը շարունակելու համար նոր աշխուժով մը վերստին ճամբայ ելլելու . չըսեմ թէ՛ դեռ անցած մեղքերուն ապաշխարանքը չլմնացած՝ ահա՛ իր մտքին մէջ անօրէնութեան նորանոր ձևեր կը նիւթէ ու արդէն խորհուրդները կը հասունցընէ . քանզի ցաւալի է յիշելը , բայց դժբաղդաբար եղած քաններ են : Թերևս այսինչ մէկը իրեն նախատինք կամ փնաս հասուցած կարծելով՝ անոր դէմ ռիսկալութեան ոգի մը պառկեցուցեր կը պահէ սրտին մէջ , և անհամբերութեամբ կը սպասէ որ իր մաքրութեան ծէսին օրերը ըմնալէն ետև՝ ալ թեթևութեամբ ու ազատութեամբ երթայ ու հատուցանէ իրեն եղած չարեաց տեղը չորեքպատիկ աւելի չարիք , աւա՛ղ եղկելի հոգւոյն :

Իսկ անիկայ եթէ Վրիստոսի դպրոցին մէջ ուսեալ  
և Վրիստոսէն մեղաց թողութիւն գտած մէկն ըլ-  
լար, ասոր ներհակը պիտի ընէր. սորված պիտի  
ըլար սա ազնիւ պատուէրին հնազանդիլ, որ կ'ը-  
սէ. «Մէկզմէկու հետ անո՛ւշ եղիք, գթած, նե-  
րելով մէկզմէկու, ինչպէս որ Մատուած Վրիս-  
տոսով ներեց մեզի»: (Լւիւս. Գ. 32):

Ինչ և իցէ՛ խոստովանանքին ժամանակը կը  
դառնայ նորէն կու գայ. անիկայ հիմայ ալ կ'եր-  
թայ խոստովանանք ըլլալու. կը նայիս որ խոստո-  
վանած մեղքերը դարձեալ նոյնչափ բազմաթիւ և  
նոյն աստիճան ծանր ու սարսափելի բաներ են, ինչ  
որ էին անցեալ անգամին: Ըսոր պատճառը. ո-  
րովհետեւ քաշած ապաշխարանքէն չսորվեցաւ մեղ-  
քէն սոսկալ ու զգուիլ, այլ ընդհակառակն՝ դնաց  
կրկին անոր մէջ նետեց ինքզինքը սուտ յոյսով ու  
աւելի համարձակութեամբ, համոզուած ըլլալով  
որ՝ նորէն նոյն տեսակ ապաշխարանքէն քիչ մը բան  
քաշելով դիւրին է վերստին թողութիւն ստանալ:  
Ըհա՛ւասիկ խոստովանանք ըլլալուն, արձակում առ-  
նելուն, ու ապաշխարանք քաշելուն բոլոր դրու-  
թեանը մահարեր պտուղները: Ըս ապականիչ  
դրութիւնն է՝ որ առ հասարակ կը գործածեն, և  
քրիստոնէութեան բովանդակ շէնքը իր վրայ դար-  
ձող աննման բանի մը պէս՝ հոգով չափ կ'աշխա-  
տին պաշտպանելու: Մարդը աս աշխարհիս բռնած  
ընթացքին յար և նման կը վարէ իր կեանքը,  
միայն թէ ատեն ատեն ընդմիջումներ ընելով խո-  
ստովանահօրը քով կ'երթայ՝ խոստովանանք ըլլալու,  
ու դոյզն ինչ ապաշխարանք քաշելով անկէ արձա-  
կում առնելու. քանզի ան կը կարծէ թէ կ'առնէ:  
Իր այս արարողութեան գործոյն ամենևին անփոյթ  
չըլլալով՝ տարին հեղ մը, երկուք, կամ քանի մը  
հեղ կը կատարէ. սակայն և այնպէս՝ աս մեքե-

նայօրէն կատարելները գրեթէ զանազանութիւն մը չեն տար իր ունակարար ունեցած վարուցը : Թէ որ ստախօս էր՝ ստախօս կը մնայ , թէ որ շնացող էր՝ շնացող կը մնայ . թէ որ հալածիչ էր՝ հալածիչ , թէ որ զրպարտող էր՝ զրպարտող , և թէ որ գինեմոլ , գող , յափշտակիչ , կամ նախատող կամ հարկանող էր , նոյնը կը մնայ : Քանզի թէև վշտալի՝ սակայն անուրանալի բան է որ խոստովանանքի երթալու սովորութիւնն անխափան կատարող անձանց շատերուն մէջը բոլոր աս գարչելի ախտերէն կը գտնուին : Ապաշխարանք քաշելէն սպասած օգուտնին իրենց չար բնաւորութիւններնուն բժշկուիլը չէ , հապա ան բնաւորութիւններնուն ցաւեցուցիչ հետեանքէն ազատիլը :

Բայց ասոնք երբ որ մեծ դատաստանին ներկայանան , ինչպէս պիտի ըլլայ : Անատենը լաւ պիտի տեսնեն որ՝ չկայ և չկրնար ըլլալ այնպիսի հանճարաւոր հնարք մը՝ որ մեզ մեզաց ամբարիշտ սէրէն ու անոր գործածութենէն չազատած՝ անոր միայն հետեանքէն փրկելու կարող ըլլայ : “ Այ թէ ամէն մէկը՝ որ ինծի Տէ՛ր Տէ՛ր կ'ըսէ , պիտի մտնէ երկինքին թագաւորութիւնը . հապա ան՝ որ ի՛նչ ինչո՞ւր ասո՞րս իմա՞ր իւր իստարի՛ : ” Եւ տերը ան օրը ինծի պիտի ըսեն . Տէ՛ր Տէ՛ր՝ չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք , ու քու անունովդ դեւեր հանեցինք ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք : Այ անատենը անոնց պիտի ըսեմ , թէ Այս բնաւ ձեզ չէի ճանչնար . Ինչո՞ւր ասո՞րս ասո՞րս ասո՞րս իմա՞ր իստարի՛ : ” ( Ստախօսութիւն , է . 21—23 : ) Անիրաւութիւն գործողներուն բոլորն ալ աս “ մէկդի՛ գացէք քովէս ” վերջին զարհուրելի վճիռը պիտի ըսեն . ինքզինքնին ինչի տեղ զնել կ'ուզեն՝ թող զնեն . մարդոց իսկական վիճակը կը նայուի հոն . ան ահեղ աւուր անաջառ դատաստանը չեն կրնար շրջել , և

ո՛չ ան ամենիմաստ մեծ դատաւորը պատրել :  
 Վանի որ չարութիւն ընելէն դադրած և բարու-  
 թիւն ընել սորված չեն , ( Եսայ . 16 , 17 , )  
 կ'ուզեն տարին հեղ մը՝ կ'ուզեն ամիսը հեղ մը՝ կ'ու-  
 ջեն ամէն օր թող խոստովանանք ըլլան , ապաշ-  
 խարանք քաշեն և արձակում առնեն , տակաւին  
 անոնց օգուտ մը չպիտի ընէ : Վանզի մտածէ՛  
 մէյ մը , երբոր մարդ մը ունակաբար ստախօս ,  
 գինեմոլ , զրպարտիչ , հալածիչ , կամ շնացող է ,  
 և սա իր չար ունակութիւններուն մէջ փոփոխու-  
 թիւն մը եղած չէ , ատեն ատեն անոր խոստովա-  
 նանքի երթալը ինչպէս կրնայ պատճառ մը ըլլալ  
 որ անիկայ ստախօս , գինեմոլ , զրպարտիչ կամ շնա-  
 ցող չճանչցուի : Ըմենէն հասարակ հասկացողու-  
 թիւնով ալ յայտնի է՝ որ անիկայ նոյն անզգամ  
 և մոլի մարդը կը համարուի , և վերջին օրը՝ իսկ և  
 իսկ ունեցած բնաւորութեանը համեմատ պիտի հա-  
 տուցուի իրեն : Ըստուածաշունչը մեզ կը վստա-  
 հեցընէ որ « Ընիրաւները Ըստուծոյ թագաւորու-  
 թիւնը չպիտի ժառանգեն , ո՛չ պոռնիկները՝ ո՛չ կոա-  
 պաշտները՝ ո՛չ շնացողները՝ ո՛չ իգացեալները՝ ոչ  
 արուագէտները՝ ո՛չ գողերը՝ ոչ ազահները՝ ո՛չ  
 գինովները՝ ո՛չ բամբաստողները ու ո՛չ յափշտա-  
 կողները » : ( Եսայ . 17 . 9 , 10 : ) Եւ դար-  
 ձեալ . « Վարմինին գործքերը յայտնի են , որ ասոնք  
 են . . . թշնամութիւն , կռիւ , նախանձ , բար-  
 կութիւն , հակառակութիւններ . . . չար նա-  
 յուածքներ , սպանութիւններ , գինովութիւններ ,  
 անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են ,  
 որ հիմակուց ես ձեզի կը զրուցեմ , ինչպէս առա-  
 ջուց ալ կը զրուցէի , որ ասանկ բաներ գործողնե-  
 րը Ըստուծոյ արքայութիւնը չեն ժառանգեր » :  
 ( Վարդ . Ե . 19—21 : ) Ի վերայ այս ամենայնի  
 կը տեսնենք որ ունակաբար սա անիծեալ բաներուն

ետեւէ եղող բազում մարդիկ տարուէ տարի անյապաղ կ'երթան քահանայից , ու թէ՛ արձակումնին կ'առնեն՝ թէ ապաշխարանքնին կը կատարեն . և ասանկով անձերնին աներկեան ապահովութեան մէջ կը կարծեն :

Եւ հետեապէս անպատեհ չէ հոս զրուցել թէ հիմակուան կարգաւորները՝ Ս'եր քով մեղք ներելու իշխանութիւն կայ ըսելով՝ Վրիստոսի եկեղեցւոյն մէջ գրեթէ միշտ անանկ գործ մը յառաջ տարած կ'ըլլան , որ ուղղակի և ակնյանդիման կը հակառակի առաքելոց ըրածին . այսինքն՝ անոնց կապածը կ'արձակեն և անոնց արձակածը կը կոպեն : Վանդի ասկէ յայտնի բան չըլլար որ՝ վերոյիշեալ պիղծ գործքերուն ետեւէ եղողները արդէն առաքելոց Հոգեշունչ խօսքերովը դատապարտուած են , և անկեղծութեամբ չեղջի չեկողներուն վրայ աս դատապարտութեան վճիռը յերկինս ալ հաստատութիւն գտած է . ուստի անոնք նոյն մեղքերն ընողները արձակելովնին՝ առաքելոց կապած ու երկնից մէջ ևս իբրև կապեալ համարուած մարդիկը արձակած կ'ըլլան : Ամանապէս չժխտուիր որ ան սովորաբար ապաշխարանք կոչուած գործողութիւնները՝ որչափ կրկնուին և որչափ խիստ ճշդութեամբ ալ որ կատարուին , ո՛չ Մատուծոյ պատուիրած ապաշխարութիւնը կրնան սեպուիլ և ոչ կրնան անանկ բան մը համարուիլ , որ անիկայ ապաշխարութեան տեղ կ'ընդունի : Արովհետև ասոնք ճշմարիտ ապաշխարութեան ըրածը չեն կրնար ընել , մարդուս սրտին ապականութիւնները յարմատոյ բժշկելու չեն զօրեր . հապա մարդը՝ իրեն ապաշխարութիւն կարծել տրուած բաները կատարելով ալ՝ դեռ նոյնը կը մնայ , մեղքին նոյն ախորժակը կրելով՝ և անիկայ գործած ատենը դեռ նոյն անզգայ անհոգութիւնն ունենալով իր առաջքի հին

Հոգեկործան ճամբուն մէջ տակաւին կը յարատեւէ և կը շարունակէ յառաջ երթալ : Բուն ապաշխարութեան մէջ՝ մեղքին վրայ « Լստուծոյ ուղածին պէս եղած տրտմութիւն » քաշել կայ . այսինքն մեր ամենասիրելի երկնաւոր Հօրը անհնազանդ գանուելով՝ անիկայ վշտացընելնուս վրայ խորին և իսկական սրտի ցաւ ու կսկիծ ունենալ : Թէ որ ան ամենագութ Հայրը իրօք կը սիրենք ու ճշմարտապէս անկէ կ'ակնածենք, մասնաւոր զգացում մը կայ՝ որ բնականապէս պիտի ծագի սրտերնուս մէջ, երբ տեսնենք որ մենք թշուառական արարածներս անոր յայտնեալ բարեսէր կամացը անմտադիր եղեր ենք նոյն ատենը՝ մինչդեռ անիկայ իր այնչափ աստուածային մարդասիրութիւնը անդադար շարունակած է մեզի, և իր այնքան անզուգական բարիքները աննախանձ մատակարարած է : Հոգին Սուրբ երբ որ կը գիտցընէ մեզի մէկ կողմանէ Լրարչին ըրած բարութիւնը, և միւս կողմանէ մեր յանցաւորութիւնը՝ մեր անարգ ապերախտութիւնն ու ուրիշ պէսպէս անզգամութիւնները, այն ժամանակը Լստուծոյ ուղած հոգեշահ տրտմութիւնը կ'ունենանք մեր մեղացը վրայ . և աս տրտմութեանս ետեւն հարկաւ Լնոր ուղած նոր կեանքն ու բարքն ալ կը յաջորդեն : Լս նոր կենաց ու բարուց պատճառն ան կ'ըլլայ՝ որ մարգուս իր մեղքերուն վրայ տրտասուել տուող նոյն իսկ դառն զգացումը նա և զանոնք սոսկալով ատել և մէկգի ձգել կու տայ անոր : Եւ աս որ ասանկ է, ճշմարիտ ապաշխարութեան՝ կենաց արմատական վերանորոգումն յառաջ չբերել չըլլար, անվրէպ յառաջ կը բերէ : Ուստի աս կենսանորոգ ապաշխարութիւնը պէտք չէ շփոթել ան անպտուղ սովորութիւններուն հետ, որ ատեն ատեն մինչև սահմանեալ ժամանակ մը զանազան ճգնութեանց կանոնապահութիւններ կ'ը-

նեն, կամ թէ տարւոյն այսինչ ժամանակները քանի որ նորէն դառնան գան, արտաքին ջերմեռանդութեան աս կամ ան գործողութիւնները կը կատարեն :

Գանք որ՝ Խորհուրդ եկեղեցւոյ անուանեալ ապաշխարանքին փաստաբանները ո՛րչափ որ անիկայ « Լապաշխարեցէք » պատուէրին վրայ հիմնել սորված ալ են, այսու ամենայնիւ՝ անոր վրայով իրենց մտքին մէջ տիրապետած գաղտնիարը կ'երևնայ թէ մեզաց պատիժը կրել կամ մեշաց քաւութիւն մը ընել է :

Լապաշխարանքին վրայ աս յիշեալ գաղափարն ունենալը ևս՝ անիկայ քաշելէ՛ն վար չմնար Սուրբ Գրքոց հակառակ ըլլալու կողմանէ . ըսել կ'ուզեմ՝ ապաշխարանքնուն թէ՛ վարդապետութիւնը՝ թէ գործածութիւնը երկուքն ալ հաւասարապէս կը հակառակին Լստուծոյ սորվեցուցածին : Արովհետեւ Լստուծոյ անխախտելի Խօսքը մեզի կը յայտնէ՝ որ մեզաց թողութիւնը մէկ պարզեւ մըն է, որ ձրի կը շնորհուի . այսինքն մեր կողմանէ առանց փոխարինի : Լ՛հօ՛ անոր մէջի զրուցուածքներէն . « Լնոր շնորհքովը ձրի կ'արդարանան՝ Յիսուս Քրիստոսով եղած փրկութիւնովը » : ( Լուկ . Կ . 24 : ) « Ասան զի անոր շնորհքովը փրկուած էք դուք հաւատքով . և աս չէ՛ թէ ձեզմէ է, հապա Լստուծոյ պարզեն է » : ( Եփ . Բ . 8 : ) « Ըէ թէ արդարութեան գործքերէն՝ որ մենք ըրինք, հապա իր ողորմութիւնովը մեզ փրկեց նորէն ծընանելու աւաղանին ձեռքովը՝ Սուրբ Լուկոյն նորոգելովը » : « Ար անոր շնորհքովը արդարացած՝ յաւիտենական կեանքին ժառանգ ըլլանք յուսով » : ( Տէր . Կ . 5, 7 : ) « Քանզի մեշաց վարձքը մահ է, բայց Լստուծոյ շնորհքը յաւիտենական կեանք՝ Յիսուս Քրիստոս մեր Տէրօջը ձեռքովը » : ( Լուկ .

Ը . 23 : ) Ըստուածատուր պատգամայ աս խօսքերը և  
 ասոնց նման ուրիշ զրուցուածքները երկբայութեան  
 տեղ չձգելով կը համոզեն որ , Ըստուծոյ կողմանէ  
 մեզի թողութիւն շնորհուելու միջոցը՝ մեղաց փո-  
 խարէն մեր կողմանէ բան մը զոհ-ընել կամ կրցած-  
 նուս չափ ապաշխարանք քաշելով ինքզինքնուս հա-  
 մար քաւութիւն մը ընելը չէ : Տարակոյս չկայ որ  
 Ըստուծոյ դէմ գործուած մեղաց համար մինչև որ  
 կատարեալ քաւութիւն չըլլայ , թողութիւն ըլլալն  
 անհնար է . ուստի քաւութիւն ընելն անհրաժեշտ  
 հարկաւոր է . բայց բանն աս է որ քաւութիւնը  
 մենք չենք կրնար ընել : Աթէ դժոխքին մէջի չա-  
 րերուն քաշած յաւիտենական տանջանքները չեն  
 կրնար իրենց մեւքերը քաւել , ուրեմն ի՛նչ աստիճան  
 նեղութիւն՝ ի՛նչ անխնայ պատիժներ որ հոս ինք-  
 ղինքնուս կրնանք տալ , անոնց և ո՛չ մէկը բաւական  
 կ'ըլլայ աս բանն ընելու : Թերևս ոմանք մտածեն  
 որ ապաշխարանքը յօժարակամ յանձն առնուելուն  
 պատճառաւ իբրև վճարումն կ'ընդունուի : Բայց  
 ասանկ մտածելն ալ մեծ սխալ է . նախ և առաջ  
 անոր համար որ՝ ատկէ կը հետևի թէ , ապաշխա-  
 րանքի մը ան սովորաբար գործածուած թեթև ու  
 առ ժամանակեայ արարողութիւններուն պէս բանե-  
 րով քաւութիւն գտնելը կարելի ըլլող յանցանք-  
 ներուն փոխարէն՝ դժոխքին յաւիտենական պատի-  
 ժը կը սահմանէ մեզի ամենարդարն Ըստուած . ա-  
 սանկ բան մը կարծելը խելքի մտքի դէ՛մ չէ՞ մի :  
 Այլորդ անոր համար որ՝ թէ և ապաշխարանքը  
 յօժարակամ յանձն առնուած ու կատարուած գործ  
 մը ըլլայ , Ըստուծոյ իր խնդրած բանը չըլլալուն  
 համար՝ ասանկ յանձն առնուած ու կատարուած  
 ըլլալովն ալ տակաւին արժանաւոր ու ընդունելի  
 գործ մը եղած չըլլար անոր առջևը : Ընոր ան-  
 օուտ բերնէն ելած խօսքն է սա . « Պարագ տեղը



զիս կը պաշտեն . մարդոց պատուիրած բաները իբրև վարդապետութիւն կը սորվեցընեն” : ( Սաղմ . 9 : ) Ըստուած պատուիրած չէ որ մեղաց թողութիւն ստանալու համար ապաշխարանք քաշենք : Սուտի կը հետեի որ ներումն գտնելու համար ապաշխարանք կոչուած ճամբովը ո՛րչափ աշխատութիւններ թափենք , բոլորն ալ ՚ի զուր կ’երթան . մարդոց իրենց խելքովը և իրենց ուզածին պէս հաստատած բաները կատարելով՝ զուր տեղը Ըստուածմէ թողութիւն կը սպասենք :

Վաւուրութիւն չեղած մեղաց թողութիւնն անհնար է ըսինք . այո՛ , ամենողորմն Ըստուած ինքը քաւութիւն մը ընել տուած է մեղաց համար , անիկայ բուն իր ամենասիրելի Արդին տուած է պատարագուելու՝ զո՛հ ըլլալու , որպէս զի “ Ըմէն ո՛վ որ անոր հաւատայ՝ չկորսուի . հապա յաւիտենական կեանքը ընդունի ” . ( Յովն . 7 . 16 . ) “ Ինչու որ ան նոխազներուն ու ցուլերուն արիւնը չէր կրնար մեղքերը վերցընել ” , ( Լէւ . 7 . 4 , ) հապա “ Ընոր Արդւոյն Յիսուսին արիւնը մեզ ամէն մեղքերէն կը սրբէ ” : ( Ին Յովն . Ին . 7 : ) Ըսիկայ է “ Ըստուծոյ գառը՝ որ աշխարհի մեղքը կը վերցընէ ” . ( Յովն . Ին . 29 . ) “ Ըսիկայ մէկ պատարագ մատուց մեղքերու համար ու մշտնջենաւորապէս Ըստուծոյ աջ կողմը նստաւ ” : “ Ինչու որ մէկ պատարագով մը մշտնջենաւորապէս կատարեց սրբուածները ” : ( Լէւ . 7 . 12 , 14 : ) Ըհաւասիկ աս է ան մեծ փրկութիւնը՝ որ Սուրբ Ըւետարանին մէջ մեզի կը յայտնուի : Ըռաքելոց առաքելութեան պաշտօնը՝ աս փրկութիւնն աշխարհին հրատարակել և մարդիկը համոզել էր՝ որ անիկայ սիրով ու կատարեալ երախտագիտութեամբ ընդունին , ինչպէս որ անոնցմէ մէկը Կորնթացուց կ’ըսէ . “ Ըմէն բան Ըստուծմէ է , ան որ մեզ իրեն հետ հաշտեցուց Վրիստոսի ձեռ-

քովը , ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը : Այլ որովհետեւ Աստուած էր , որ Վրիստոսին ձեռքովը աշխարհս իրեն հետ հաշտեցուց , և անոնց մեղքերը իրենց շեպեց , ու հաշտութեան խօսքը մեր մէջը դրաւ . ուրեմն Վրիստոսի կողմանէ դեպանութիւն կ'ընենք , իբրև թէ Աստուած կը բարեխօսէր մեզմով . կ'աղաչենք ձեզի Վրիստոսի կողմանէ , հաշտուեցէք Աստուծոյ հետ : Այսն զի Աստուած անիկայ՝ որ մեզք չէր գիտեր , մեզի համար մեղաւոր սեպեց . որ մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդարները եղած ըլլանք” : ( Թ Կորնի . Ե . 18—21 : ) Աս որ ասանկ է՝ “Վրիստոս որ մեր մեղքերուն համար մեռաւ” , ( Կ Կորնի . ԺԵ . 3 , ) Աստուած ալ ընդունեց աս զոհը , և խրկեց իր ընտրած ծառաները , որ երթան ու Վրիստոսով թողութիւն ասնելու հրաւիրեն բոլոր մարդիկը . ուրեմն մեղքերնիս քաւելու դիտմամբ՝ յետ այսր ամենայնի մենք մեզմէ տակաւին նոր զոհեր ընել ու պատարագներ մատուցանելնուս ինչ պատուակ կրնանք գտնել : Վրիստոսի ըրած վճարումը կասկածելի է , անկատար է , անոր վստահութիւն չըլլար՝ մինչև որ ամէն մէկ հոգի բուն իր կամաւոր տանջանքներովը վրան քիչ մը բան չաւելցրնէ . հապա Վրիստոսի ըրածը թողլով՝ մենք մեզի համար քաւութիւն ընել ինչ ըսել է . աս զրուցուածները թող օտարոսի չերենայ : Մեղքերնուս փոխարէն մենք մեզմէ վճարում մը ընելու ելլելէն՝ պէճք է սա բաները հասկրցուի . այսինքն կամ տգէտ ենք , կամ անհաւատ : Վրիստոսի վրայ բան մը չգիտցող և հետեւապէս փրկութիւնն անով ըլլալը չսող դժբաղդ մարդիկ՝ իրենց մահառիթ տգիտութեամբը անձերնուն արդարութիւնը հաստատելու հնարից ետեւէ կ'ըլլան : Այսն որոյ զարմանք չէ որ ասանկները անասուններ կը զոհեն , երկար

ու տաժաննելի ուխտագնացութիւններ յանձն կ'առնեն մեծ նախանձով, մազէ շապիկ կը հագնին, անքուն մնալով դիտմամբ կը տանջուին, երկաթէ ճանկերով միսերնին կը պատրուտեն՝ մոլեռանդն ոգւով մը վերքերուն ցաւոցը տոկալով, և ուրիշ զանազան եղանակներով սաստիկ ջերմեռանդութեամբ կը շարջըրկեն ինքզինքնին ան յուսով որ խիղճերնին խաղաղեցընեն ու թշուառ հոգինուն հանգիստ գտնեն: Բայց՝ թէ որ «Վրիստոսի մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցընելը», ( Թ ԳԼԿ . Բ . 24 , ) «Ընոր արիւնը մեզ ամէն մեղքերէն սրբելը», և «մեր իր արիւնին միջնորդութիւնովը փրկութիւն, իր շնորհքին մեծութեանը չափովը մեղաց թողութիւն ունենալնիս» լսելէն ետև, տակաւին թէ ապաշխարանքով և թէ ինչ և իցէ ուրիշ ճամբով մը մեր բուն անձին արդարութիւնը կառուցանելու ջանից ու նախանձուն ետևէ ըլլանք, կամ թէ այսպէս ըսեմ՝ եթէ թողլով Վրիստոսի արդարութիւնը՝ որ աւետարանին մէջ ձրիապէս մեզի մերկացեալներուս կը նուիրուի, և մեր ոյժովն ու խելքովը արդարութիւն շինելով՝ ասով ինքզինքնիս ծածկելու ետևէ ըլլանք, ան ատենը կ'իմացուի՝ որ Վրիստոսի արեանը վրայ հաւատք չունինք: Կամ ան է որ Վրիստոս իբրև մեր մարդասէր վրկիչը բռնելով անոր վրայ բաւական ապաւինութիւն չունինք, կամ ան է որ անոր այն աստիճան հաւատարմութիւն ընել և այնքան կապուիլ չենք ուզեր՝ որ մեր փրկութեան բոլոր գործը իրեն հաւատանք: Աւստի կը վայլէ որ ասանկ անհաւատներուն կրկնաբանելով հարցուի սա ամենահարկաւոր հարցմունքը՝ որ մեր Տէրը փարիսեցւոց հարցուց . «Չեզի ի՞նչպէս կ'երևնայ Վրիստոսի համար» . ( ՄԿԼ . ԻԲ . 42 . ) անիկայ ի՞նչ բանի համար աս աշխարհս եկաւ . մենք ինչո՞ւ վրկիչն մեր կը կոչենք զանիկայ: Տեսէ՛ք՝

առաքեալներուն ինչպէս երեցաւ անիկայ, Պօղոսին հարցընենք. « Ես խօսքը ճշմարիտ է՝ ու բոլորովին ընդունելու թեան արժանի », կ'ըսէ. « որ Վրիստոս Յիսուս աշխարհք եկաւ հեղափոխելու զբնիկացիս, որոնց գլուխը ես եմ »: ( ԹՄՏՏ . 15 : )

Շա՛տ աղէկ, ուրեմն անիկայ ինչպէս կը փրկէ մեղաւորները: Սիայն ասով որ բարի բարի խրատներ տուաւ, մարդիկը զեղջի բերելու ազգոյորդորանքներ ըրաւ, և ինք իր անձը մէկ ամբիծ օրինակ մը ներկայացուց: Ո՛չ, եթէ բոլորը աս ըլլար, մարգարէներն ու առաքեալներն ալ բարեսիրտ ու սուրբ անձինք ըլլալով՝ կրնային անոր պէս փրկիչներ կոչուիլ: Լ'անիկայ՝ իր ամենապատուական կէտնէն հեղե համար զբնիկացիս փոխելու, ( Սաղմ . Ի , 28 , ) նաև հէր կողմէն բարեխօսութիւն ընելու՝ ( Լեւր . Է . 25 ' ) ու հեղե ապաշխարութիւն և հեղաց լեղումն շնորհելու համար՝ ( Վարժ . Է . 31 ' ) Լ'ստուծոյ աջ կողմը նստած ըլլալուն իրաւունքովն է՝ որ Փրկիչ անունը կ'առնէ: Յայտնի չէ՞ որ առաքեալները կատարեալ կը համարէին Տեան մերոյ ըրած քաւութիւնը. չէ՞ որ անոնք յօժար էին իրենց բոլոր վտահութիւնը անոր վրայ դնելու, որչափ գոհ՝ շնորհակալ ու լի էին անպատմելի ուրախութեամբ, որ Վրիստոսի ամենաբաւական քաւութիւնը կայ, ու կրնան բոլորով սրտիւ անոր ապաւինիլ: Ես ըսածնուս ահա բուն իրենց վկայութիւնը. « Լ'ս գիտենք՝ որ մարգօրէնքին գործքերէն չկրնար արգարանալ, միայն թէ Յիսուս Վրիստոսի հաւատքէն. մենք ալ Յիսուսի Վրիստոսի հաւատացինք՝ որ արգարանանք Վրիստոսի հաւատքէն, և չէ թէ օրէնքին գործքերէն »: ( Վարժ . Թ . 16 : ) « Բայց ամօթ չեմ սեպեր, ինչու որ գիտեմ թէ որու եմ հաւատացեր, և հաստատուած եմ որ՝ իմ իրեն աւանդած

բանս կրնայ պահել մինչև ան օրը” (ք ՏԷՅ. ւ . 12 :)

Հոս վերջապէս թող սա ալ դիտենք որ, ապաշխարանք դնելու ատեն խոստովանահայր կարգաւորներուն սա նա ընելու ես ըսելով սովորաբար պատուիրած նոյն իսկ բաներուն բնութիւնը՝ շօշափելի և չպարտքկուելու վկայութիւն մըն է որ բովանդակ բանը մէկ զուտ անտեղութիւն մի է . ու կը յայտնէ թէ՛ ասիկայ ուռաջին անգամ հանողները ճշմարիտ կրօնքն ու բուն բարեպաշտութիւնը ինչ ըլլալը գիտնալու կողմանէ բոլորովին մթութեան մէջ ընկղմած ըլլալու են : Վանզի ապաշխարանքի անուամբ սահմանուած գործերը ինչ են . առ հասարակ ասոնց պէս բաներ են . Հայր մեր կամ ուրիշ աղօթք մը ըսել այսչափ անգամ , Սաղմոս քաղել , ողորմութիւն տալ , Ե՛ : Երգ՝ սրտին մէջ Եստուծոյ սէրն ունեցող ո՞ր մարդը կըրնայ աղօթքն ու Սուրբ Վիթք կարգալը և ողորմութիւն տալը ապաշխարանքի տեղ անցընել , և ապաշխարանքի տեղ հատուցանել Եստուծոյ . արդարե՛ ասանկ մէկուն ամենեւին սիրտը չտանիր այսօրինակ անարժան գործ մը յանձն առնել : Արովհետև ճշմարիտ քրիստոնէին՝ որ Եստուծոյ որդի մըն է , ասոնցմէ աւելի հաճոյական , քաղցր ու զուարճալի ինչ զբաղմունք կ'ըլլայ : Սաղմոսերգուն կ'ըսէ . “ Եստուծոյ մօտենալս բարի է ինծի ” . ( Սաղմ . ԺԷ . 28 . ) և երանեալ մարդուն վրայ այսպէս կը խօսի . “ Հապա անոր կամքը Եստուծոյ օրէնքին մէջն է , և ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ կը մտածէ ” : ( Ե. Ե. ւ . 2 : ) Իսկ տալու վրայով Տէրն մեր կ'ըսէր՝ “ Եւելի երանելի է տալը՝ քան թէ առնելը ” : ( Պարթ . Ի . 35 : ) Եւաւեթի իրաւ է որ մարդն իր Եստուածաշունչը կարգալով՝ ան կարգալը իրեն ապաշխարանք կ'ըլլայ .

ուրեմն արքայութիւն գացող երանելեաց գործը սր-  
բան աւելի մեծ ապաշխարանք պիտի գայ իրեն .  
անփախչելի հետևութիւն : Աւստի ասանկով ոչ  
թէ միայն այնպիսի մարդուն կատարած ապաշխա-  
րանքը՝ անոր արքայութիւն երթալու իրաւունք  
յատկացընող արժանիքէն զուրկ կ'ըլլայ , հապա  
մինչև անգամ ինքը՝ թէ որ երկնից մէջ գտնուի ,  
իր ունեցած մտքի վիճակին պատճառաւ՝ ան փա-  
ռաւոր տեղը իրեն երկինք չըլլար . ան երջանիկ  
բնակարանը իրեն համար երջանիկ բնակարան չէ :

## Յ Ե Ի Ե Լ Ո Ի Ե Ծ



Ընթերցողը քանի որ աս տետրակին թղթերը դարձրնէ, զարմացմամբ ու միանգամայն ցաւօք տեսնելով թէ՛ Պապականաց և Յունաց եկեղեցիները նաև իր սիրելի համազգիներէն բիրաւոր անձինք աս քննուած նիւթոց նկատմամբ աւետարանական պարզ ու ազնիւ կանոններէն ո՛րչափ օտարացեր ու անոնցմէ ո՛րքան հեռացեր են, անիկայ բնականապէս հետաքրքրութիւն մը կ'ունենայ իմանալու թէ երբ և ի՞նչպէս եղեր է՝ որ անոնք չարաչար խտուրեր են այսչափ :

Ըս բաները՝ որ թէ՛ վարդապետութեամբ թէ գործածութեամբ մեծ մեծ մոլորութիւններ են, յիշեալ եկեղեցեաց ծոցը խնամօք ու յարգանօք պահուելուն տարակոյս չկայ : Բայց անոնք աստիճան աստիճան հոն մտցուելուն կարգն ու ընթացքը սկիզբէն ՚ի վեր ի՞նչպէս եղած ըլլալուն երկար և տաղտկալի պատմութիւնը լիովին ՚ի գիր աննուած չեն մինչև հիմայ, և հաւանականաբար ասկէ ետև ալ գրուելիք չունին . անոր համար որ ասանկ պատմութիւն մը յօրինելու համար տեղեկութիւն հաւաքելու հարկաւոր եղած գրութիւններ ձգուած չկան : Իբաւ եկեղեցւոյ ամէն դարուն մէջ՝ այլ և այլ նիւթերու վրայով բաւական ճոխութեամբ գրող քրիստոնեայ պատմագիրներ ելած են . և եկեղեցւոյ վրայ մէկ աղւոր ընհանուր պատմութիւն մը չինելու չափ բաւական քաղուածքներ ունեցած է մեր դարը՝ անոնց գրութիւններէն հանած : Սակայն սուտ վարդապետութեանց և

Ըստուածաշունչ Վրոց օտար ծէսերուն սկզբնաւորութեանցը վերաբերութեամբ եղած խնդիրներուն վրայ դժբաղդարար քիչ լոյս կը ձգեն աս քաղուածքները . նմանապէս քիչ ծանօթութիւն կը հասցընեն մեզի զանազան ուրիշ նիւթոց վրայ ալ, որոնց՝ հիմակուան դիտցածներնէս աւելի կատարելագոյն տեղեակ ըլլալ կը բաղձայինք :

Լկեղեցական պատմութեան մէջէն քանի մը Հարց վկայութիւնները ասնելով՝ և անոնց վրայ քիչ մը դիտողութիւններ ընելով՝ յաւելուած մը գրինք հոս, որպէս զի հիմակուական ջալուր խոստովանանքի սովորութեանը և անոր հետ գացող ուրիշ մտորութեանց՝ ինչպէս եկեղեցւոյ մէջ մտցուած ըլլալուն վրայօք ըստ կարի գաղափար մը տանք :

Վասնիկն եկեղեցին իր կառավարութեան մէջ խիստ անաչառութիւն կը բանեցընէր իր անդամոց վրայ . ո՛վ որ հալածանաց երկիւղէն հաւատքն ուրանար, կամ ո՛ր և իցէ պատճառաւ ու ինչ և իցէ կերպիւ քրիստոնէական դաւանութեան անվայել ընթացք մը ունենար, կը մերժէր զանիկայ իր հաղորդութենէն, ինչպէս որ Սուրբ Վիրքը կը պատուիրէ : ( Սաղմ . ԺԷ . 17 : Լււ ւն Կրկն . Ե . 13 : )

Երկրորդ դարուն մէկ Հայրը Տերտուղիանոս կ'ըսէ . " Քրիստոնէայ չեղող մարդիկ քրիստոնէայ կը կոչուին՝ որ սխալ է . շիտակը՝ ասանկները մեր կրօնական ժողովներուն մէջ մասն չունին, Հաջորդ չեն առներ . անոնք դարձեալ ձերն եղած են իրենց մեղաց միջոցաւ : Արովհետեւ մենք մինչև հասարակ կենցաղավարութիւն ալ չենք ըներ ատանկներուն հետ, որոնք ձեր անդուծ վարմունքէն բռնադատեալ ուրացութեան մէջ ձգած են ինքզինքնին . թէպէտ ստոյգ է որ մեր մէջը աւելի դիւրաւ զիջումն կը ցուցընենք՝ մեր կրօնական սկըզ-



բունքներն ստիպմամբ ձգողներուն , քան թէ անոնց՝ որոնք իրենց կամօքը ձգած են” : Ըն ազինս .  
Վերք ւ . Վլ . 5 :

Ի վերայ այսր ամենայնի՝ եկեղեցւոյ անդամութենէն կտրուած յանցաւոր անձինքը եթէ իրենց ապաշխարած ըլլալնուն համողիչ ցոյցեր կամ նշաններ տային , նորէն անոր անդամ ըլլալու կ’ընդունուէին սիրով , կամ թէ ըսենք՝ արձակուած կ’առնէին , քանզի ան ժամանակի արձակուած անունն աս էր : Ըս զիջումը մէկ մարդուն միայն մէկ անգամ կրնար ըլլալ՝ երկրորդ դարու մատենագիրներուն զուցածին նայելով . ասկէ կը մակաբերուի թէ ան ժամանակուան եկեղեցւոյ մէկ կանոնը եղած ըլլալու է սա՝ թէ ո՛վ որ իր անարժան վարուցը պատճառաւ երկրորդ անգամ դուրս ձգուի եկեղեցիէն , բնաւ ևս նորէն չաւնուի՝ որչափ որ ապաշխարած ալ երևնայ : Տե՛ս Հերմասի Հովիւ . Սասն ք . Սմանութիւն 6 : Տերտուղիանոսի Յաղագս ապաշխարութեան . Վլ . 7 : Կղեմէս Ըղեքս . Սէպք . Վերք ք . Վլ . 13 :

Եւ երրորդ դարուն՝ եկեղեցւոյ մէջ շատ վէճ կար մինչև սա խնդրոյն վրայ թէ մեղքի մէջ իյնող անգամը երբեք ընդունիլ պէ՞տք է . այսինքն՝ թէ և իրեն ըրածը առաջին անգամ մեղանշելն ըլլայ , պէ՞տք է զանիկայ անգամ մը ընդունիլ : Վանզի եկեղեցւոյ մէջ կուսակցութիւն մը կար , որոնք կը պնդէին թէ մկրտութենէն ետեւ Տէրն ուրաջող կամ ծանր յանցանքի մէջ ինկող մէկը դուրս ձգուելէն ետքը՝ այլ ևս բնաւ արժան չէ աւնուիլ եկեղեցւոյ միաբանութեանը : Ըս կուսակցութիւնը Սովաթեան կը կոչուէր՝ իրենց գլխաւորին՝ Սովաթիոսին անունովը : Սուրբ Վրոց օտար էր Սովաթեաններուն աս բանիս վրայ ունեցած հաւատքը , վասն որոյ եկեղեցւոյ մեծ մասը դէ՛մ կը կենար անոնց : Սուտի դուրս ձգուած անդամները երբոր նորէն ընդունուե-

լու ետևէ կ'ըլլային , և միանգամայն իրենց մեղքերուն վրայ Մատուցոյ ուղածին պէս տրտմած ու դարձի եկած ըլլանուն աղէկ ապացոյց տուած կ'ըլլային , չէին մերժուեր . հապա անոնց վրայ մէկ խիստ պարտաւորութիւն մը կը դրուէր : Ընոնցմէ կը պահանջուէր՝ որ Բոլոր Էկեղէցոյ Գեմայը Իրենց յանցանքը խոստովանին Լրտպարտուի , ու իրենց գործած շարեացը համար վիշտ ու տրտմութիւննին , և մեղուցեալ անձերնին անարգել ու դատապարտելնին ցուցընեն՝ ծով պահելով , քուրձ հագնելով , գետիկները փռուած ու տարածուած ողբալով ու կոծելով , քրիստոնեայ եղբարց աղաչելով որ աղօթք ընեն իրենց համար , և Եւ աս բաները կատարելով , իրր թէ ըսել ուզեն որ՝ ահա՛ մենք վատ յանցաւորներս դուրսը սպասելով կը բաղխենք դուռը . և յետ այնորիկ արժանի կը սեպուէին վերստին ընդունուելու : Ըն ժամանակներուն քաջածանօթ հեղինակաց ուշադրութիւնը բնականապէս պս նիւթով շատ զբաղած ըլլալով՝ ուստի և անոր վերաբերութեամբ շատ բան գրած ըլլալովնին , անոնցմէ առատ վկայութիւններ ունինք ձեռուրնիս : Արովհետև այն դարուն սաստիկ հալածանացը մէջ՝ քրիստոնէութիւն դաւանողներէն շատերը հաւատքնին ձգելով , վտանգն անցնելէն ետև կ'ուզէին նորէն հաշտուիլ եկեղեցւոյ հետ . ասոր համար անօրուան եկեղեցւոյ մէջ մէկ ծանրակշիռ խնդիր մըն էր սա՛ թէ մանաւանդ այս տեսակ ուրացողներուն հետ ինչ ընելու է , այսինքն ինչ պայմաններով վերստին եկեղեցւոյ հաղորդութեանն առնելու է անոնք : Տերտուղիանոս կը պահանջէ՝ « Ար փսոնք բովանդակ վարքովնին յայտնեն իրենց տրտմութիւնը , հանդերձ ծումապահութեամբ աղօթք ընեն իրենց մեղացը թողութեանը համար , եկեղեցւոյ առջև ներկայացընեն մեղքերնուն խոստովանութիւն»

նը , բրիտոնեայ եղբայրներէ միջնորդական մաղ-  
թանքներ ընել խնդրեն , և ինքզինքնին խոնարհե-  
ցընեն մասնաւորապէս երէցներուն և ուրիշ անանկ  
անձանց առջև , որոնք Մատուծոյ բարեկամները  
ճանչցուած են” : Տերտուղիանոս նաև ունի յոր-  
դորանք մը՝ յատկապէս եկեղեցւոյ առջև խոստո-  
վանութիւն ընելէն ամշնալով ետ կեցողներուն ուղ-  
ղուած :

Ներոնիմոսին մէկ խօսքը . “Ով կը հաւատայ  
պսոր՝ որ անիկայ (այսինքն ապաշխարողը) քուրձ  
հագած՝ իր յանցանքը խոստովանելով ապաշխա-  
րողաց կարգին մէջը կանգնի , մինչդեռ շուովմայ  
բոլոր քաղաքը մէկ կողմանէ իր վրայ կը նային” :  
Նամակ Ը :

Շոս քիչ մը ծանօթութիւն տանք թէ յիշեալ  
պարտքերը աւարտելէն ետև , իր եկեղեցւոյն վերա-  
դառնալու պատրաստուած ապաշխարող անձը վե-  
րբնտին ընդունելուն գործը ինչ ձևով կը կատա-  
րէին : Մտ վերստին ընդունիլը թէ՛ հրապարակա-  
կան գործ մը , և թէ մինչև անգամ եկեղեցական  
պաշտամանց մէկ մասը եղած էր : Յայտնի է որ՝  
աս ասանկ ըլլալուն պատճառ մէյմը աս կրնայ ըլլալ  
որ՝ յանցաւորն եկեղեցւոյ հաղորդութենէն ձգելու  
գործը որչափ որ հրապարակաւ կ’ըլլար՝ անոր խոս-  
տովանութիւն ու արձակում՝ առնելն ալ նոյնչափ  
հրապարակաւ ըլլուիլը յարմար կու գար . մէյմ՝ ալ  
սա , որ բոլոր գործը մէկ խրատական կարգադրու-  
թիւն մը ևս ըլլալով՝ անոր հոգեշահ ներգործու-  
թենէն ազդուի եկեղեցւոյ բովանդակ մարմինը :  
Ուստի արձակման արարողութիւնը կը կատարուէր՝  
Էֆէզոյ Տէջ , և Ժողովուրդը հրապարակաւ պաշ-  
տամանց համար հոն գումարուած ուրիշներ , և ըստ  
մեծի մասին տէրունական ընթրեաց մատակարարուե-  
լէն անմիջապէս առաջ : Մաշխարող անձը սոյն

արարողութեան յատկացեալ զգեստը ( որ վրան յատուկ նկարներ ունէր ) հագած՝ եպիսկոպոսին առջևը ծնկան վրայ կը կենար . ան ալ ջերմեռանդ աղօթքով մը ու ձեռքը վրան դնելով՝ վերստին կ'ընդունէր զանիկայ : Սասնաւորապէս ասոնց ետքինը՝ այսինքն ձեռք դնելու գործը կը սեպուէր եկեղեցւոյ միաբանութեանը մէջ վերստին մտցընելու յոյժ ազգու մէկ յայտարարութիւնն ու գլխաւոր նշանը : ( ) ԳՈՍ . Յաղագս մկրտութեան . Գիրք ք . ԳԼ . 16 :

Իսկ ան աղօթքը՝ որ աս առթիս մէջ եպիսկոպոսը կը մատուցանէր , սա հետեւեալն է . “ Ո՛վ ամենակալ ու յստիտենական Եստուած , Տէր ամենեցուն , Երարիչ և Պահապան ամենայնի . դուն՝ որ Քրիստոսով մարդն աշխարհիս զարդը ըլլալու ստեղծելով՝ անոր թէ՛ բնական և թէ՛ գրաւոր օրէնք տուիր , որպէս զի անիկայ բանական էակի մը վայլածին պէս ուղիղ վարուք ապրի , որ ապաշխարութեան յորդորելու համար քու բուն բարութիւնդ գրաւ տուիր անոր , երբ որ անիկայ մեղանչեց : Սա՛ր նայէ անոնց վրայ՝ որոնք քու առջիդ իրենց վիզը կը ծռեն ու մարմիննին կը կորացընեն , քանզի դուն չես կամիր մեղաւորին մահը , այլ անոր ապաշխարելը . որ ըլլայ թէ իր չար ճանապարհէն դառնալով ապրի : Գուն՝ որ ընդունեցիր Վինուէացւոց ապաշխարութիւնը , որ բոլոր մարդոց փրկուիլը , և ՚ի գիտութիւն ճշմարտութեան գալը կը կամիս . դուն՝ որ հայրական կորովով՝ ընկալար ան անառակ վարուք իր իրոր ունեցածը մտաւոր որդին , երբ որ ապաշխարեց . այժմ՝ ևս ընդունէ՛ աս քեզի պաղատողներուն ապաշխարութիւնը . վասն զի մարդ չկայ՝ որ քեզի դէմ չմեղանչէ . վասն զի՝ ո՛վ Տէր , թէ որ անօրէնութիւնները յիշելու ըլլաս , Տէ՛ր՝ ո՛վ կրնայ կենալ , և վասն զի քու քովդ քաւութիւն կայ , անոնց իրենց

նախկին վիճակն ու աստիճանը տալով՝ վերադարձուցր զանոնք 'ի սուրբ եկեղեցի միջնորդութեամբ Քրիստոսի մեր աստուածեղէն Փրկչին, 'ի ձեռն որոյ փառք և երկրպագութիւն թող մատուցուի քեզի յաւիտեանս յաւիտենից . Հոգւով Սրբով . Ըմէն” :

Քրիստոնէութեան սկզբան մօտ ատենները՝ արձակում տալու համար գործածական եղած սահմանեալ ձևը ահա՛ ինչ որ յառաջ բերինք՝ ան է . ան ժամանակէն մեզի հասած գրոց մէջ ուրիշ կերպ մը չկայ յիշատակուած , և գտածնուս մէջ ալ՝ մէկուն իր վրայ առած ըլլալը չենք տեսներ ան աստուածավայել մեծ իշխանութիւնը , որն որ հիմակուան քահանայք ունեցած ձևանալով՝ կամ թէ մենք ունինք ըսելով ժողովուրդին՝ Հօր , Սրբւոյ և Սուրբ Հոգւոյ անուամբը ձեզ ամէն մեղքերէն կ'արձակենք կ'ըսեն :

Եւ յն դարուն ամենէն հռչակաւոր ու երևելի եպիսկոպոսաց և ներհուն աստուածաբանից ձգած գրութիւններէն քաջայայտ կ'երևնայ որ՝ անոնք սասանկ իշխանութիւն մը ունենալ ձեացած չեն , և ժողովուրդին այնպէս հաւտացընելու ետեւե եղած չեն : Ըրդարև կը խոստովանին որ ապաշխարելոց արձակում կու տային միայն այնչափ՝ որչափ որ անոնց գործածը եկեղեցւոյ ալ դէմ էր . բայց յայտնապէս 'ի բաց կը մերժեն և երբեք յանձն չեն առնուր՝ ամենիշխան Եստուծոյ դէմ գործուած մեղաց ներում շնորհելու իշխանութիւնը . իշխանութիւնը մը՝ որ Ենօր իրեն յատուկ է միայն :

Հոովմայ քաղքին եկեղեցին առ կղերն կարթագինոյ ուղղած առաջին նամակին մէջ այսպէս կը խօսի անկեալ եղբարց վրայով . “ Ըրդարև անոնք մեզմէ զատեցինք , 'ի վերայ այսր ամենայնի ինքզինքնուն թողուցած չենք , այլ զանոնք յոր-

գորեցինք և տակաւին կը յորդորենք ապաշխարելու, որ ըլլայ թէ գուցէ թողու թիւն ստանան Մեկէ, որ ինքը միայն կրնայ թողու թիւն տալ": Սուրբ Արարիանոս կ'ըսէ. "Թող մէկը ինքզինք չխարէ. Տէրը միայն կրնայ ողորմութիւն ցուցընել: Միայն ան կրնայ թողութիւն տալ ան մեղքերուն, որ գործուած են՝ մեր մեղքերը վերցընող ու մեր տեղը չարչարանք կրողին դէմ, զոր Մատուած մատնեց մեր յանցանացը համար: Աստուան թող իր տիրոջը դէմ կատարուած ոճիրին ներում չտայ, որ ոճրագործը ինքզինք առաւել մեծագոյն յանցանաց մէջ ձգելու չհամարձակի՝ անփոյթ ըլլալով սա գրուած խօսքին թէ՛ 'Լնիծեալ է անամէնը՝ որ մարդու կ'ապաւինի': Բան յաղագս անկեալ եղբարց:

Ապագոյ վերջ Աստուծոյ Երկրայի եպիսկոպոսը Ֆիրմիլիանոս՝ երրորդ դարուն վերջին կէսին՝ իր գրած մէկ նամակին մէջ կ'ըսէ. "Սեր մէջ եպիսկոպոսներն ու երէցները տարին անգամ մը մէկտեղ կը գումարին՝ անկեալ եղբարց ապաշխարութեամբ վերբարտին կանգնելուն վրայով իրարու հետ խորհրդակցութիւն ընելու, ո՛չ իբրև այնպէս՝ որպէս Բէ անոնք Բողոք Բողոք-Բիւն ասնէն Բողոք, հապա որպէս զի իրենց մեղքերը ճանչնալու բերուին", ԼՃ: Արարիանոս. 'Սամակ հէ: Հերոնիմոս՝ իր Սեկնութեանը մէջ Սուրբ. ԺԿ. 19 տունին վրայով խօսած ատենը կ'ըսէ. "Ապիսկոպոսներն ու երէցները (Մեծարանին) աս տեղը աղէկ չհասկընալով՝ փարիսեցոց հպարտութենէն սակաւ ինչ բան իրենց կը սեփհականեն, որպէս թէ կարող եղած ըլլային անմեղները դատապարտելու և յանցաւորները (դատապարտութենէ) ազատ կացուցանելու. մինչդեռ Մատուծոյ քով՝ յատկան կոչուածներուն վրայ ո՛չ թէ քահանային վճիռը, այլ անոնց վարքը պիտի փնտռուի":

Էտետպէս այս անկէ ասկէ յառաջ բերած  
 խօսքերնէս հասկըցածնիս սա կ'ըլլայ, որ երրորդ  
 դարու Էարց յիշատակած խոստովանութիւնը հրա-  
 պարակական մեղքը հրապարակաւ խոստովանիլ մըն  
 էր. այսինքն՝ այլոց դիմացը զործուած կամ հա-  
 սարակաց գիտցած յանցանքները հասարակաց առջև  
 խոստովանիլ, որն որ սովորութիւն եղած էր ք-  
 նել տալ ան անդամոց, որոնք հակառակ քրիս-  
 տոնէական սուրբ հաւատոյ՝ մեղանչած ըլլալով, ի-  
 րենց անարժան ընթացքին համար եկեղեցիէն դուրս  
 արտաքսուած էին: Ըրձակում տալը, իրաւ ասոր մէջ  
 եկեղեցւոյ նպատակը միշտ ան էր՝ որ յանցա-  
 ւորները դէպ 'ի Մտուած ճշմարտապէս չապաշ-  
 խարած և անկէ թողութիւն չառած՝ վերստին իր  
 միաբանութեանը չընդունի զանոնք. իսկ իր տուած  
 արձակումը կամ անյիշաչարութեամբ զանոնք նո-  
 րէն ընդունիլը՝ անոնց մեղքերուն թողութիւն մը  
 տալ չէր՝ սոյն մեղքերուն Մտուածոյ դէմ զոր-  
 ծուած ըլլալուն կողմանէ: Եւ ասո՛ւ աս բոլորը  
 միաբան կու գայ Սուրբ Գրոց, որ մեր երկնաւոր  
 Էայրը իր ծայրագոյն իմաստութեամբը կանոն ու  
 սահման ըլլալու շնորհեր է մեզի. թէպէտ և անկարելի  
 չերևնար որ յիշեալ բաներէն ոմանց նկատմամբ ան ա-  
 տենէն մոլար գաղափարներ գոյացած ըլլայ շատերուն  
 մտքին մէջ: Իայց անոնք որ աս բանին վրայ կատա-  
 րեալ խուզարկութիւններ ըրեր են, աղէկ մը համո-  
 զուած են որ երրորդ դարուն մէջ եկեղեցին իր ան-  
 դամոցը և ո՛չ մէկէն խոստովանութիւն մը կ'ու-  
 զէր՝ ո՛չ հրապարակական և ոչ առանձնական. միայն՝  
 որոնք որ իրենց գայթակղական յանցանաց պատ-  
 ճառաւը եկեղեցիէն կտրուած ու դուրս ձգուած  
 ըլլալով յետոյ զեղջի կու գային, ու կը բաղձային  
 վերստին անոր մէջ առնուիլ, անանկներէն խոս-  
 տովանութիւն կը պահանջէր: Մտնցմէ 'ի զատ ու-

րիչներուն վրայ ո՛չ ապաշխարանքի պէս բան մը կը դնէր, և ոչ արձակում՝ ըսուած բանը կու տար՝ որ և իցէ կերպով ու ի՛նչ և իցէ մտօք\* :

Գաթողիկ վարդապետները՝ կարող չըլլալով Սուրբ Գրոցմէ քաղուած ձեանարկութիւններով պաշտպանել իրենց ականջալուր խոստովանանքին հիմակուան արարողութիւնը, յիշեալ պատկառելի Հարց հեղինակութիւնը ձեռք կ'առնեն. ըսել ուզելով որ՝ որպէս թէ Սուրբն Արամոս, Աղեմէս

\* Արծենք հոս մէկուն բերանը լեզու չենք դներ պատասխանելու թէ, Այո՛, մեր ապաշխարանքն ու արձակումն ալ՝ մեղքերը եկեղեցւոյ դէմ ևս ըլլալուն նկատմամբ կը տրուի, որպէս թէ եկեղեցին քահանային ձեռք՝ չափաւոր պատիժ մը դնելով մեղուցեալին վրայ՝ իր մասին անոր թողութիւն կու տայ : Իսկ մեղքերը Մատուոյ դէմ գործուած բաներ ըլլալուն նկատմամբ՝ անոնց թողութեանը չխառնուիր. հասցա անոնք ի՛նչ որ էին եկեղեցին դեռ չներած այս նկատմամբ՝ իսկ և իսկ նոյնը մնալով, քահանային արձակումէն փոփոխութիւն մը չեն կրեր. և անտարակոյս Մատուոյ իրեն կ'իյնայ իրեն դէմ գործուած յանցանքները ներել՝ կամ պատժել :

Հիմակուան խոստովանանքն ընդունող մէկը լռելի լաւագոյժ սեպելով ասանկ պատասխան մը չպիտի տայ. բայց թերևս ետին առջին չմտածող, և ի՛նչ կ'ըլլայ ըլլայ՝ բան մը պատասխանելու իղձով լեցուած մէկը աս վերոյիշեալ խօսքը զրուցէ իբր պատասխան : Եսանկ մարդը կրնայ զուցածին պատասխանը իր եկեղեցիէն առնել : Մենք հոս այսչափ ըսենք որ՝ անիկայ լա՛ւ թող նայի խոստովանորդոյն կողմանէ ըսուած Օղջումին խօսքերը. անոր ետեւէն եկող քահանային մատուցուած Հայր սուրբ գրեղ ունիմ խնդրուածքը, նաև Արձակման խօսքերը, ( որուն վրայօք քիչ մը խօսած ալ ենք 17—20 երեսներուն մէջ, ) և բոլոր ան բաները որ եկեղեցին խոստովանողաց և անոնց մեղաց թողութեանը նկատմամբ կ'ընէ. ու այսպէս իսկոյն պիտի հասկընայ թէ կրնայ ըսուիլ որ խոստովանորդւոյն խոստովանած ու վրան ապաշխարանք քաշածը հրապարակական կամ ծանօթ մեղքեր են միայն. և ապաշխարանքը միայն եկեղեցւոյ դէմ հղած անիրաւութեանը պատիժն է. և թո՛ղ անգամ մը մտածէ՝ թէ իր եկեղեցին աս բաներուն վրայով ի՛նչ գաղափար տուած է ժողովուրդին, և եկեղեցականներն ու ժողովուրդը աս հասարակ ի՛նչ գաղափար ունին : Վանդի աս կը փնտռուի, ո՛չ թէ փախելու համար իր բոս հաճոյից տուած մեկնութիւնը. խնդրը իր եկեղեցւոյն ունեցած հաւատքին վրայ է, ու չէ՛ թէ իր առանձնական հաւատքին :



Մշակութան դրացին , Որոգինէս , Տերտուղիանոս և այլք վկայութիւն կու տան թէ առանձնական խոստովանանքը իրենց օրովը կար եկեղեցւոյ մէջ : Մնասարակոյս ասանք խոստովանութեան վերաբերեալ խօսքեր ըրած են . սակայն ինչպէս խոստովանութեան , բանը քննութեան բերելով՝ կը գտնենք որ աս Հայրերուն նշանակած խոստովանութիւնը բոլորովին տարբեր է եղեր . շիտակը՝ անոնց ըսածը վերը ստորագրածնուս նման խոստովանութիւն մըն է եղեր :

Կանք հիմայ տեսնել թէ առանձնական խոստովանանք ու ապաշխարանք անունով անցնող ան գործողութիւնները՝ որ քրիստոնէութեան մեծ մեծ ու աննահանջանջելի պարտաւորութիւնները համարուած են , ինչպէս եղեր է որ սկսեր են եկեղեցւոյ մէջ մըտցուիլ : Մտոր վրայով Սոկրատ ու Սոզոմենոս երկու եկեղեցական պատմագիրներուն տուած վկայութեանէն քիչ մը բան կը սորվինք մեր հոս դրած սաքաղուածներուն մէջ :

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ս Ո Ջ Ո Մ Ե Ն Ո Ս Ի  
 Գ ի ը ք Է . Գ Վ . 16 :

Մտաշխարհաց գործոյն վրայ դրո՞ւած էր եցնելը ինչպէս  
 ե ինչ պատճառաւ էլ եղեցի ինչ վերցո՞ւցան : Մտե-  
 րտաշխարհ-լեռն ինչպէն վրայ բննո՞ւլի ն մը :

“ Կոստանդնուպոլսոյ եկեղեցւոյն վերակացու-  
 թիւնն ունեցող ‘Աեկտարիոս’ առաջինն եղաւ որ  
 ապաշխարողաց գործոյն յատկացած Աբէցը վեր-  
 ցուց . և ասոր օրինակին հետևող եղան միւս ե-  
 պիսկոպոսները գրեթէ ամէն տեղ : Յիշեալ պաշ-  
 տօնին ինչ ըլլալն ու անոր սկզբնաւորութիւնը ,  
 և անոր դադարման պատճառը գուցէ կերպ կերպ  
 պիտի ստորագրեն զանազան մարդիկ , իսկ ես ինձի

ստորագրեցա՞ծ բացատրութիւնը ընեմ՝ հոս : Որովհետեւ ամենեւին չմեղանչելու համար կը հարկաւորէր՝ որ մարդս յաւէտ աստուածային բնութիւն մը ունենար, քան թէ իր արդէն ունեցած բնութիւնը . և որովհետեւ ապաշխարող ու իրենց մեղքերէն ետ կենալու խօսք տուողներուն թողութիւն տրուիլ հրամայեց Մտուած՝ թէ և անոնք քանի քանի անգամ մեղանչած ըլլան, բայց կ'երևնայ թէ կղերը 'ի սկզբանէ անտի մէկ դժնդակ հարկադրութիւն մը համարած էր՝ մեղքերը որպէս թէ թէատրոնի մը մէջ բոլոր եկեղեցւոյ առջև խոստովանիլը : Ասան որոյ անոնք երէց մը սահմանեցին աս բանին՝ բարի օրինակ ըլլալու ամենէն աւելի արժանի, ինքզինք գիտցող, և խոհական մէկը . ու ո՛վ որ մեղաց մէջ իյնար, կ'երթար անոր, ու ըրածը կը խոստովանէր : Են ալ իւրաքանչիւր անձին իր մեղքին համեմատ մէյմէկ բան կամ ապաշխարանք կատարել պատուիրելով՝ թող կու տար որ երթան ինքնիրեննին 'ի գործ դնեն առած պատուէրնին : Բայց Վովաթեանները, որոնց (ըստ իրենց գրութեանը) ապաշխարութիւնը օգուտ չէր ըներ անկեալ անդամի մը, սոյն կարգադրութեանը առիթ մը չունէին . իսկ միւս աղանդներուն մէջ մինչև ցարդ կը պահուի : Արևմտեան եկեղեցեաց մէջ ալ մէկ խիստ ճշդութեամբ մը կը կատարուի ասիկայ, մանաւանդ Հռոմայեցւոց եկեղեցւոյն մէջ, ուր ուզողը կրնայ տեսնել սգաւորներու պէս դէմքերնին կախ ապաշխարողները՝ իրենց համար յատկացեալ տեղը կայնա՞ծ . Մտուածային պաշտաճունքը երբոր կ'աւարտի, ասոնք՝ հաղորդական անդամոց վերաբերեալ բաներէն իրենք չմասնակցած ըլլալով, երեսնուն վրայ գետինները կ'իյնան ողբալով ու հեծելով . եպիսկոպոսը՝ որ անոնց դէմը կեցած կ'ըլլայ արտասուօք թրջուած, յառաջ գիմելով՝ նմանապէս ինքն

ալ դետինը կ'իյնայ, և բովանդակ եկեղեցին ողբ ու կոծով կը լինայ: Տես այսորիկ եպիսկոպոսն յառաջագոյն ելլելով միւս իյնողներն ալ կը բռնէ ու վեր կը հանէ, և ապաշխարող մեղաւորներու յարմարցուած աղօթք մը մատուցանելով՝ կ'արձակէ զանոնք: Ըն ատեն անոնց ամէն մէկը մէկ կամաւոր նեղութիւն մը՝ զոր օրինակ ծոմապահութիւն, լուացուելէ հրաժարիլ, մասնաւոր տեսակ կերակուրներէ կտրուիլ, կամ թէ ինչ որ իր վերայ դրուած ըլլայ, ինքնիրեն քաշելով՝ եպիսկոպոսին որոշած ատենին կը սպասէ: Արոշուած ատենը հասնելուն՝ ապաշխարանքը պարտքի մը պէս վճարած ըլլալով՝ ալ մեղքէն կը լուծուի, ու եկեղեցւոյ պաշտամանց մէջ ինքն ալ ժողովուրդին հետ մէկ կ'ըլլայ: Ըս բաները 'ի սկզբանէ 'ի վեր մինչև մեր օրերը պահած են Հոովմայեցւոց քահանաները:

Կոստանդնուպօլսոյ եկեղեցւոյն մէջ ալ ապաշխարողաց գործոյն յատկայեալ Արեցը իր պաշտօնը կը վարէր՝ մինչև ան ատենը գալով, երբոր մէկ ազնուատոհմ տիկին մը, որ իր մեղքը խոստովանած ու անոր համար Եստուծոյ աղօթք և ծոմապահութիւն ընելու պատուէր առած ըլլալով Արեցէն, եկեղեցւոյ մէջ կեցած աս պարտքերը կը կատարէր, պատմեց որ՝ մէկ սարկուազի մը հետ պոռնկութիւն բրած է: Ժողովուրդը իմանալով ասիկայ՝ շատ սրտմտեցաւ՝ եկեղեցւոյ վրայ անարգութիւն բերուելուն պատճառաւ: Աւստի կզերն ալ շատ սաստիկ բամբասուեցաւ: Իսկ՝ Աեկտարիոս՝ տարակուսութեան մէջ ըլլալով թէ ինչ ընէ աս բանին, չարագործ սարկուազը պաշտօնէն ձգեց, նաև՝ որովհետև ոմանք խորհուրդ կու տային թէ պէտք է թող տըրուի ամէն մարդոց, որ բուն իրենց խղճմանքին ու վստահութեանը նայելով մասնակցին սուրբ խոր-

հուրդներուն , Երէցին ապաշխարողաց գործոյն մէջ ունեցած պաշտօնը խափանեց\* . և աս կարգադրութիւնը ան ժամանակէն 'ի վեր է որ կը բռնուի մինչև հիմայ :

Նիշեալ պաշտօնին վերցուիլը պատճառ ըլլալով՝ հին բաները իրենց արժանապատուութեանն ու ճշդութեանը կողմանէ արդէն սկսած են ինչպէս որ կը կարծեմ , խորթանալով անխտրութեան ու անհոգութեան ունակութիւն ըլլալու փոխուիլ . քանզի ինծի կ'երևնայ որ առաջները՝ թէ՛ յանցանքնին զրուցողներուն ամօթոյ զգացմանը համար և թէ յատկացեալ դատաւորաց բանեցուցած ճշդութեանը պատճառաւ , մեղքերը աւելի սակաւաթիւ էին” :

Ե Կ Ե Դ Ե Յ Ա Կ Ա Ն Կ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ս Ո Կ Ր Ա Տ Ա Յ

Գ Ի Բ ք Ե . Գ Լ 19 :

“ Ըն ժամանակները աղէկ սեպուեցաւ որ՝ ալ վերցընեն եկեղեցեաց ան Երէցները , որ ապաշխարողաց գործոյն վրայ զրուած էին , և ասոր պատճառը սա զրուցելու խօսքիս մէջ կը տեսնէք : Որ ժամանակ որ՝ Նովաթեանները՝ Տասիոսի օրովն եղած հալածման մէջ ետ քաշուողներուն հետ 'ի միասին շաղորդ առնել շուղելով՝ եկեղեցիէն զատուեցան , եպիսկոպոսները եկեղեցական կանոնին վրայ աս ալ աւելցուցին՝ թէ ապաշխարողաց համար յատուկ գործով Երէց հաստատուի . որպէս զի ը՛վ որ յետ մկրտութեան մեղանչէ , ան սահմանուած Երէցին խոստովանի իր մեղքերը : Ես կանոնը մինչև հիմայ կը բռնուի բոլոր ուրիշ աղանդներուն մէջ . միայն թէ համագոյադատները , ու նաև Նովաթեանները՝ որոնք անոնց հետ մէկ են

Հաւատալեօք, մերժեցին աս ապաշխարանաց գործով Արէցի կարգադրութիւնը. և շիտակը՝ Արժաթեաններն սկիզբէն ընդունած չէին աս յաւելուածը: Ե՛կեղեցւոյ մէջ հիմայ իշխանութեան գլուխ եղողները երկար ժամանակ ասիկայ պահելէն ետե՛՛ս՝ Աեկտարիոս եպիսկոպոսին օրովը վերցուցին, որուն առիթն եղաւ եկեղեցւոյ պատահած սա հետեւեալ պարագան, . . . : (Ա՛ս տեղ նոյն բաները յիշուած են՝ ինչ որ վերը Աղղմենոսին խօսքին մէջ պատմուած է: ) Արբ որ կղերին անգամներուն մէջ երկպառակութիւն կար, եկեղեցւոյն մէկ երէցը Աւտեմոն անունով, որ ծննդեամբ Աղէքսանդրացի էր, խորհուրդ տուաւ Աեկտարիոս եպիսկոպոսին՝ որ ապաշխարողաց վերաբերեալ Արիցութիւնը վերցընէ. և թող տայ՝ որ ամէն մարդ բուն իր խղճմտանքին նայելով մասնակցի սուրբ խորհուրդին. քանզի եկեղեցին ասանկով միայն կրնար նախատինքէ աղատ պահուիլ: Աս ինքնս Աւտեմոնէն լսելով է՝ որ համարձակեցայ աս բաները ՚ի գիր անցընել. քանզի ինչպէս որ շատ հեղ զրուցած եմ, ես ամէն ջանք ըրի սորվելու՝ բաները գիտցող անձինքներէ, և զանոնք խնամով հետազօտելու, որպէս զի անանկ բան մը չգրեմ որ ճշմարտապէս եղածէն տարբեր ըլլայ”:

Ա՛հաւասիկ աս քաղուածները յայտնապէս կը զրուցեն թէ՛ ապաշխարողահայր Արէց հաստատելը եկեղեցական խնամն զոյ եղևիտոսաց Էսէն տելչոսացած հէ՛լ բանն է. ակներև կը հաւատեն թէ՛ ասիկայ անոր համար հաստատուեր է՝ որ ետ քաշուող եղբայրները կամ իրենց մէկ անարժան վարուց պատճառաւ դուրս ձգուած անձինքը կրկին եկեղեցւոյ դարձնելու ճամբան՝ առաջուց ՚ի վեր եղածէն աւելի դիւրին ըլլայ. ու անժխտելի վկայութիւն կու տան ևս թէ՛ աս կարգադրութիւնը իմաստութեամբ

չըլալը յետ ժամանակի իմացուելով՝ վերցուեր է : Սոյն քաղուածները նաև երկու բան ցուցընելու կը ծառայեն մեզի . մէյմը սա՛ որ առաքելոց ժամանակներէն անտի իջած կանոնադրութիւններուն մէջ փոփոխմունք ընելը յանձն կ'առնեն եղեր ետքի տեսններուն եպիսկոպոսները . երկրորդ սա՛ որ անոնք ըրած բաներնուն մէջ Սուրբ Հոգիէն չեն առաջնորդուիր եղեր այն յատուկ կերպով ինչ կերպով որ Պօղոս , Պետրոս , և միւս առաքեալները կ'առաջնորդուէին : Արովհետև կը տեսնենք որ եպիսկոպոսները կ'երկրայէին՝ աղէկ չգիտնալով թէ ո՛րն ընեն , և բաժանմունք եղաւ մէջերնին . բան մը կ'ընէին ու ետքը ըրածնին կ'աւրէին : Այկեղեցւոյ մէկ դարուն պահած սովորութիւնները յաջորդ դարերուն մէջ կը խափանուէին , և ուրիշ ճորեր կը հաստատուէին . յետ ժամանակի տեսնուելով որ անոնք ալ աղէկ չեն , մէկդի կը ձգուէին , ու կամաց կամաց ուրիշ աւելի տարբեր սովորութիւններ անոնց տեղը կ'անցնէր : Աւ ասանկ կը տեսնենք որ բաներուն հետզհետէ ու փոփոխակի ըրած աղդուութեամբը , ու յաջորդաբար մէկը մէկալին ճամբայ բանալով , անոնց աղետալի ընթացքը աստիճան աստիճան և շատ հեղ աննշմարելի կերպով յառաջ կը խաղար , մինչև որ վերջապէս 'ի վիշտ և 'ի սուգ բազմաց բուսաւ ու հասունցաւ մոլորութեան այն անտեղի բայց ահագին դրութիւնը , որ աս օրուան օրս իր գոյութիւնը անկեալ եկեղեցեաց մէջ պատսպարած է՝ բազմատեսակ և սարսափելի գաղտնի ու յայտնի հնարից պաշտպանողութեան ներքև :

Այկեղեցիէն արտաքսուած ըլլալով նորէն անոր արտօնութիւններուն առնուիլ ուղղլ անդամոց համար սահմանուած նախնական կարգադրութիւններուն վրայով ինչ որ անդին յառաջ բերինք , ( ու

րոնք և համեմատ կու գային Սուրբ Ղարոց , ) աս մեր ետքի դարերուն խոստովանանքն ու արձակումը և ապաշխարանքը ան նոյն կարգադրութիւններէն ծլած ու աճած են . բայց ի՞նչպէս : Յիշեալ կարգադրութիւններով կը պահանջուէր որ՝ (1) վերստին ընդունուիլ ուղղոյ անդամները ինչ յանցանքի համար որ դուրս ձգուեր են , ան յանցանքը հրապարակաւ խոստովանին . (2) նոյն մեղքին համար դէպ 'ի Մատուած ապաշխարած ըլլալնուն՝ այսինքն անցեալին համար տրտմած ու ապագային համար ալ ինքզինքնին շիտկելու յառաջագրած ըլլալնուն ապացոյց մը տան . (3) ըստ որում յանցանքը եկեղեցւոյ ալ դէմ գործուած բան մըն է , աս նկատմամբ եկեղեցւոյ կողմանէ ևս ներողութիւն ցուցուելով՝ անոնք վերստին իբրև եղբայր ընդունուին սիրով : Ըսոնց առաջինը՝ ինչպէս որ ցուցուցինք , նախ յատկապէս որոշուած Արեցի մը առջև առանձին խոստովանելու փոխուեցաւ . ասոր ետեւէն եկաւ կամաւոր առանձնական խոստովանութիւնը , որն որ եկեղեցիէն արտաքսեալ չեղող անդամներէն ուղղող կ'ընէր . երբ որ մէկուն խիղճը մասնաւոր մեղքի մը ծանրաբեռնութեան ներքև ճնշուէր , յիշեալ Արեցին քով կ'երթար , ու կը խոստովանէր . յետոյ բոլոր անդամներէն պահանջուեցաւ որ իւրաքանչիւր ոք իր ամէն մէկ մեղքը իւր քահանային խոստովանի : Արկրորդին՝ այսինքն ապաշխարելուն տեղն անցան 'ի քառութիւն մեղաց կարգ մը արտաքին բաներ ընել , անանկ բաներ՝ որ մարմինը նեղեն կամ տանջեն : Իսկ երրորդին , այսինքն անկեալ եղբորը՝ եկեղեցւոյ կողմանէ՝ ներելով զանիկայ նորէն ընդունելուն տեղն եկաւ մեղաց բացարձակ ու լիակատար ներողութիւն տալը . չէ թէ ան նկատմամբ որ մեղքը եկեղեցւոյ ալ դէմ ըլլալով եկեղեցին ըստ իր մասին ներէ . հապա իբրև անհուն և ամենաբարձրեալ Մատուծոյ դէմ

գործուած յանցանք՝ և ան ալ եկեղեցւոյ ո՛ր և իցէ մէկ քահանայէն մեղաց թողութիւն տրուեցաւ յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Ինգհանրապէս կը սեպուի որ առանձնական խոստովանանքի ու արձակման գրութիւնը կանոնաւոր կերպով հաստատողը Սեծն Լեոն եղած է հինգերորդ դարուն մէջ : Ըս մարդը կը պնդէ եղեր թէ՛ ո՛չ միայն ապաշխարողահայր եղող աս կամ՝ այն քահանան , այլ առ հասարակ ամէն մէկ քահանայ զօրութիւն և իշխանութիւն ունի խոստովանանք ընելու , Ըստուծոյ կողմը կենալով ապաշխարողին համար բարեխօսութիւն ընելու , նաև Ըստուծոյ անունովը ու անոր կողմանէ մեղաց թողութիւն տալու : Ըստու ամենայնիւ աս քահանայապետին մտոցուցած գրութիւնը՝ տասուիրեքերորդ դարէն ՚ի վեր Հռովմէական եկեղեցւոյ մէջ բռնուած գրութեանէն սա մասին կը տարբերէր՝ որ եկեղեցւոյ անդամոց կողմանէ՝ մեղաց խոստովանութիւնը իւրաքանչիւր մարդուն իր խղճմտանքին ձգուած էր , և ապաշխարանքն ալ դեռ բոլորովին կամաւորական բան մը սեպուած էր , և մէկը կարող չէր մարդիկը բռնադատել՝ որ ապաշխարանք քաշեն : Յիշեալ Լեոնին օրերէն ետև ալ՝ երկար ատեն անանկ կը համարուէր որ յանցաւորին ազատ ընտրութեանը ձգուած բան մըն է , որ իր մեղքերը կ'ուզէր քահանային կը խոստովանէր՝ կ'ուզէր միայն Ըստուծոյ :





# Վ Ր Ի Պ Ե Կ

| ՍԷՄԸ                 | ՈՒՂԷՂ                | ԵՐԷ՝ | ՏՊՂ |
|----------------------|----------------------|------|-----|
| կը ցուցընէն          | կը ցուցընէն          | 3    | 21  |
| առնենք               | առնէք                | 4    | 17  |
| անիրաւութենէն        | անիրաւութենէ         | 11   | 29  |
| այնսինքն             | այսինքն              | 4    | 31  |
| հասով                | հասով                | 5    | 30  |
| հաւատացող            | հաւատացող            | 7    | 22  |
| կորստեն              | կորստեան             | 8    | 29  |
| չլլալը               | չլլալը               | 11   | 34  |
| վկայարան             | վկայական             | 12   | 11  |
| անձադիր              | անցագիր              | 11   | 12  |
| պայմաններով          | պայմաններով          | 11   | 33  |
| տպաշխարութիւն        | տպաշխարութիւն        | 14   | 16  |
| հաւատալով            | հաւատալով            | 15   | 4   |
| հասով                | հասով                | 16   | 8   |
| Սէնտրալիստ           | Սէնտրալիստ           | 18   | 1   |
| մեկը                 | մեկը                 | 19   | 4   |
| հասով                | հասով                | 11   | 21  |
| զեղծի                | զեղծի                | 11   | 25  |
| իշխանութիւնին        | իշխանութիւնին        | 27   | 10  |
| տերունական           | տերունական           | 28   | 2   |
| անձնողներ            | անցողներ             | 29   | 15  |
| զրուածութիւն         | զրուածութիւն         | 32   | 21  |
| տեսնէք               | տեսնենք              | 33   | 21  |
| տագորուելով          | տագորուելով          | 40   | 8   |
| կիստ                 | կիստ                 | 41   | 13  |
| չնչալուն             | չնչելուն             | 45   | 4   |
| դժբաղջարար           | դժբաղջարար           | 11   | 28  |
| ըսելու               | ըսելու               | 50   | 15  |
| Օգոր օրինակ          | Օգոր օրինակ          | 55   | 25  |
| ալիստ                | անլիստ               | 11   | 32  |
| Սաղմոսերուն          | Սաղմոսերուն          | 58   | 8   |
| խորհրդածութիւններ    | խորհրդածութիւններ    | 11   | 15  |
| կը խարուն            | կը խարուն            | 61   | 13  |
| դեմ                  | դեմ                  | 64   | 11  |
| իս                   | իր                   | 65   | 1   |
| բղջախոհ              | բղջախոհ              | 11   | 2   |
| պարտականութիւններնու | պարտականութիւններնու | 17   | 17  |
| անաշտ                | անաշտ                | 69   | 35  |
| զեղծի                | զեղծի                | 71   | 16  |
| վերքերուն            | վերքերուն            | 77   | 5   |
| ընհանուր             | ընհանուր             | 81   | 25  |